



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.— Մ. ԻՇԽԱՆ Երեք սիւն
- 2.— » Հայ եւ հս
- 3.— » Ինչպէ՞ս մտնում
- 4.— * * * Սարէն Սանիւհան
- 5.— Դ. ՍԱՆԻՆԵԱՆ Լիւնը
- 16.— Ռ. ԿԱՐԱՊԵՆՑ Սարէն Սանիւհան
- 20.— Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Մասունք բանի
- 22.— Յ. ՕՇԱԿԱՆ Սահակ Պարգեւեան
- 35.— Պ. ՀԵՐԵԱՆ Գրուհ
- 36.— Պ. ՍՆԱՊԵԱՆ Ախտիւն մէջ
- 49.— Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ—ՏԱՏՈՅԵԱՆ Ինտրա — Բնագանջական համակարգը
- 60.— Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ Յեղասպանութեան ոգեկոչումը՝ վրձինով
- 63.— Ա. ՕՌԼՈՎ Ստալինեան ռերագործութիւնների
զազտնի պատմութիւնը
(հայացումը՝ Լ. Մկրտչեան)
- 71.— * * * Նշմարներ
- 76.— * * * Մշակութային լուրեր



Հեռո՛ւ, հեռո՛ւ մայր հողէն,
Կարծես դեռ նոր զարթնած կեանքի երազէն
Ու ժպտալի, անխռով
Ծամոն բուրոյ բարեկեանքն բարբառով,
Իբրեւ հեփլաք ու հին երգ՝
Ըսին՝ գիտե՛ս, հայ եմք մեմք...

Մեր աշխարհի լեռներո՛ւն մէջ քէ սրտիս,
Շփեղ տանար մը յանկարծ
Որոտաճայն եկաւ փուլ
Եւ աչքերուս դէմ մնաց
Հեռուն կմախք մը խարխուլ
Ու կմախքէն խուած երեք մօտիկ սիւն,
Երեք խլեակ մուրում...

22 Մարտ 1982

ՀԱՅ ԵՄ ԵՍ

«Հայ եմ ես, հայ եմ ես,
Քաջ վարդանի բունն եմ ես...»
Օտար հարս, հայ փեսայ
Եւ բռնիկ՝ կէս առ կէս...
Թռնիկն այդ յաղթական,
Իբրեւ նոր քաջ վարդան,
Մամիկի գրկին մէջ կը քաղմի վեհ ու վէս.
Մամիկի շունչին տակ
Շահուած մեծ յաղթանակ:
Փառապանծ Աւարայր.
Նոր Տարի, լուսազարդ տօնածառ,
Ճոխ սեղան ու հանդէս.
Օտար հարս, հայ փեսայ.
Ամէն մարդ երջանիկ կը ցնծայ:
Ուրկէ՞ ուր եւ ինչպէ՞ս
Այս տան մէջ աշխարհի հեռակայ
Հայու շէն, մտերմիկ
Ընտանիք...
Օտար հարս, հայ փեսայ,
Օգին մէջ օտար երգ, օտար բառ.
Ալեհեր ման մը լոկ անբարբառ
Կը խնդայ եւ կու լայ...

«Հայ եմ ես, հայ եմ ես,
 Քաջ վարդանի թոռն եմ ես...»
 Օտար հարս, հայ փեսայ
 Ու թոռնիկ՝ կէս առ կէս.
 Եւ նանին շրթներով անբարբառ,
 Նայուածքով քացակայ
 Կը խնդայ եւ կու լայ...

1 Ապրիլ 1982

Ի Ն Ձ Պ Է Ս Մ Ո Ռ Ն Ա Մ

Ես ինչպէ՞ս մտնամ
 Հօր պէս հարազատ այդ հայ ծերունին,
 Որ ինկաւ վրաս թեւերով գառամ
 Եւ սեղմեց կուրծքին...
 — Ախր եր ման, լաւ եմ, բայց միակ հայն եմ
 Այս ծերանոցին...
 Իր արցունքներու հեղուկ կրակէն
 Դեռ կ'այրի հոգիս...
 Պիթիսէն Մենֆիս
 Տուպը պանդուխտի չէր ձգած ձեռքէն.
 Հիմա կը հանգչէր յարկին տակ հանգիստ
 Այս ծերանոցին:
 — Աղբեր ման, լաւ եմ, բայց բուր մեմ
 Միեակ եմ, միմա՛կ,
 Հայ մարդու խօսքին, հայ մարդու անուան
 Կարօտ շարունակ...
 Ինչպէս չէ, ունէր քոյր, եղբայր ու կին,
 Հարազատ գաւակ,
 Ունէր շէն օնախ եւ մեծ ընտանիք.
 Բալո՛րն ալ գացին,
 Գացին շատ հեռուն, ոմանք ցուրտ հողին
 Եւ չուղարկեցին գոնէ մէկ խապրիկ:
 — Աղբեր ման, լաւ եմ, ես չունիմ կարիք,
 Քայց փակ է լեզուս, կ'արիւնի հոգիս...
 Պիթիսէն Մենֆիս
 Ինկած միս-միմակ, մստուան այնքա՛ն մօտ,
 Աչքը միշտ նամբուն եւ հայու կարօտ,
 Ա՛խ այս ծերունին
 Տո՛ւրտ ծերանոցին...

Մ. ԻՇԽԱՆ

3 Ապրիլ 1982



ՍՈՒՐԵՆ ՍԱՆԻՆԵԱՆ

Անուղղակիորեն մեր ձեռքը անցան «Հայրենիք» օրաթերթին հատուկորո բիւր, որոնցմէ մէկուն մէջ լոյս տեսած Յ. Կարապետեանի գրութիւնէն ցաւով իմացանք, որ իր մահկանացուն կնքած է մեր աշխատակիցներէն Սուրէն Սանինեան:

Հնարաւոր չեղաւ մեզի մանրամասնութիւններ ունենալ մահուան պարագաներուն մասին:

Չափազանց ժլատ են նաեւ Սանինեանի կեանքի մասին ցարդ տըրած տեղեկութիւնները:

Ծնած է Երեւան, 1912ին ու ենթարկուած ստալինեան Հնչամիջոցներուն, Սիպերիոյ տաժանավայրերուն մէջ, ուր եւ կը վնասուի իր տեսողութիւնը: Համաշխարհային Երկրորդ պատերազմէն ետք, կ'երեւի արտասահման եւ պատմութեան ու վիպակներով կը բերէ իր աշխատակցութիւնը գրական մեր մամուլին, յատկապէս «Հայրենիք» եւ «Բազին» ամսագիրներուն:

Սուրէն Սանինեան հատորով լոյս ընծայած է երեք գործ.— «Ես յանցանք գործեցի», «Տասներկու պատմութիւններ» եւ «Հեռաւոր, թաց ու լուսաւոր մայրերի վրայ»:

«Ես յանցանք գործեցի» հատորին պատմութեան ռմանք թարգմանուած են ռուսերէնի եւ անգլերէնի:

Ողբացեալ գրողը մեր մօտ ունի շարք մը գործեր, զորս պիտի ներկայացնենք ներկայ տարուան ընթացքին, պարբերաբար:

Հետագայ էջերուն արտագրուած Կարապետեանի նշմարը ըստ բառականին լոյս կը նետէ անոր անձին ու գործին վրայ:

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

Լ Ի Ճ Ը

Ա.

— Նորից կառուցենք, — ասաց Հայրապետը :
— Կառուցենք, Հայրապետ, կառուցենք, — հաստատակամօրէն պատասխանեց Ծաւարը :

Գիւղի վարի գաւտերը ամբողջովին ծածկուած էին այգիներով եւ պլտ-դատու ծառերով : Այգիները վերջանում էին Մեծ դետի ուղղաձիգ ավերին : Ծառ անգամ խաղողի ողկոյղները կախում էին ջրերի վրայ : Այգիների աջ եզրերով մի գետակ էր հոսում, գարնանը՝ յորդ ու աղմկոտ, իսկ ամառնը՝ համարեալ թէ չուր :

Այգիների կենտրոնում մի խորխորատ կար, որը վերջանում էր Մեղ-ւանց Հայրապետի եւ Մնոյենց Ծաւարի այգիների մօտ : Այգտեղից էլ խոր-խորատը աստիճանաբար վար էր իջնում եւ վերածւում ջրաբոյսերով ծածկը-ւած մի առուակի : Բուն խորխորատը մօտ երեք մետր լայնութիւն ունէր եւ նոյնքան էլ խորութիւն : Նրա երկարութիւնը մի քանի հարիւր մետրի էր հաս-նում : Խորխորատի յատակում միշտ ջուր կար, որը հոսում եւ Ծաւարի ու Հայրապետի այգիների մօտի թեքումքում մի նուազ ջրվէժի վերածւում : Ոչ ոք չգիտէր, թէ այդ ջուրը որտեղից էր գոյանում : Աղբիւր չկար : Գիւղի ծերունիներն ասում էին, թէ Հայաստանը մի հսկայական ջրաժառի վրայ է գտնւում, եւ այդ ջուրն առիթ է գտնում գետնի երես դուրս գալու համար : Խորխորատի երկու ավերում ուռենիներ եւ փշտոնիներ էին տնկուած, որոնք հետեւից խորխորատն անտեսանելի էին դարձնում :

Ընդհանրապէս կէսօրուայ ճաշի ժամին, Ծաւարը եւ Հայրապետը իրենց այգիներից դուրս էին գալիս եւ նստում ջրվէժի երկու կողմերում եւ

ճաշում էին եւ գրուցում: Դեռ մանկութիւնից նրանք լաւ ընկերներ էին, հասարակական մէկը միւսին: Նրանց աշխարհը տարբերում էր գիւղի իրենց միւս հասակակիցների աշխարհից: Կեանքի եւ մարդկային յարաբերութիւնների նկատմամբ նրանք իրենց ուրոյն տեսակէտն ունէին: Նրանք թուիս դէմքով, լայն ուսերով, երկաթի պէս ամուր բազուկներով, երեսունը նոր-նոր անցկացրած երիտասարդներ էին: Աշխատանքը նրանց համար սուրբ պարտականութիւն էր եւ նրանք Կիրակի օրերից բացի, միւս օրերում երբեք պարապ չէին լինում: Հենց դրա համար էլ նրանց տանիքները երբեք չէին կաթում, անասունները միշտ կեր ունէին, իսկ երեխաները՝ հաց: Գիւղացիները նրանց վրայ ծիծաղում էին: Նրանք ասում էին, թէ Շաւարշի եւ Հայրապետի ձեռքերը քորում են աշխատելու համար:

Մէկ անգամ, երբ կէսօրին ընկերները ջրվէժի երկու ափերին նստած ճաշում էին եւ հանդստանում, Հայրապետը մի ծրագրի առաջարկ բերեց.

— Շաւարշ, ա՛, Շաւարշ, — ասաց նա, մի քիչ անվստահ, — ինչքան որ ես մեր այս փոքրիկ ջրվէժին եմ նայում, միշտ էլ մտածում եմ, որ մեղք բան է, որ այս ջրուն այսպէս էլ դնում-կորչում է...

— Ի՞նչ ես ասում, ա՛, Հայրապ ուզո՞ւմ ես, որ այդ նուազ ջրվէժի վրայ մենք մի ջրաղաց կոռուցենք, — ծիծաղեց Շաւարշը:

Հայրապետն էլ ծիծաղեց.

— Ա՛յ, ա՛, Շաւարշ: Ասում եմ, որ մենք կարող ենք այդ ջրի առաջը կտրել...

— Ինչո՞ւ:

— Ջուրն ամբարենք այս խորխորատում...

— Ինչո՞ւ:

— Լիճ կը ստեղծենք այս ուռնիների եւ փլատենիների ստուերի տակ: Գեղեցիկ կը լինի: Լիճը զովսեթիւն կը ստեղծի մեր այս չըջապատում: Ա՛յ կարելի ամէն ինչ պատրաստ ակնկալել բնութիւնից: Մարդը ինքն էլ պէտք է ստեղծի, — փիլիսոփայեց Մեղուանց Հայրապետը, եւ ամաչեց իր ասածից:

Շաւարշը լուռ մնաց երկար ժամանակ: Հայրապետը կարծեց, թէ ընկերը բանի տեղ չգրեց իր առաջարկը:

— Հը՞...

— Հայրապետ, առաջարկդ հրաշալի է: Բայց դու դիտես, որ այն դըլուկ բերելու համար շատ պէտք է աշխատել եւ համբերութիւն ունենալ, մինչեւ որ լիճը ստեղծուի: Մօտ երկու տարի կը տեւի՝ մինչեւ այս խորխորատը բերնէ բերան ջրով լեցուի:

— Շաւարշ, չեմ կարծում, որ պատուարի կառուցումից դու եւ ես կարողանանք վախենալ: Ի՞նչ խորխորատը ինքն իրեն ջրով կը լեցուի:

— Ե՞րբ սկսենք, Հայրապետ:

— Յաւանքովայ Կիրակի: Մենք լճի վրայ կ'աշխատենք Կիրակի օրերը միայն: Երբ պատուարը կանգնեցնենք՝ խորխորատն ինքը իրեն ջրով կը լեցուի: Ինչքան կը տեւի, ես չգիտեմ, բայց հաստատ գիտեմ, որ լիճ կը ստացուի:

Ընկերները մի քանի Կիրակի չարաչար աշխատեցին եւ պատուարը կառուցեցին: Նրանք ուռնիներից մարդու ծնկի հաստութիւնով երկար-երկար ցցեր պատրաստեցին եւ ամուր-ամուր խրեցին խորխորատի յատակում, կողք կողքի: Յետոյ այդ համարեալ թէ միամոյլ, փայտեայ պատը ծածկեցին խռուով, ջրախտերով եւ տիղմով: Հասող ջուրը կանգնեց եւ սկսեց լճանալ պատարի մօտ: Յետոյ՝ այդ լճացած ջուրը սկսեց երկարել մինչեւ խորխորատի հակառակ ծայրը:

→ Լինձը ստացւում է, Հայրապետ, — ասաց Շաւարշը:

— Այո, Շաւարշ:

Ձմեռը՝ ստացուած ծանծաղ լինձը ստուգեց, եւ ընկերները մտապահ նրա մասին: Գարնանը, երբ սառույցը կտալուէն, ընկերները տեսան, որ իրենց լճի ջուրը արդէն մօտ կէս մետր խորութիւն ունի: Գարնանը ջուրն աւելի բարձրացաւ:

Գիւղացիները չէին կարողանում ըմբռնել ընկերների արածը: Նրանք ծիծաղում էին, ասելով, թէ «Շաւարշը եւ Հայրապետը ծով են պատրաստում»՝ պարախոյղ(°) բանեցնելու համար:

Այդուհանդերձ, «ծովը» բարձրանում էր ու բարձրանում: Այդ օրերին էր, որ Շաւարշը միտք յայանեց լճում ձուկ բուծանել:

— Ինչո՞ւ համար, ա՛, Շաւարշ: Ես չեմ կարող ձուկ մեծացնել, եւ յետոյ այն ծախել, որպէսզի ուրիշները լափեն: Ես ինքս այդ ձկներին ձեռք չեմ կաշնի, — ասաց Հայրապետը:

— Ես էլ, — ասաց Շաւարշը, — ձուկը մենք կը բուծենք զեղեցիկութեան համար: Լինձն աւելի մարդածօտ դարձնելու համար:

Միւս օրը, նրանք դնացին մեծ գետը: Ուռնաւոր ձկներ որսացին եւ դռներով կենդանի-կենդանի բերեցին-թափեցին լիճը: Սկզբում նրանք կարծում էին, թէ հոսող ջրերին վարժուած ձկները չեն բռնի իրենց լճի կանգնած ջրերին: Բայց բռնապաղթուած ձկները ընդունեցին իրենց նոր հայրենիքը եւ թւում էր, թէ նոյնիսկ սիրեցին իրենց նոր միջավայրը: Նրանք սկսեցին մեծանալ եւ նոյնիսկ բազմանալ: Ընկերները, հառած լճի ափին՝ հրճուանքով դիտում էին իրենց ձկների վտաններին, որոնք վեր ու վար էին անում լճի կապոյտ ու թափանցիկ ջրերում: Ընկերներն իրենց ձկներին կերակրում էին հացի փշրանքներով, ցորենի խաշուած հատիկներով, խաղողի հատիկներով, մանր կտրատուած զեղձով եւ այլ ուտելիքներով:

Լճի կառուցման երկրորդ տարուայ ամրանը արհեստական «ծովն» շատ աւելի զեղեցկացաւ: Նրա ափերին, համարեա՛ անգունդի ափերին դիպչելով, եղէգներ բուսեցին, կտնաչ, բարձր, սլացիկ, ինչպէս նորահոտ մի աղջիկ, որը գիտէ, որ ինքը զեղեցիկ է: Երեւացին թիթեռնիկներ, բազմատեսակ, բազմադրոյն թիթեռնիկներ, որոնք վեր ու վար էին անում լճի վրայ: Արեւը ուռններին եւ փշատներին տերեւները թափանցելով շողողում էր, ճամնչում լճի վրայ, ստեղծելով հեքիաթային մի աշխարհ: Թռչուններն նոյնպէս սիրեցին լիճը: Ամբողջ օրը, ուռնիկներ եւ փշատներ ճիւղերին թառած՝ նրանք հրդուած էին եւ ծլուում: Կենաքը զեղեցիկ էր լճում, լճի վրայ եւ ափերին:

— Մենք, մեր ձեռքով երկրային դրախտ ստեղծեցինք, — մի օր Հայրապետին ասաց Շաւարշը:

Լճի կառուցման այդ նոյն երկրորդ տարում, ընկերներն իրենց «ծովում» տեսան երկու ջրային կենդանի: Դրանք ողնուց մի քիչ մեծ էին, դժբաղդ անէին, սուր գունչ եւ սեւ ամենատեսաւէքեր:

— Ա՛, — քեզ մատաղ, Հայրապետ, այս ի՞նչ կենդանիներ են, — ընկերները հարցրեց Շաւարշը:

Հայրապետը մտածեց.

— Ինչպան գիտեմ, գիւղացիները դրանց ջրաւն են ասում:

(°) Պարախոյղ — շոգեմատ:

Այդպէս էլ, այդ անձանօթ կենդանիները կոչուեցին ջրուհիներ։
Ջրուհիները լողացին լիճն ի վեր, յետոյ ետ դարձան՝ իրենց վերի շերտները ետ քաշեցին, ցոյց տուին իրենց փոքրիկ ու սուր ատամները ու սուղուեցին լճում։

— Ա՛, Հայրապետ, այդ ջրուհիները մեզ ծաղրեցին, — գանգատուեց Շաւարշը։

— Ո՛չ, Շաւարշ։ Նրանք մեզ ժպտացին, — ասաց Հայրապետը, — թերեւս շնորհակալութիւն յայտնեցին լճի համար...

Բ.

Լճի կառուցման երբորդ տարուայ ամրանը ընկերները տեսան իրենց գիւղացի երկու երիտասարդներ իւր քաղաքից եկած երկու աղջիկներէ, որոնք ջրափին կրակ էին արել, խորոված պատրաստել եւ գինի խմում։

Ընկերներն իրար նայեցին եւ ժպտացին։ Եւ երբ հեռացան ուրախացող խմրից, Շաւարշն ասաց Հայրապետին։

— Հայրապետ, այդ լակոտները մտադիր են Հարբեցնել քաղաքի այդ աղջիկներին, նրանց աղատօրէն ափսիւկելու համար։

Հայրապետը ծիծաղեց։

— Աղջիկները սիրում են այդ։

Շաւարշը տխրեց, յիշելով իր կնոջը, որին մասն անգամ չէր կպցրել մինչեւ ամուսնութիւնը։

Քիչ յետոյ լսուեց գաւարնացող խմրի ուրախ քրքիլը եւ յետոյ էլ խումբը երգեց։

— Հայրապետ, դրանց ծիծաղը եւ երգը պիտի վախեցնեն մեր ձկնորսներին, — մտահոգութիւն յայտնեց Շաւարշը։

Հայրապետը մտածեց։

— Ձեռք կարծում, — ասաց նա, — ուրախացող այդ երիտասարդներին խումբը թէեւ առաջինն է, քայց վերջինը չի լինելու։ Մեր ժողովուրդը սիրում է ծառ-ծառաստան, ջուր եւ կանաչութիւն։ Եւ ես կարծում եմ, որ այսօր հետեւ մեր գիւղացիները պիտի գան մեր լճի ափին գոլարճանալու։ Մենք նրանց քչիւ չենք կարող։ Այս լիճն ինչքան որ մերն է, ա՛յնքան էլ նրանցն է։ Արդէն իսկ լիճն այս նպատակով էլ կառուցեցինք։ Ինչ մնում է մեր ձկնորսներին եւ ջրչներին, թող վարժուեն...։ Ո՛չ ոքի համար ամէն ինչ կատարեալ չէ։

Նոյն երեկոյեան, Հայրապետը ինչ-որ գործով գնաց Շաւարշի տունը։ Ընտանիքն ընթրիքի էր նստել։ Նրան հրաւիրեցին մասնակից լինելու, քայց նրա աւագըութիւնը դրանց Շաւարշի ութ տարեկան աղջիկը՝ Սիրիկը։ Սիրիկը չէր սւտում, այլ կողքի էր նստել, դէմքը շրջել սփռոցից եւ լաց էր լինում։ Հայրապետի սիրտը մղկտում էր, երբ լացող երեխայ էր տեսնում։ Նա մօտեցաւ Սիրիկին, շոյեց նրա մազերը եւ հարցրեց։

— Ինչո՞ւ ես լալիս, Սիրիկ, քաղցրս...

Սիրիկը չխօսեց, այլ շարունակեց լաց լինել։

— Այսօր Սիրիկը Սոյիկից Արշակի երեխաների հետ խաղալիս է եղել նրանց բակում, երբ տեսել է, թէ ինչպէս էր խաղընկերների մայրը մուկ է

մաքրում: Հիմա տուն է եկել, ինքն էլ ձուկ է ուզում: Երեխաներն ինչ ահա-
նում են, ա՛յն էլ ուզում են: Ուշադրութիւն մի դարձրու, լաց կը լինի, լաց
կը լինի եւ կը լո՛ւի, — բացատրեց Շաւարշի կիներ:

Հայրապետը տարակուսանքի մէջ ընկաւ:

— Ա՛, Շաւարշ, — ասաց նա ընկերոջը, — Սոսիկն Արշակը ձկնորս
չէ, ձուկը նրան որտեղի՞ց: Զլինի նա մեր...

Շաւարշը Ծիծաղեց:

— Զէ՛, Ա՛, Հայրապետ, ես հարցուփորձ արեցի եւ խմացայ, որ Սոսիկն
Արշակը գիւղաքաղաքում է եղել եւ այդ ձուկն այնտեղ է գնել: Գետի ձուկ է:
Ընթրիքից յետոյ, երբ ընկերները տնից դուրս եկան գիւղամէջ՝ դնալու
համար, Հայրապետը բռնեց Շաւարշի թիւից եւ կանգնեցրեց:

— Ա՛, Շաւարշ, — ասաց նա, — Սիւրիկի լացը չեմ կարողանում մո-
ռանալ: Երեխայ է, տիրտոց ցաւում է... Ասում եմ դադը մեր ձկնեբից մի
քանի հատ բռնես եւ բերես երեսային...

Շաւարշը մթաւանց եւ թիւը հանեց ընկերոջ ձեռքից:

— Այդ քանը երբեք տեղի չի ունենայ, Հայրապետ, եթէ նոյնիսկ Սի-
ւրիկը մէկ տարի լաց լինելու լինի...

Նրանք այլևս այդ մասին չխօսեցին:

Գ.

Սիւրիկի գէպից մի քանի օր յետոյ, երբ ընկերները քայլում էին լճի
ափով եւ հիանում իրենց ստեղծագործութեամբ, իրենց ձկներով, ջրչներով
եւ այլ կենդանիներով, երբ գէմուդէմ եկան մի տեսարանի, որը խորտակեց
նրանց լաւ տրամադրութիւնը:

Լճի ափին մի Ծերունի թէ՛ կրակ էր արել եւ կրակի վրայ խորովում
էր ու տեղնուտեղը լափում ձեռքի ափի մեծութեամբ կապոյտ ձկներ: Թէ՛
կրակից, թէ՛ Բորոտիքներից եւ թեփերից մաքրում, բայց դեռ կիսկենդան
ձկները զաւարում էին, ոլորում, բայց կարմրում: Ծերունին ամէն ինչից
կոշտացած մասներով վերցնում էր արդէն կարմրած ձկներին, բերանն այրե-
լով խմում էր նրանց եւ, ձախ ձեռքով՝ նորերն աւելացնում կրակի վրայ:

— Համեցէ՛ք, համեցէ՛ք թարմ ձուկ կերէ՛ք, — ընկերներին տեսնելով
հրաւիրեց նա, բերանը լիվիացնելով ձկան այրուցքից:

Տղաներն այդ Ծերունուն չէին ճանաչում:

— Այդ ձկները որտեղի՞ց, — հապիւ բարկութիւնը զսպելով, հարցրեց
Շաւարշը:

Ծերունին միանգամայն անտարբեր երիտասարդի հարցի նկատմամբ,
զլիով ցոյց տուեց կողքի լիճը:

— Այնտեղից: Ինչքան ասես կայ: Մի՛թէ գուք չէք ուտում, որ թոյլ
էք տուել այդ կենդանիներին այդքան բազմանալ: Ես շատ եմ սիրում կրակի
վրայ խորոված թարմ ձուկ ուտել: Զուկ եւ նրանց կեթերը:

«Զուռ ու ցաւ ուտես», մտքում ասաց Շաւարշը: Կատաղութիւնից նա
ուզեց բռնեցնել խփել Ծերունուն զլիին, բայց զսպեց իրեն: Եթէ նա այդ
անէք, Ծերունին տեղնուտեղը կը մեռնէ՝ ձկան միտք բերանում:

— Այսօր ձկնկերթ էլ կերա՞ր, — հարցրեց Հայրապետը:
Մերունին գլխով հաստատական նշան արեց: Ս. երբ կուշ տուեց բե-
րանում եղածը, ասաց.

— Մի տի: Մօտ հինգ հազար հատ: Իմ բռնած ձկներից մէկը յղի էր:

— Կերար առա՞նց խիղճ զգալու:

— Ի՞նչ է այդ:

— Ասում եմ այդ հինգ հարիւր կիթերից հինգ հարիւր ձկներ կը ծըն-
ւէին:

Մերունին կրակի վրայից վերցրեց մի ձուկ, բռնեց գլխից եւ պոչից
ու իր շրթունքներով ու մի քանի ատամներով պոկեց ձկան մի կողմի ամբողջ
տաք, սպիտակ ու հիւթեղ միւսը եւ կատարի պէս մրմռաց.

— Ը՛մ, ը՛մ: Կեա՞նք... Ափսո՞ս, որ այս ձուկը կիթ չունի...

Ընկերները տեսան, թէ ինչպէս ուտելու հանոյքից նրա մարող աչքերը
փայլում էին, մարմինը դողում էր, եւ ազահութիւնից նա ցանկանում էր,
ինչքան կարող է շուտ եւ մեծ պատահներով կուշ տալ:

— Ուրեմը խիղճ չկա՞յ, — հարցրեց Հայրապետը:

Մերունին ծուռաւեց ձկան երկրորդ կողմի մտերը եւս, յետոյ՝ մերկ
կմախքը նետեց կրակի վրայ: Նա մատով հտ հրեց բերանից թափուող ձկան
միւսը եւ խօսեց լեցուն բերանով.

— Տղա...

— Սա քո տղան չեմ, — նրան ընդհատեց Հայրապետը:

Մերունին կուշ տուեց բերանում եղածը.

— Երիտասարդ, պու հաւկիթ ուտո՞ւմ ես...

Հայրապետը նեղն ընկաւ եւ կիսաբերան ասաց.

— Հա՛...

— Ինչո՞ւ ես ուտում, չէ՞ որ ամէն մի հաւկիթից մի հաւ դուրս կը
գայ...: Եւ ոչ միայն դու եւ քո ընկերը: Այս աշխարհում օրեկան երեւի մի-
լիսն-միլիոն հաւկիթ է ուտում մարդկանց կողմից, որոնցից միլիոն-միլիոն
հաւեր դուրս կը գային: Ո՛ր է խիղճը: Մենք՝ մարդ արարածներս, տէրն
ենք քոյր կենդանիներին եւ ուտում ենք նրանց, որովհետեւ այսպէս է կար-
գը: Մենք ուժով ենք նրանցից... Ուժովն ուտում է թռչին...

Հայրապետը նեղն էր ընկել եւ չէր կարողանում պատասխանել ծերու-
նուն: Շուարշն օգնութեան հասաւ.

— Խօսքն աշխարհի կենդանիների մասին չէ, այլ՝ այս լճի ձկներին:
Մերունին զգում էր, որ այս երկրորդ երիտասարդը բարկութեամբ է
տրամադրուած իր նկատմամբ, ուստի՝ նրա հետ խօսեց արհամարհանքով.

— Ի՞նչ են այդ լճի ձկները: Թաղաւորական ցեղի՞ց են:

— Դրանք... դրանք, — կմկմաց Շուարշը եւ այն կողմը չդնաց:

— Ի՞նչ են դրանք, — իր հարցապնդումը շարունակեց ծերունին:

— Դրանք ուտուելու համար չեն, այլ՝ տեսարանի...

— Ի՞նչ է այդ...:

Շուարշը չկարողացաւ բացատրել:

Մերունին ծիծաղեց յաղթական: Եւ որովհետեւ նրա բերանը լեցուն էր,
ծամելիքը սխալ տեղ դնաց եւ քիչ մնաց խեղդուէր: Հայրապետը վրայ հա-
սաւ եւ սկսեց թակել նրա մէջքը: Մերունին հանդստացաւ եւ կտար շընկեւելու
համար ասաց.

— Այդ ոչինչ էր: Ես կարող եմ մի ամբողջ գառ կուշ տալ: Ես սիրում
եմ կուշ տալ...

Երբ ընկերները հետացան ծերունուց, Շաւարշն ասաց.

— Ես վախենում եմ, որ այդ ծերունկը մեր բոլոր ձկներին կուլ տայ: Սակայն ընկերները մէկ անգամ էլ հանդիպեցին ծերունուն եւ այդ հաւ նրանց վերջին հանդիպումը: Նա թափառական մէկն էր երեւում, եւ երեւի գնացել էր այլ վայրերում իր ստամոքսը լեցնելու:

Դ.

Պոր աշնանը, երբ խաղողահաւաքը վերջացել էր, այգիներից մէկը հաւ եւ ընկերներին յայտնեց, որ դիւերուայ ընթացքում նրանց կառուցած լիճը ցամաքել է: Այդ մի այնպիսի լուր էր, որ Հայրապետն ու Շաւարշը սարսուռացին: Ալխարհը, կեանքը, կեանքի ուրախութիւնը ընկան նրանց աչքից:

— Ինչպէ՞ս թէ ցամաքել է, — յուզումից խզուած ձայնով Շաւարշը հարցրեց լրաբերին:

— Շատ պարզ, — բացատրեց լրաբերը, — դիւերը անյայտ մարդիկ քանդել են ձեր կառուցած պատուարը, ջուրը ըրվէժից վար է հոսել եւ վերջացել:

— Իսկ ձկները:

— Ջուրը չտեսայ: Հենց լիճը ցամաքացրել են մէջի ձկները որսալու համար: Ես տեսայ պատուարի քանդուած մասում միտադալներից դործուած մի ուռկան: Երեւի շարադործները այդ ամուր ուռկանը գէժ են տուել պատուարի քանդուած մասին: Ջուրը հոսել է ուռկանի միջով, իսկ ձկները մնացել են: Թետոյ նրանք հաւաքել են ձկները...

Լրաբերը ցաւ յայտնեց եւ գնաց:

Ընկերները երկար ժամանակ մնացին քարացած: Վերջապէս Շաւարշը խօսեց.

— Ես գիտեմ, թէ այդ ում դործն է:

— Ես էլ գիտեմ, — ասաց Հայրապետը, — այդ Ասօ-Մերժոյի գործն է...

— Հա՛, գնանք պիւղամէջ, — առաջարկեց Շաւարշը, նախապէս պառանի մի կտոր դնելով վերնաշապիկի տակ:

Ե.

Ասօ-Մերժոյն գիւղի երկու գողերն էին: Երկու երիտասարդներ, առողջ, ամրակազմ, բայց ծոյլ: Նրանք ամենեւին չէին աշխատում, բայց կուշտ էին եւ լաւ հագնուում: Բնիկներ չէին, այլ եկել էին, ինչ որ անյայտ տեղից եւ բնակութիւն հաստատել այդ գիւղում: Ընտանիք չունէին եւ ազգբուծ էին միասին մի խրճիթում: Գողանում էին այրի կանանց հաւեր, հօտից մուրդուած ոչխարներ, մերդ ու խաղող եւ այնքան շատ, որ վաճառում էին

քաղաքում: Գիւղացիները նրանց հետ դուրս չէին գնում, որովհետեւ այդ գողերը «մեծ բերան» էին: Թուրքի պէս հայհոյում էին եւ սպառնում: Թէեւ հրապէս չէին կրում, բայց ամէն մէկի գրպանում մի փալովի դանակ կար, որը երբ բացւում էր, գտնում էր մի փոքրիկ դաշոյն:

Գիւղացիներին նրանք ծաղրում էին, նրանց գոհճիկ գեղջուկներ անւանելով: Իրենք իրենց մասին ասում էին, թէ իրենք քաղաքից են, որ քաղաքում տներ, խանութներ ունեն, եւ այդ սեփականութիւններից տարեկան վարձ են ստանում բաւարար չափով:

«— Մենք ձեր հաւ ու ճիւղն կարօտ չենք, ասում էին նրանք գիւղացիներին, — մենք ձեր քոսոտ գիւղում ենք ապրում, բժշկապետ Շաքարեանի պատուէրով, որովհետեւ ձեր այդ քոսոտ գիւղի օդն ու ջուրը, ինչպէս նաեւ միջոցն ու խաղողը շատ նպաստաւոր են մեր առողջութեան համար: Մենք կարիք ունենք կազդուրուելու եւ թողէք, որ մենք կազդուրուենք, թէ չէ, — գրպաններից դանակները հանում էին նրանք, սեղմում կոթերի բլթակներին վրայ, «լըրխէ» բացում այդ պաղ ու ազդեցիկ զէնքերը եւ շարժում օդում, — այս դանակները կը պատասխանեն մեզ գող անուանողներին...»:

Գիւղացիները վախենում էին եւ ուժում, իսկ ստահակներն աւելի էին երես առնում եւ լկտխնում: Այժմ Հայրապետը եւ Շաւարշը գնում էին այդ ստահակների հետ հաշիւ տեսնելու:

«— Եթէ իրապէս մեր պատուար քանդողները Ասո-Մերժոն են, ի՞նչ պիտի անենք նրանց հետ, — ընկերոջը հարցրեց Հայրապետը, որ բարեհամբոյր մէկն էր եւ կոխ չէր սիրում:

«— Դեռ չէիտեմ, — ասաց Շաւարշը, — բայց չպիտի թողնեմ, որ մեր ձկները հանդիստ կերպով մարսուեն:

Երիտասարդ ընկերները հակադէմ ուժի տէր էին: Գիւղական շարքաչ կենսը դեռ փոքրուց ամբարցրել էր նրանց մարմիններն ու մկանները: Եւ հիմա, երբ նրանցից իւրաքանչիւրը մօտ երեսուն տարեկան էր, թւում էր, որ նրանց մարմինները պողպատից էին ձուլուած, որ նրանք կարող էին գոթանից եզներն արձակել եւ իրենք լծուել նրանց փոխարէն: Բայց նրանք իրենց այդ մեծ ուժը երբեք չար չէին գործադրում, ճնշում ու վնասում ուրիշներին: Մի քանի անգամ նրանք որոշել էին պատժել Ասո-Մերժոյին, բայց առիթ չէին ունեցել, յանցանքի մէջ նրանց չէին բռնել:

Գիւղակի օրերը գիւղի հրապարակում միշտ շատ ժողովուրդ էր լինում, այս անգամ աւելի շատ ժողովուրդ կար:

«— Խնդրում եմ լծանակցես իմ արարքին այդ աւազակների հետ, — Շաւարշն ասաց Հայրապետին:

Հայրապետը լռեց:

Ի՞նչ յետոյ, նրանք տեսան իրենց ձկներին, ա՛յն ձկներին, որոնց նրանք այդպէս խնամքով եւ զուրգուրանքով մեծացրել էին եւ բազմացրել: Դեռ երէկ նրանք վտառ առ վտառ լող էին տալիս լճի կապուտակ ջրերում եւ ուրախանում կենցեղով, իրենք իրենցմով: Այժմ նրանք անշնչացել էին: Լեցուել էին երեք խոշոր կողովների մէջ եւ վաճառում էին որպէս սնունդ: Ժողովուրդը գնում էր: Վաճառում էին Ասոն-Մերժոն: Ասոն կշռում էր ձուկը, իսկ Մերժոն դրամները հաւաքում եւ լեցնում մի տոպրակի մէջ: Առեւտուրը շատ աշխոյժ էր:

Ընկերներին թուաց, թէ իրենց աչքերը մթնեցին: Շաւարշը արտասուեց: Նա գնաց կանգնեց Ասոյի առջեւ եւ բռնեց կշեռքի թաթից.

«— Այս ձկները քեզ որսեղի՞ց...»

Ասոն զարմացած նայեց Շաւարշին արհամարհական.

— Ես պարտաւոր չեմ քեզ հաշիւ տալու :

— Պարտաւոր ես :

— Թո՛ղ կշեռքը :

— Ասա՛, որտեղի՞ց :

— Գետից :

— Այս դետի մուկ չէ :

— Յամաքից :

— Յամաքում մուկ չի բուսնում :

— Ծովից :

— Մեր դիւղում ծով չկայ :

— Ա՛յ տղայ, ի՞նչ ես ուզում : Ձուկ ես ուզում, բայց դրամ չունե՞ս :

Այդպէս ասա : Ես քեզ մրի մուկ կը տամ . . .

Շաւարշին այդքան էր պէտք : Այդ աւաղակը իրեն աղքատ է համարում եւ ցանկանում է իր իսկ բուծած ձկներով իրեն լաւութիւն անել : Նա թողեց կշեռքը, բռնեց Ասոյի օձիքից, ծռուեց, միւս մեռքը անցկացրեց նրա ծնկերի տակը եւ վեր բարձրացրեց : Նա չդիտէր ինչ անել նրա հետ : Ասոն պարսպ չմնաց, սկսեց մեռքերն ու ոտքերն աշնպէս շարժել օդում, որ կարծես խոր ջրում լող էր տալիս : Յետոյ նա յիշեց դանակը եւ ուզեց այն դրպանից հանել : Շաւարշը նկատեց նրա շարժումը, օդում նրան շրջեց մէջքի վրայ եւ թափով խփեց գետին : «Ըխկ», դրան արանքը մնացած չան պէս վնասուեց Ասոն եւ լռեց : Ականատեսները կարծեցին, թէ նա մեռաւ : Մերժոն, որ մինչ այդ չլմած դիտում էր, թէ ինչ է կատարում ընկերոջ հետ, սթափուեց, դռնակը հանեց դրպանից, շրխկոցով բացեց եւ ուզեց խոյանալ Շաւարշի վրայ, բայց Հայրապետը, որ նրան ժօտիկ էր կանգնած, բռնեցրով խփեց նրա գլուխին : Դանակը թռաւ Մերժոյի մեռքից, իսկ ինքը՝ Մերժոն, խոր հառաչանք արձակելով՝ ծռնկի եկաւ : Ժողովուրդը, որ ուշադիր դիտում էր, թէ ինչպէս Շաւարշն ու Հայրապետը հաշուեկարգաբար են տեսնում իրենց գիւղին պատուհաս դարձած այդ երկու դողերի հետ, զարմացաւ, տեսնելով, որ Մերժոն այլեւս վերջ չունի : Թուաց թէ Մերժոյի գլուխը կպած է եղել սանրին : Շաւարշը Ասոյին թողեց պտուկած, ծոցից հանեց շուանը, այն անցկացրեց հրապարակում պատի տակ դրուած մի ծանր սիւնի մօտենրի արանքով եւ ասաց Հայրապետին.

— Այդ աւաղակին բեր այտեղ :

— Հէ՛յ, ելի՛ր տեղիցդ, — իր գոհին քացով խփեց Հայրապետը :

Մերժոն գծաւարութեամբ ելաւ տեղիցը, դրամները տալրակը մեռքին :

— Այս տալրակը թող այստեղ, — կարգադրեց Հայրապետը :

— Ի՞նչ :

Հայրապետը բռնեց բարձրացրեց :

— Այո՛, այո՛, թողնեմ այստեղ, — անմիջապէս համաձայնեց Մերժոն :

Ժողովուրդը ծիծաղեց :

Շաւարշը Մերժոյի մեռքերը կապեց մէջքի վրայ :

— Հայրապետ, գնա՛ միւսին բեր :

Ասոն դեռ պառկած էր բերանս ի վար :

— Հէ՛յ, ելի՛ր : Հերիք է քեզս, — առջով Ասոյի կողքին խփեց Հայրապետը :

Ժողովուրդը նորից ծիծաղեց :

Ասոն փորձեց ելնել, բայց չկարողացաւ : Նորից փորձեց, նորից չկարողացաւ : Հայրապետը զգլաց, որ խփեց նրան :

— Ի՞նչ ունես, — նրա վրայ թեքուեց եւ հարցրեց Հայրապետը:

— Կոնքս... Կոնքուս ահռելի ցաւ եմ գգում, — կմկմաց Ասոն:

Հայրապետը խղճաց նրան: Եթէ Շաւարշը խառնուած չլինէր, նա այդ աւազակներին կ'ազատէր: Բայց Շաւարշը Նոյնպէս ներող էր, սակայն այսօր Հայրապետը նրա մօտ անգիշող վճռականութիւն էր տեսնում, չարիքին արմատապէս վերջ տալու որոշում:

Հայրապետը բռնեց գոլի թիւից եւ օգնեց բարձրանալու:

— Գնանք...

— Ի՞նչ էք ուզում անել մեզ հետ, — Ասոն չէր տեսնում, որ իր ընկերն արդէն կապուած է ծանր անիւին:

— Դեռ չդիտեմ:

— Դանակը հանիր այդ աւազակի զրպանից, — ընկերոջ պատուիրեց Շաւարշը:

— Այդ դանակն իմ սեփականութիւնն է, — բողոքեց Ասոն:

— Դանակը զէնք է: Իսկ թշնամուն եւ աւազակներին միշտ զինաթափ են անում, — ասաց Շաւարշը եւ շուտով երկրորդ ծայրով Ասոյի մեռածը կապեց նրա մէջքին:

— Մինչեւ ե՞րբ էք մեզ այդպէս կապուած պահելու, — հարցրեց Մերժոն, որ ատելութեամբ էր նայում ընկերներին:

— Մինչեւ մուրն ընկնելը, — ասաց Շաւարշը:

— Այդ ո՞ր գրքում է պրուած այդպէս:

— Ի՞մ գրքում:

— Քո գրքում գրուած է, որ ընկերոջն դիտնովը տառ, մէջքը կտորե՞ս...

— Իմ գրքում գրուած է գողութիւն շանել:

— Մենք գողեր լինք:

— Դուք գողերի՞ գողերն էք, — մէջ ընկաւ մի գիւղացի ամբոխի մէջ:

Բազմութիւնը սեղմուած էր ու սեղմուած գերի ընկածների շուրջը: Գրքագրոյ՝ ձայնի էին լսում ինքնազատատանի ենթարկելու գողերին: Հայրապետը փորձում էր հանգստացնել: Բայց եւ այնպէս մի պառաւ կին մօտեցաւ գողերին:

— Դրանք իմ չալփետուրիկ հաւերը կերան, — ասաց ու թփեց:

Մօտեցաւ մի ուրիշ կին եւ ալ մեղադրանք կարդաց: Յետոյ՝ մի ծերունի: Եւ այդպէս շատերը: Մի գիւղացի մօտեցաւ Շաւարշին, մի խարազան ձեռքին:

— Ա՛, Շաւարշ, թոյլ տուր դրանց մի լաւ դաս տամ:

Շաւարշը ծիծաղեց:

— Ես տեսնում եմ, դրանք շատ են դառնացրել քեզ:

— Շատ:

— Դաս տուր, — թոյլատրեց Շաւարշը:

Հայրապետը գունատուեց եւ չնչնաց ընկերոջ ականջին:

— Ա՛, Շաւարշ, նա իր խարազանով կարող է սպանել այդ կապուածներին...

— Ո՛չ, Հայրապետ, հայ մարդը ձեռք չի բարձրացնի պարտուածներին վրայ, — նոյն ցածր ձայնով ընկերոջը հանգստացրեց Շաւարշը:

Իրապէս, խարազանով մարդը մօտեցաւ կապուածներին: Նայեց-նայեց: Խորապանք բարձրացրեց, բայց ցած բերեց, մի բան մուտաց եւ թողեց-դնաց: Ընկերները ծիծաղեցին:

— Ա՛, Շաւարշ, ի՞նչ պիտի անէք այդ ձկները, — ամբողջ միջին հարցերնց մէկը։

— Օ՛, ձկները, — սթափուեց Շաւարշը, — հերթի կանգնէք, ձեր պէտքեր բաժանեմ ձեզ։

Մինչ Շաւարշը ձուկ էր բաժանում, Հայրապետը բազմութեան միջին դասա գիւղի ուսուցչին եւ Մերժոյի դրամների տոպրակը տուեց նրան։

— Վերցրու այդ դրամները եւ ծախսիր դպրոցի կարիքների վրայ։

— Իսկ նրանք, — գլխով աւագակներին ցոյց տուեց վախեցած ուսուցիչը։

Հայրապետը ծիծաղեց։

— Նրանք մէկ ժամ առաջ դալլ էին, իսկ հիմա՝ ոչխար։ Նրանք աշուհեաեւ ոչխար են մնալու...

Քիչ յետոյ, երբ ընկերները տուն էին վերադառնում, Հայրապետն ասաց։

— Ա՛, Շաւարշ, այդքան ձուկը բաժանեցիր եւ մի քանի հատ չվերցրիր Սիրիկի համար...

Շաւարշն աչնպէս նայեց ընկերոջը, որ վերջինը զղջաց իր ասածի համար։

Մութն ընկնելու պէս ընկերները դնացին իրենց դերիններին աղատելու։ Գիւղի երեխաները հաւաքուել էին դողերի շուրջը եւ փայտի ծայրով ծակ-ծըկում էին նրանց։ Ընկերները նրանց քնեցին, բայց մինչեւ աւագակների թեւերի կապերի արձակումը, Շաւարշն աղաւարեց նրանց։

— Եթէ տրուհետեւ այս դիւղում, չեմ ասում մի հաւի, այլ հաւի մի փետուրի՝ դիւղէք, ձեր երկուսին կապելու ենք մէջք-մէջքի եւ գետն ենք նետելու։ Իսկ հիմա դնացէք...

Ձ.

Միւս օրը, ընկերները դնացին իրենց աւերուած լիճը տեսնելու։ Երբ ընկերները տեղ հասան, բարակ, միապաղաղ անձրեւ սկսուեց։ Շրջապատում գորշ մերկութիւն էր, աշնանային անփոփ տխրութիւն։

Լիճը չկար։ Գապուտակ, կենսալից, կենսայորդ ու ծփուն լիճը չբացել էր։ Թւում էր, թէ այն երբեք չէր եղել։ Ձէին եղել հազարաւոր ձկները, չէին եղել կայտառ ջրչները, որոնք երբեմը ուրախ ծիծաղում էին ընկերներին։ Խորխորաւոր մերկացել էր եւ յափրացել։ Այն նման էր դարձել այն տանը, ուր նախապէս հարսանիք էր եղել, եւ այժմ հարսնեւորները դնացել են, դադարել էր նուազը եւ ամէնօրեայ տաղտուկը սկսուել։ Խորխորատի յատակով նորից հոսում էր այն նուազ ջուրը, որ չէր իմացում, թէ որտեղից էր սկըսում, եւ ուր ո՛չ ձուկ կարող էր ապրել եւ ոչ էլ ջրչուն։ Խորխորատի յատակում լճի ստեղծումից առաջացած մամուռը դեղնել էր։ Գատուաբը քանդուել էր։ Նրա կենտրոնում գտնուող ցցերը հանուել էին այս ու այն կողմը նետուել եւ այժմ պտտնէլի մէջտեղում ճեղք էր առաջացել, այլանդակ մի ձեռք։ Այդ նման էր զեղծելի մի երիտասարդի ակոսապը բերանում առաջացած խոռոչի, որն առաջացել էր երիտասարդի առջեւի խոռոչների թըշ-

նամու հասցրած վարդապետ հարուածից: Նուազ ջուրը դեռ ծորում էր վար, առանց ձայնի ու գրաւութեան:

Ընկերները նստեցին ծանծաղ ջրվէժի մօտ եւ գլուխներն առան իրենց ձեռքերի մէջ: Եթէ նրանք մանուկներ լինէին՝ լաց կը լինէին, խաղալիքը կտարած երեխաների պէս:

— Նորից նոյն կտորուած տաշտակը, — կամաց, շատ կամաց ասաց Հայրապետը:

Շաւարշը լսեց:

— Այո՛, Հայրապետ:

Յանկարծ Հայրապետը ցնցուեց, աշխուժացաւ, ինչպէս գիշերը ցըրտից սառած մի թռչուն, որին կենդանութիւն են բերել արեւի տաաւօտեան ճառագայթները:

— Մենք նորից կը կառուցենք լիճը, — ասաց Հայրապետը շատ ուրախ:

— Այո, Հայրապետ՝ այո, — զուարթութեամբ ասաց Շաւարշը, — վաղն իսկ կը սկսենք:

Ընկերները ելան տեղներից եւ ծիծաղեցին ուրախ: Լիճը պիտի կառուցուի, ձկներով լեցուի: Ջրչները ետ կը դան: Գարնանը՝ թիթեռնիկները, Գիւղի երիտասարդները իրենց քաղաքացի աղջիկների հետ կը դան լճի ափին զուարճանալու: Եւ կտպոյտ-կապոյտ ջրերը կը բարձրանան—կը բարձրանան՝ հասնելու խորխորատի ափերին, ջրելու համար կանաչ եւ սրտաւերեւ եղէգներին: Եղէգը ջուր է սիրում:

Ամառնային երեկոներին, երբ թեթեւ հով լինի, եղէգները հայ նորասպանի մատաղ հարսերի պէս հէրանց կը գնան նազանքով:

ՄԱՌԻՆԷ ՍԱՆԻՆՆԱՆ

Յ. Կ Ա Ր Ա Պ Ե Ն Ց

ԵՐԲ ՓԱԿԻՈՒՄ Է ՊԱՏՈՒՀԱՆՇ

ՍՈՒՐԵՆ ՍԱՆԻՆԵԱՆ

(1912 — 1984)

169-2020

Երկրորդ Աշխարհամարտի պիճը շատերի հետ նրան էլ արմատախիլ էր արել իր հայրենի երկրից ու նետել Եւրոպական թատերաբեմ, ապա՝ Ամերիկա։ Ամերիկայում շումել էր Սուրենը։ Մայրերի վրայ կանգնած՝ դիտում էր կենսաբան եւ տարակուսում, ինքը մեծակ, անմասնակից։ Ահարակամ էր իր երկրում, ահարակամ էր Եւրոպայում, ահարակամ՝ Ամերիկայում։ Ահարակամ էր ինքն իր մէջ, ինքն իր հետ։ Եթէ եղել է մէկը, որը ոչ ոքու եւ ոչ մի հասարակարգի չի պատկանել, այդ Սանինեանն էր՝ միանգամայն գերծ աշխարհագրական սահմաններից, հասարակական պարտադրանքներից ու, նաեւ մասամբ՝ համրային պատասխանատուութիւնից։ Այդ, իր իւրովի անկախութեամբ ու միաժամանակ իր անելի մեծութեան ազդիւրն էր։

Ենուել էր Երեւանում, աւագանի անունով Սուրեն Պետրոսեան։ Եւրոպայում դարձաւ Գրացեան։ Եւ նրան ճանաչեցի որպէս Սանինեան։ Եղաւ մի շրջան, երբ Սուրենը փոխւեց Հայի։ Հայ Սանինեան։ Ըստ երեւոյթին զգաց անհեթեթութիւնը, վերադարձաւ Սուրենին։ Երբ առաջի «ճանաչեցի», այդ բառը պիտի հասկանայի քաղքենի իմաստով, ու

քաղքենու չեմ կարծում, թէ տեւ մէկը իրապէս ճանաչել է Սուրենին։

Երբեմն մա պարզ էր ու միաւրիտ մակեան պէս, սիրում էր կատակել ու ծիծաղել։ Ուրախ էր, որ իրեն չէին հալածում։ Մի պահ յետոյ մեկուսանում էր, ֆաշիստ իր պատեանի մէջ, դառնանում։ Միճելու վերջ էլ չձեռքագտնուեց իր ներքին դաւերից։ Ըստ երեւոյթին, մանկութիւնից մտցած անպահովութեամբ ուսույթ միշտ էլ մթացնեց նրա օրերը։ Այդուհանդերձ, բոլորը սիրում էին նրան։ Բեռնար Շոյի եկերտի կարեկցութիւն էր ցանաւ, յաւկապէս կանանց մօտ։ Իսկ յանախ մա ի սպառ մոռանում էր իր քարեկամներին։ Ձեր կարողանում մատուցել եւ այդ փաստը նրան տառապանք էր պատճառում։ Հակասութիւնների տուրակ էր։ Անչափ կարեկից էր ու միաժամանակ անտարբեր, մասնաւորապէս իր նկատմամբ։ Հենց այդ անտարբերութիւնը հետզհետեւ վաճառեց նրան, միճելու որ այլեւս դարձաւ անհագորդ իր անմիջական շրջապատին, սպա, աւելի լայն առումով՝ աշխարհի համդէպ։

Հագորանական քարոյթների մի անհայտելի կծիկ էր Սուրենը։ Ա-

մէն ինչ ժամանակաւոր ու անխա-
րիսի: Եւ հենց այդպէս էլ երբեք
չունեցաւ իր բռնը: Քաղաքից քա-
ղաք էր գնում, անկեղծ վարձու
սենեակներում ապրում եւ առանց
դրաշմ բռնելու հետեւում մի այլ
անծանօթ քաղաքում սկսելու մոյ-
ցը: Վաշինկտոնում ապրեց գրեթէ
քսան տարի, բոլոր քաղաքներում չունե-
ցաւ: Խուսափում էր հասարակու-
թիւնից, քաղաքում, սակայն սեզմ,
մտերմիկ շրջանակներում քացւում
էր, հազորդւում, հայտնում, մարդ-
կայմանում, դուռնում կենտաշու,
նշմիսկ կատակարան: Երբ Բեքէթն
ու Ադամսը գրականութեան էին
ապաւինում գրականութիւնը, համար
կենտրին անհեթեթութիւնը, Սուրէ-
նը առաւօտից մինչեւ գիշեր ապ-
րում էր անհեթեթութիւնը, առաջին
հերթին քանդելով իր սեփական
կենտրինը: Եւ այս բոլորը առանց ի-
մաստասիրական յենակների, միան-
գամայն բնական, գրեթէ ինքնա-
կործանման յամբ բնագոյով: Եւ հենց
մրա այդ անմեղումակ արտառու-
թիւնն ու վայրենի խոցելիութիւնն
էր, որ գրաւում էր գրայում հոգի-
ներին: Գիտէիք, որ արեւաւորքնե-
րից անցած այդ մարտը հոգեւոր
տակունք պատանի է: Եղաւ մի շըր-
քան, նիւ ետքում, երբ Ստեփան
Տարտանին եւ Վարդգէս Ահարոն-
եանը գուրգուրացին Սուրենին եղ-
բոր պէս: Մի օր էլ գոյիսն առաւ-
հետացաւ, մոռանալով իր ընկերնե-
րին: Զմուռացաւ, սակայն մոռացո-
ղի պէս վարուեց: Համեմատաբար,
աւելի տեսեց քաղաքականութիւնը Մա-
նինեանի, Խոսրով Ներսէսեանի եւ
իմ միջեւ: Դարձանք մի ամկարելի
երրորդութիւն, երբ հակադիր դէմ-
քեր, արանց սակայն միմեանց էր
գողում գրականութեան սէրը: Խոս-
քովը մնաց այդ մտերմութեան մը-
նայում կաւը: Քաղաքից քաղաք
էինք մամբարդում իրար հանդի-
պելու համար: Բաստան, Նիւ Յարք,

Իքսա, Վաշինկտոն: Այդ մտեր-
մութեան մէջ ծագելու էր Սուրէ-
նը, իր վրայից քափ տալիս պան-
դըխտութեան փռչիւն, վերադառ-
նում իր էութեան սկզբնապատե-
ւին, որ գրականութիւնն էր: Թե-
րեւ իր կենտրին ամէնից երջանիկ
օրերն էին:

Ինչպէս կեանքում, այնպէս էլ
գրականութեան մէջ լուսանցում
մնաց Սանինեանը: Տաղանդը չէր,
որ պակասում էր մրան, այլ՝ աշ-
խարհահայեցողութիւնը, խորքա-
խելու իր ինքնութիւնը, դառնալու
անհատականութիւն ու նկարագիր:
Կարաւանը վաղուց անցել-գնացել
էր: Խորքով կայարանում մնացել
էր մեծակ: Իրադրութիւնները —
ներքին ու արտաքին — այնքան ա-
րագ էին դառնում, որ իր բախտա-
կիցների շատերի նման թա չկարա-
ղացաւ հասնել ներկայիս: Ամերիկե-
եան կենտրինը առնուած իր այլապէս
հետաքրքրական արդի պատկերնե-
րի մէջ անգամ նկատելի էր հնացած
ակնազնների առկայութիւնը: Մա-
նինեանը յաջող էր, նշմիսկ գերա-
զանց, երբ վերադառնում էր իր ա-
կունքին, որն անցնելու էր, տուն,
բնտանիք, ժողովուրդ, ապրած օ-
րեր ու կենդանի տիպարներ, յատ-
կապէս հաշկական գիւղը՝ իր մթին,
թեթ կրկնելու ու դաժան, արագում
աւանդութիւններով:

Թէեւ պատմութեան էր նկատ հա-
տար երատարակեց, սակայն Մա-
նինեանի լուսագոյն գործը մնում է
«Եւ յանցանք գործեցի» յաշկալե-
պը, որի խթանիչ ուժը հանդիսացաւ
Ռուբեն Դարբինեանը՝ յարգարելով,
խրախուսելով, ապառնալով մրան
գրի առնել աւտարակամի իր արկած-
ները Սիրիքում: Այս գործում ա-
կընթախ եմ խօսքի ժուժկայութիւնը,
պատկերների խիտ հարադատութիւ-
նը եւ դաժան իրականութեան մէջ
կենտրին լուս քնարականութիւնը:
Յաշկալեպը հատուած առ հատուած

լռյս տեսաւ «Հայրենիք» ամսագրում:

Զեյնովի օրինակին հետևելով՝ Սանինեանի պատմաազգային առաջնորդ կազմում են գործողութիւնն ու երկխօսութիւնը, այն տարբերութեամբ սակայն, որ երբ Զեյնովի երկխօսութիւնը միջոց է նկարագրի ու համգոյց կերտելու, Սանինեանի դէպքում այն դառնում է ինքնամիջոց՝ առանց խորք կամ տարածք պարզեցնելու նիւթի զարգացմանը: Այդ իսկ պատճառով էլ հետաքրքրութեամբ կարգադրում են իր պատմաազգային ու ամբողջական մտապահում: Այլ խօսքով՝ պակասում են հոգեբանական բախումներն ու գաղափարի հակադիր պահերը: Հիմնականին մէջ, դրա պատճառը իր կամարը քաղաքացիութիւնն էր կենսաբանական ինչպէս ճշգրտութեամբ քննարկելու և հասարակ ներստեանը՝ «Իր պատմաազգային միայն կը մասնակցէր աշխարհի կենսաբան»:

Երբ այլոց դէպքում արտառողջութիւնն ու ծայրայեղ ինքնամեկուսացումը հոգեկան անբնականացումն ազդակների կարելի է վերագրել, Սանինեանի մօտ, ինչպէս քաղաքացիայի արուեստագէտների, այդ յարաբերութեան տուայտեմբը նրա գրական մկատումների քննարկը եղաւ: Շարունակ ծիծաղում էր ու գրում: Գրելը նրա համար կենսական անհրաժեշտութիւն էր: Գրելով ապրում էր: Նրա համար աւելի իրական էր իր ստեղծած վիպական աշխարհը, քան իրական աշխարհը: «Հայրենիք» ամսագիրը դադարեցրեց յետոյ, Սանինեանը աշխատակցեց «Բազմիկ» ամսագրին մինչև իր կենսաբան վերջը:

Որքան բարդ էր իր մերձին կառուցը, այնքան պարզ էր իր ոգը, երբեմն հասնելով սարքակամբին: Կարելի էր այն չէր, թէ ինչ էին առում ուրիշները, այլ այն, որ նա գիտէր, թէ ինքն գրող է և այդպէս

էր իրեն տեսնում հայելու մէջ: Սանինեանի տաղանդը բնատուր էր, լերկ սարի լանջին բուսած մի թուփ, գրում էր գրեթէ անհիգ, սեղմ ու ամբողջական, տառապելով բառերի տղաւտութիւնից: Դրա թերութիւնն այն էր, որ աշակերտական էին հընչում իր խօսքերը, իսկ առաւելութիւնն այն, որ կարողանում էր բարդ մտքերն ու կացութիւնները ամենայն յստակութեամբ արտայայտել:

Նա տակաւին համագումար չեմ, որ նա դառն կեանք տարեց: Այդպէս էր տպաւորում: Նա ապրեց այնպէս՝ ինչպէս ցանկանում էր, ինքնիշխան, ինքնամեկուս, ինքնաբերական, անպատկառման: Կատարեալ գոյապաշտի տէր, այն տարբերութեամբ սակայն, որ գոյապաշտը պատառնամատու է իր քայլերի համար: Գուցէ Սանինեանը աւելի լաւ էր մտնում կենսաբան, քան մեմֆ: Գուցէ նա աւելի ազատ էր, աւելի յանդուգն, քան մեմֆ, որ կառչած էմֆ մեմֆ աշխարհագրական ու ընկերաին պարտադրանքներին:

Յաւելին այն է, որ Սուրենը չկայ այլեւս:

Ուները հաւաքած, աջը՝ թեք, ճեղքերը տաքսի գրպանները խաթած, ծխազլանիկը բերանի ձախ անկիւնից կախ, նա կը կանգնէր մայթի վրայ ու ճաղաքի երթը կը դիտէր, երեսուն տարի շարունակ: Սակայն կարծես նոր էր եկել Հայաստանից: Այնքան շատ ճաղաքանքից էր անցել, որ չգիտէր ո՞ր ճաղաքումն է:

— Սուրեն, տուն գնա՛մք, ուշ է:

— Տո՛ւն:

— Այո՛, ուշ է:

— Զգարմանո՛ւ, եթէ առեմ, թէ չգիտեմ ո՞ւր է գտնում տունս:

ՅԱՎՈՐ ԿԱՐԱՊԵՆՏ

A.R.A.R.@

digitised by

ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

Յարութիւն Պերպերեանի բանաստեղծութիւններու առաջին գրքոյի՝ «Կտրիզ», լոյս տեսաւ 1979ին: Ստորեւ աղբւրան կառուցելու մաս կը կազմեն վերջին տարիներուն գրքանոց շարքի մը, որ ի մասոյս լոյս տեսնէ «Ռուսական» տեղանիւմ հաստի մը էջերուն:

Պէտք է վերստին
ապրիմ բոլորը կրկին:

Հարկ է կասկածիլ՝ գիրքն ու լեզուին
եւ յիշողութեան:

Պէտք է վերստին
մտնեմ արտերուն
արեւմտի մահուան

եւ... վերադառնամ:

•

Սպասումն է,
որ այսպէս կ'ըսէ,
թէ՝ տառապանքին
այլ լուծում չկայ —
պիտի միշտ մնայ
մարմինը այնտեղ՝
կախուած անձկութեան
եւ ջղայնութեան
պիրկ պարանոցներէ...

•

Անգեալս հանգիստ չի ձգել մնամ.
իր կայմէն գատուած փշալարի պէս,
յամկարծ կ'ըլտրուի մարմնիս վրայ
եւ զիս կ'արիւնէ...

•

Ճամբորդութիւնը՝ կ'ըսէին մարդիկ,
կը դարձնէ իմաստուն, սակայն
ուղեւորութեանց դարը փակուած էր...

•

Անճրեւ կը տեղայ
աներգիք տան մէջ,
պատերուն վրայ:
Մարմիններու ջերմութիւնը ջնջուած է:
Կը ջնջուի ջերմութիւնը սէրերու:

Կը ջնջուի՞ն՝
 ոտնանետելը տալայատակին
 եւ առանձնութեան ժամերն անհաշիւ:
 Բաց սենեակներուն անձրեւ կը տեղայ...

Հոս այլեւս վայր մըն է, ուր
 առանձին կամ անձնագրաշմ
 հետքեր չկան:
 Տեղ մը հողի պէս,
 որտեղ կրնայ թռիք ըլլալ,
 արեւն ըլլալ,
 նոր սերմն ըլլալ,
 պատահաբար այստեղ հասած
 անյիշատակ հովերուն հետ:

•

Օ՛, հագարաւոր մղձմնիւր անդին
 շատ հաւանաբար շրկրամաս մը կայ,
 ուր կարիք չունիս կանուխ ելլելու,
 բոլորին կողմէ
 հաստատ, ընդունուած գործ ունենալու,
 ժպտելու անվերջ
 եւ վաճառելու
 սահմանուած կեանք մը
 մաշած բառերէ...

•

Պատկերասիրուէն կամ ժայռասիրուէն
 յանախ կը լսենք
 մախտանաւմներ մթնոլորտային
 (ի՞նչ որ կը կոչուին
 առարկայական կանխատեսումներ՝
 բարձր հասանքներու,
 խռնաւութեան կամ անձրեւներու
 բաշխումին մասին):

Սակայն դուն՝ իմ տէր,
 անմախտտեղի պիտի մնաս միշտ՝
 փոթորիկներով միջցամառային,
 միջերկրականեան ջուրերուն խորումի,
 կլիմաներով՝
 այրեցեալ, հանգաբար
 կամ բեւեռային...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@

Յ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵՒԵԱՆ

Անգա կէօրկէօվնան ելած էր ոտքի:

Ինչու չղարձուց զլուխը, հովանոցէն ներս, Սահակ Պարգեւեանին ու փնտուց տղան: Յանկարծակի նախզգացում մը ըրաւ լուրջ անոր արտայայտութիւնը փոթ ու երկիւղոտ: Մայրերը կը դզան տարբեր արագութեամբ, ամէն ինչ որ տարբեր դեր ունի զաւլըներուն ճակատագրին: Խորհրդաւոր հեռազգածութիւնը չէր ատիկա, այլ՝ այրերուն սիրտը շատ վաղուց չափած ու հասկցած կիներու տրտում դերզգայութիւնը, որ կը լուսաւորէ անոնց ջիւղերը, ընելով զանոնք ընկալուչ գալիք աղէտներու: Երբ մեր երիտասարդութիւնը կ'անցնի ինքնակոծումով, ըմբռնելու ջրանալու ահաւոր մեր ջախջախումը, մեր մարմինէն յետոյ, մեր հոգիին հասցուած անհնարին հարուածք, իմացական անարիւնութիւն մը մեզ կը պարուրէ եւ մեր տառապանքը, մազմազ կրակի մը պէս՝ մեզ կը ճենճերէ: Առջը, աշխարհին կամ երկինքին բաներէն, կը ստեղծէ ալոյ կիները, որոնք կը կարդան դադարէք զոց ուղեղներուն կամ պահաւաններուն: Ու կան՝ որ առանց զայցուածք ալ ըլլալու, կը կարդան հանգոյցը դեռ շարժակուած տրամներուն: Մայրերը անհուն զսպանակներու կը նմանին, որոնց ուլաքը կը սպասէ բախտին մէկ ձայնին:

Ձեռած՝ որովհետեւ չերեցող մզկիթի մը մինարէն դողդողաց միջոցին մէջ: Ըսես սրնակ մը երգ, որ կենար իր խարիսխին վրայ: Աղօթողն էր: Մութը տրտմեցաւ աւելի, իբր թէ հոն բախման անցնէր Յաւին մեծ թաթը: Հովը, յարգելու համար այս կակիծը իրերուն, եղաւ նուաղուն ու հեռացող, յուզարկաւոր: Մահաւան պատգամ, որ խաւարին դուռներէն կը հոռի մեզի ամէն իրիկուն: Քրիստոնեաներուն զանդակը ուրիշ աղիւմունք չունի գեղերուն վրայ, երբ արեւմուտին հետ իր դարկերը կ'սուշարկէ, բախելով պառաւանքուն սիրտերը ու կը թելադրէ դաշտի բանուորներուն՝ խաղաղ հեռանկարը մեզի կարելի հանդիստին, ատեն մը վարէն, մինչեւ որ բացուին դուռները վերին: Մինարէն, աւելի տրտում, կ'արժէ աւելի, միջոցին ու մարդկեղէն ձայնին համեմատութեամբ: Ու կը պատմէ կուրծք մը, իր տարածուն իմաստէն անկախաբար:

Արմանը, դուրս:

Յանկապաւին: Փողոցէն լամբ մը ըրաւ անոր երեսը կիսավառ

զգարչւ։ Այդ լուսաստակին մէջ զառնուած, անիկա ականջ եղաւ, լուսանաղօս երգին, ջերմ, թախծոս, պաշարած սլացիկ ու կսկծաղին, զժուլեղէն բխած, երգիչին բերնով։

— Արեւե՛լքը, Արեւե՛լքը...

Բացազանչեր էր անոր մայրը։ Ու մտաբերեր հայրը, անձրեւոտ օրի մը, այդպէս կիսամութ առանձնութեանը մէջ Փարիզի մէկ թանգարանին, մեծ լոճքի մը լոյս առած, հնորեայ պատկերի մը առջին, երբ ուսանող աղջիկ, ներկին ու լոյսին սառերուն տակէն կը ջանար ճանչնալ այդ Արեւե՛լքը, սիրելի, առանց տեսնելու չուրջը թափառող երիտասարդը, մարմինի մտած Արեւե՛լքը, խոր ու թախծոտ, թոյլ ու ըղձաւոր, որ կը նայէր անոր, քիչ մը քացօք, պզտոր ու խոռովիչ եւ զպեր էր իր ջիւղերուն, առաջին իր ակնարկը բռնի հրելով ներս անոր բերեղէն։ Թունդ գինի՛ այդ ոլաքը աչքին, ծաւալելով զէպի խորութիւնները անձին։ Կթոտած՝ անոր ծունկերէն տակի անոր հոգին։ Եթէ ծիծաղելի է այսօր շանթահարու այս ձե՛ւը սիրային խոռովքին, չի դադարի վաւերական ըլլալէ։ Մենք կը լեցուինք, այսպէս, ուրիշներէ, ու տօնակ՝ հակառակ մեր կամքին։ Երբեմն անհուն տարրերութիւններ մեզ կը նեանն ետ, զիրքէ, զրամէ, ցեղէ կամ տարիքէ, բայց կը ջնջուին ինքնաբերաբար։ Իմադրումի փորձերը մեզ կը պատժեն, քչելով միւզ յաճախ դէպի սպանութիւն կամ յիմարութիւն։ Այդ օ՛րը... Սկիզբը անոր ողբերգութեան...։ Տեսա՞նք անիկա Սոնան, որ, իր կարգին, ձգած թաւառը, մտեր էր տըղուն շուրջն ու կը նայէր հիացիկ։ Երբեմն անոր նայուածքը, երգէն ակօսուած պարապէն դարձեր։ Բայց կարդա՛ց անիկա գոյգին այդ խորհուրդը, երիտասարդութիւնը, որ չի ծածկուիր, կարգ մը զգացումներու ճակատագրականութիւնը։ Աղէտը կը նմանի լեռնէն դաւաճովէ՛ք ձերնի հիւսերուն, որոնք իրենցմէ առաջ իրենց հովը կը հանեն ճամբայ։ Լոյսի շղարչին մէջ կիները հարսանեկան վառ կը տեսնեն երբեմն։ Մայրե՛քը։ Ինչ բանէ կը վախնար անիկա, երբ հարցուց։

— Ձե՛ր մօրը։

Կ'ակնարկէր զպետին թեթեւութեանը, որուն մէջ Սոնան կը ստանար լիութիւնը մարմնական իմաստին։ Երբեմն հազուադէպ կը խաթարէ մեր միտերը։ Երբեմն կը ցայտեցնէ զանոնք։

— Ո՛վ։

— Սոնան։

Տիկին Գոհարեան չէր հասկցած։

Աղօթքը՝ լուծ։ Ձոյզը կը յամենար չբաժնուիլ լոյսին ներքեւէն։ Յայանի էր, որ կը խօսէին։ Վասնզի շարժումի ու ձայնի բեկորներ կը հասնէին մինչեւ մայրերը։ Հովանոցէն ներս, խօսակցութիւնը, իր լայն թափին մէջ։

— Կ'աղաչեմ, տիկին, նստեցէ՛ք։

Անգա Միլոփեան հլած անգամ չէր։

— Այնքան պէտք ունիմ քեզի։

Անոր ձայնին մէջ կային տապնապ ու նուաստութիւն ու չէր գիտեր, թէ ինչու կ'ամենար։

Օտարուհին, մեղմ, տեղաւորեց ինքզինքը աթոռին։ Մեր մարմինը մեղքոյ, բարեացակամ հոսում մը կը դառնայ, երբ սիրով կ'ողողուի։ Անգիտակց այդ յօրինումը շատ բան կը պատմէ մեր ներսէն, մեր կարելիութիւններէն։ Ինչո՞ւ հարցուց։

— Քանի՞ տարեկան է :

Անիկա ամբողջ օրը տառապներ էր այդ աղջիկով, երբ պանդոկին մէջ, կցկտուր գիծերով, մօտեցած էր անոր հեքիաթին : Պատմողը, շատախօս դրադէտ մը, ըսեր էր աւելորդ մանրամասնութիւններ, բուական թափանցիկ, բայց ոչ՝ վտանգաւոր : Հիմնականը՝ շքեւ լալն էր անոր Պարգեւեանին արիւնէն :

Ան՝ որ, քսանամեակ, ինքզինքը կու տայ երիտասարդին ու կը գտնէ աղբ, անիկա պիտէ գիրքերէն, օրէնքներէն շատ աւելի : Ու կը շափէ անյայտ կարկիւնով : Սուտին ծփանքը, ծփծփունքը առնուադն հողի մը վրայ տեղի կ'ունենան : Անիկա, քառասունէն անցած, տառապներ էր այդ յետ-կէսօրը, Սոնայի հաշտոյն :

— Քանի՞ տարեկան է ձեր աղջիկը :

— Քսանը կ'անցնէ :

Դեռ Փարիզէն, նկարչուհին կը ճանչնար Տիկին Գոհարեանը, տարածօրէն՝ Սոնան :

— Հայրը :

— Մեռած :

— Իրա՞ւ կ'ըսէք :

— Առաջին ամուսնութեանս պտուղն է անիկա :

Հաճ ու հանգչած բան մը ողողեց Անգա Մերովնային դէմքը : Մեզի կը տրուէ թեթեւակ, երբ մեր բնօրէն բաժնենք ուրիշին : Մեր ուրախութիւնը կը մնայ մեղի : Կան ցաւեր, որոնք կը շահին, երբ շտապանքներ : Այսպէս է մօր մը մեղքը՝ իր աղջկանը քամակին : Զարն ո՛րքան տարածենք գաւկընդուն, ա՛յնքան կ'անձնացնենք : Զօր մը պակասը, նման պարագաներու, երջանկութիւնն է գաւկին : Կը խորհէ՞ր իր մանչուն, երբ այս մտածումներուն մէջէն կ'անցնէր իր սիրտը, ողորդուածի պէս :

Դառն ուրիշ հարցում մը վարանդաւ անոր շրթներուն, բայց չեղաւ : Արմանն ու Սոնան անցան անոնց բացէն, դէպի թաւուտը : Անոնք չէին տեսած երկու մայրերը, թէ պէտք չունէին ուրիշ բան տեսնելու : Ներսէն, մարդերը՝ իրենց մեծ հետաքրքրութեանց մէջ խորատոյգ : Սկսող խոհանութիւնը թեթեւ մը հադի էր հանած Սաահկ Պարգեւեանը :

— Ինչո՞վ կ'ընամ օգտակար ըլլալ ձեզի, տիկին :

— Ծնորհակալ եմ : Ըսին, թէ դուք բաժին ունիք ռուսական պալէին մէջ :

— Այո՛ :

— Ձե՛ր կրնար համոզել Սոնան, որ վերցնէր մաս :

— Բայց եղած է ասիկա :

— Մինչեւ այս առտուն՝ այո՛ : Կէսօրէն ետքը՝ ոչ :

— Զարմանալի է : Ինչո՞ւ :

— Ձեմ գիտեր :

Անիկա կը թուէր տանջուիլ շրտուիք բաներէ : Բայց պահին մէջ տեսակ մը հաղորդականութիւն կ'աշխատէր ի հաշիւ խոստովանանքի, զննման : Հանդիսաւոր օրերուն մենք աւելի թեթեւ կու տանք ու կ'անունք : Մտերմութեան, սիրտանքի այս կարօտը յաղթեց անոր վարանդան :

— Ձեր աղան պիտի նուազէ՞ :

— Այո՛, Յատուկ հրաւերէն դուրս, կայ բնական իր խանդավառութիւնը Արեւելքով:

— Հասկնալի հետաքրքրութիւն:

— Տարօրինակ է այս կրակը իր մէջ: Ունէր շատ պզտիկ:

— Այո՞:

— Տասը տարեկան էր, երբ գիշեր մը անցուց գնչուներու վերանին տակ:

— Որպէսզի՞:

— Մտիկ ընէ տնոց նուազը:

— Սո՛ւրբ Ստեփաննոս...

— Սո՛ւրբ Մարիամ... — ստիպուէր էր անիկա սրբազրել այդ բացազանշութիւնը:

— Մտիկ կ'ընէր ու կու լար: Հագիւ կրցայ տուն բերել: Տարեքին հետ փոխանակ մեղմանալու՝ զօրացու այդ հակումը: Մայրաքաղաքներու թանգարաններուն մէջ անիկա սիրեց Արեւելքը միայն:

— Հասկնալի է այդ հետաքրքրութիւնը:

— Ես չեմ հակառակած: Իր հօրը տղան է: Երբորդ անգամ ք

գիտ կը ստիպէ Պոլիս այցելել:

Տիկին Գոհարեան մօտ էր նեղուելու: Ուրիշները մտիկ ընելու համար մենք պարտաւոր ենք ոչինչ ունենալ մեր հոգու խորքին: Նըկարչուհի մա՞յր էր: Ու իր տղուն վրայ խօսելու առիթին առջեւ, նման՝ ըսլոր մայրերուն:

— Յետոյ, տարիքը աճեցուն, անիկա ընտրեց երաժշտութիւնը, ո՛չ իբր մասնագիտութիւն, այլ՝ իբր անդիմադրելի մղում: Անսահման էր իր նուիրումը, աշխատանքը, մոլեռանդ՝ իր հաւատքը իր տաղանդին վրայ: Ուխտած է ստեղծել մեծ, տիեզերական դործ մը: Անոր համար անիկա կը պտըտի աշխարհէ աշխարհ:

— Դիւթահանդէ՞ւը շահեկան պիտի ըլլա՞յ:

— Ապահով եմ:

— Ասոր համար կ'ուզէի, որ...

— Անհոգ եղէք, տիկին, ես վստահ եմ գինքը համոզելու: Իր կաղապարը, ըսել կ'ուզեմ՝ մարմնեղէն շինուածքը, ինքնին յաղթանակ մըն է: Նկարչի աչքով կը խօսիմ:

— Քիչ բան այնքան դիւր կու գայ մօր մը, որքան աղջկանը գեղեցկութեան մասին գովեստը:

— Խորտպէս երախտապարտ պիտի ընէք թշուառ մայր մը: Անհրաժեշտ է, որ երեւայ այդ խաղին մէջ:

— Այդքա՞ն: Ես կը խորհէի ուրիշ կերպ, ծանօթ ըլլալով քիչ մը արեւելեան բարձրուն, որոնք գոյուար կը հաշտուին բեմական արձակութեանց:

— Իր ապագան կախուած է այդ խաղէն:

Խոնաւցաւ անոր ձայնը:

Թաւուտը շարժեր էր:

Դուրս հլան անկէ Սոնան ու Արմանը: Խորհրդաւոր ու ապուշ ուրիշ այդ ընտանութիւնը, պատկերին վրայ: Յաւիտեաններէ իրարու դրուած գոյգեր ըլլալին: Երկու կիները խանդաղատանքով նայեցան իրարու:

Զոյգը մօտեցաւ: Թեթեւ շուարում ու ջերմութիւն, աղջկան շարժումներուն մէջ: Փայտը ո՛չ բացը, այլ՝ խորրդակը, որ մեր հու-

Թեան համայնական հաճութիւնը կը տեսարանէ, կ'ընէր անոր կեց-
ւածքը տարօրէն քաղցր ու գրաւիչ: Անոր քով, երեսասարդը, պաղ
ըսուելու շափ օտար: Բայց ոնթերի անոր կաղապարը ինքնին փաստ
մըն էր ու վստահութիւն մը:

— Մամա, ներս կ'երթանք:

— Ինչո՞ւ:

— Դաշնակիւն:

Տիկին Գոհարեան մէկէն յիշեց ցերեկը, դաշնամուրին չափը-
ւած զարդարանքը, անտուկէն ճարուած հնօրեայ սնդուար՝ աթոռա-
կիւն երեսին: Մայր ու տղայ փոխանակեցին քանի մը բառ:

— Լաւ, լաւ, — աւելցուց նկարչուհին, թեթեւ ժպիտով: Յե-
տոյ, իբր թէ բնական բան մը ըլլար:

— Արմանը ինձմէ լաւ կը համոզէ զայն:

Ներտասարդը, առանց հասկնալ հետաքրքրուելու — իր հօրը
անաւոր եսապաշտութիւնը այդ անտարբերութեան մէջ, որով մեծա-
տաղանդ արձակադիրը ապրեր էր ուրիշներէ անհոգ, միայն իրեն ու-
շաղիբ — օտար՝ օրօմէն, ինչպէս հզեր էր հօրմէն քիչ առաջ, հե-
տեւեցաւ աղջկան:

Ներկու կիները չլարժեցան:

Մինչեւ «վիլլան» (այսպէս կ'անուանէր զրազէտը երեք սեն-
եակնոց այդ բնակարանը, առանց նեղուելու, ինչպէս առանց հեղ-
նութեան) քսան քայլ ճամբան աննուեցաւ առանց բառի: Տունին շու-
քին մէջ անոնք յապաղեցան: Բայց էր պատշաճին դուռը: Արիւն՝
մուր: Սոնան բացաւ լոյսերը: Դողացին, թեթեւակի, սիւններուն պը-
լըւած մատուտակները: Մուտքին՝ փայտեայ guéridon-ի մը վրայ շեղ
ու հասարակ մը, մանր ու ծանր տերեւներով, որոնք զրազէտը, ա-
մէն անցնելու, դառնալու, մէկ-մէկ կը փետէր, ակունները կ'ճրտե-
լով: Իր ատելութիւնը, մինչեւ իսկ ծաղիկներուն դէմ:

Մասն:

Ներտասարդը կը պահէր անխախտ քիչ առաջուան իր այլու-
րութիւնը: Թեթեւ հոտեր, չի գիտցուի որոշակէ՞, թէ ծաղիկներէ
կը պարտէին, պսակով ու տպաւորելով, սուր ու քիչ մը հասաւ ազդ-
մունքով: Անիկա շտեմաւ աղքատութիւնը սենեակին, դիտողութեան
իր զգայարանը զարգացուցած չըլլալուն: Երաժիշտները կայր ուղող
մտայնութիւնը անիրաւ չէ միշտ: Փոխադրեցէ՞ վարկածը զգացա-
կան մարդին վրայ, բացատրած կ'ըլլաք շատ բան: Տիրական ընտա-
նութեամբ մը անիկա մօտեցաւ դաշնամուրին:

Սեւ մարմինին վրայ գործիքին լոյսի երիզներ կը փայլին ու
կը մարէին, հովէն սրսրուն լամբէն կտրուած: Սենեակը՝ ահօտուած
քիչ ու բարակ հոտերէ, որոնք ծաղիկներուն պատկանելուն չափ, կու
զային հաւանաբար Արեւմուտքին ամէնէն թանկ աղբիւրներէն: Ու
այն միւս հո'տը, աղջկան հոտը, որ մահճակալէն կը պարտի ըսելի
կու զայ ու գոյն, նկարագիր կու տայ անոր սենեակին:

Տպաւորի՛չ, անոր համարձակութիւնը՝ նայելու Սոնային աչ-
քերուն, չփակին, կորացումներուն: Հաւասարակշիռ ու ինքնամ-
փոփ, հետզհետէ շեշտուող ուժղնութեամբ, որմէ աղղուեցաւ այդ
մենութիւններուն խռովքովը ալեկոծ աղջիկը: Բժիշկի մը հոգածու-
թեամբը երիտասարդին մասները, ստտումներով, քանի մը հարուած
տուին նուաղարանին, կողէն ու կափարիչէն: Ի՞նչ կը չափէր, ական-

Նրա հեռացումից հետո արձագանգը Գոսաւ շինութեան թուականը։ Գոսաւ սակայն վաճառանիւր գործարանին։ Հրեայ շրջուն վաճառորդի մը վարժութիւնները յիշեցնող այդ շարժումները, իրենց անիմաստութեամբը, նեղեցին Սոնան։

Երբ թացաւ կախարիւր, անոր դէմքը, յանկարծակի գտած էր անսովոր արձակութիւն մը։ Օտար ըսուելու չափ նոր մէկը, այդ պատճառով, ցուրտ երիտասարդը, որ տարօրէն խոր ու հեռու եղաւ ձեռքին պարզ երկարութեամբ ծաղիկներուն։ Առած էր մէկդի դաշնակին մարմինը բռնաւորող ամէն աւելորդութիւն, նոյնիսկ աշտանակներուն մոմերը, որոնք անայտնի իրենց գեղնութիւնը կը պահէին, Տիւղին Գոհարեանին կատակաւ հաշիւներէն։ Բան փոխուելու չէր այդ գործիքին վրայ մինչեւ հարսնութիւնը իր աղջիկին։ Նետեց դէմի մահաճակաւին նոթայի տեսարանները, բնական, շարժամարտի բերքաւորութեամբ։ Տեղաւորեց ելեկտրական լամպիկը, ջրային, խիստ գիծէ շարժումներով։ Պրկուած, արտայայտութիւնը դէմքին։ Գրեթէ զոյգ աչքերը։ Տփռոյն, զգալի ըլլալու աստիճան։ Նեղուած, վասնզի շատ դատած էր լոյսը, զոր կ'ատէր, անբացատրելի քմայքով մը։ Ալքերու տկարութիւն մը, սկզբնապատճառ այս վանդութեան։

Աթոռակին վրայ, չկրնալով ճշդել աննկիւք դիրքը, Սոնան, օտարաբանով հետեւելով այս ամէնուն։ Անիկա կը կարծէր հաստատել կորուստն ու ինքնութիւնը գրագէտին շարժումներուն, խստութեան մէջ իսկ ողորդ, եղի, փայտայի մնալու տիրակառ կնիքը, որով վարած էր անիկա զգալարանները կիներուն ու սիրտը ամբողջ ներուն։ Նոյն ինքնավստահ բռնութեամբ գլխու, ամօթէն ու հպարտութեան վեր, բայց տարօրէն խոնարհ, տաղանդէն նեցուկուած։ Երբ, մեր միտքը պարապ, կը նայինք ուրիշին շարժումներուն, կը ճշդենք նանդիտութիւններ, որոնց չէինք խորհած։ Մայր մը մեռնող իր պաշտօնի գիծերը կը տեսնէ երկրորդ մեծցողին շարժումներուն մէջ։ Սաւակ Պարգեւեանը, կոնակէն դիտուած։ Մինչեւ անգամ քիչ մը ազատած մենագրութիւնը գրագէտին, որմէ չէր սբրագորուած անիկա մինչեւ ծերութիւն։ Արմանը թերթ բռնելու աստիճանը հօրը նման բթամատը կը տանէր շրթներուն։

Յանկարծ օհնակը «որոտաց»։

Այս էր, ուղիղ, տպաւորութիւնը Սոնա Գոհարեանին, ինչպէս գուրսի բաղձութեան ալ, անակնկալ այն հարուածին տուցիւ, զոր տըւած էր ստեղծի մը երիտասարդին մատը։ Սոնան չէր յիշեր նման ուժգնութիւն մը իր դաշնակէն։ Ան չէր գիտեր, թէ տաղանդը ինչ անախիպ յուզումներ կարող է արթնցնել չէզոք նկատուած սիրտերէ ու գործիքներէ։

Հարուած մըն ալ, հարուածներ...

Իտրարոտ այս խաթամուժը ճայներու ո՞ր հրաշքով վերածւեցաւ անկարելի դաշնակութեան մը, որ կ'անջատուէր խողերէն ու կ'ընէր թշուառ այդ սենեակը տեսակ մը ամպամած երկինք, ցածրող՝ անոնց զլխուն, հետզհետէ աւելնալով իր ծանրութեան մէջ, ճնշելով ուղեղին, մինչեւ որ փայլակին բաշերէն պոռթկար տրամբ։ Երիտասարդը, առանց դնելու ուշ ընդոտ հետաքրք աղջկան, թերեւս նտանելով իսկ, շարունակեց։ Խելօք ու չէզոք անտուկէն կը թռէին գուրս դիւանար բաներ, հզօր ու խառնակ, բայց անհասկի ճարտարապետութեամբ մը տիրակալուած, ըլլալու համար տեսակ մը ուր-

ւային յօրինում: Սոնային մէջ գծուեցաւ պատկերը լերան մը բխում
մին, կազմուած՝ իրար բզկտող ժայռի թեւերով, ահաւոր խառնու-
կութեան մը մէջ իրարու հիւսուած, ամէն բոպէ քայքայուելու, վար
թափելու սարսափ մը ծորելով իրենց խախտա աղիքներէն, բայց
մնալով ամուր, ամբարիշտ, սուտ ու կատաղի, վերելակման խուլ
ժխտով մը շրջանակուած: Մտապառնակներն ու ծայրերուն սա զու-
պարին միջեւ հանգիտութիւնը զայն ըրաւ նկուն: Ո՛վ կը շինէ լեռ-
ները: Ու, ո՛վ՝ ծայրերը առաջէն կը հանէ թեւաւոր ճարտարապետու-
թեան: Սոնան հազիւ դատաւ համարձակութիւնը դիտելու երիտասար-
դը, որ լիահակ, բայց ստաբիլ, նման վաշխառուի մը, որ քիթովը կը
համբէ ոսկիները, կը կոխէր ոսկորներուն: Ու կը կոխէր աչքով՝ ինչ-
պէս ստեղծ, մարմինին բոլոր գլանովը: Զարհուրելի, անբացատրելի
զայրոյթ մը, մարդարէական բան մը ճշտած՝ էր ու կը պահէր իր
անգոհին մէջ, ինչպէս գլխիկ մը ճերաններուն մէջ, անոր դէմքը,
դրեթէ «շլթայելով» վազքը, հոսումը անոր թեւերուն, թունդ ելած
անձնաւորութեան: Պայծառ անոր դանկն իսկ թուեցաւ կնճռոտիւ,
ճակտէն գէպի վեր, ճմուռ-ճմուռ գալով կիւքին կրակէն: Ու տարօ-
րինակ զգայութիւնը, որով ծայրի աղ կտորները կը նեղէին աղջը-
կան ջիղերը, մերկ միտի դպող երկարումով մը իջնելով ներս անոր
մորթէն: Երբեմն մեր վերնամաշկով կը լսենք: Ու կը մտածէր ար-
ի բերան աղջիկը արուեստագէտի սա զայրոյթին: Ի՞նչ կ'ուզէր Պար-
դենան ինչ աղան սա ոսկորներէն ու ի՞նչ կ'ուզէր մա'նաւանդ ինք իր-
մէն, այս աստիճան տարտղնելու համար տարբերուն հանդուցը իր՝
ինչպէս գործիքին մէջը: Մատներուն ծայրը կոխելէն՝ աղջիկը մո-
տեցաւ: Գո՛ց, բոլոր տեսարանները: Ուրե՞մն: Անիկա չուներ լսած
նման կտորի մը ոչ իսկ անունը: Հեղինակ՝ — Ինչպէ՛ս հայրը: Հե-
տեւակութեան, ընդօրինակութեան դէպի ազատութիւն, ինքնու-
թիւն ոմանք կը թոխն դանդաղ վերելքով: Ուրիշներ, յանկարծ ու-
տումով: Տարիներ ու տարիներ աղջկան մը մատներուն տակ դաշնա-
կը կը նմանի էջերուն, որոնք պատանին կը կապեն կարգապահ ոճին:
Ոմանք պիտի փակուին ընդմիջտ ճանդիին՝ համար: Սոնա՞ն: Անիկա
իր զգայարանները դեռ չէր կազմաւորած ու թոյլ էին անոր թեւերը
բոժոժէն նոր ելած թիթեռին նման: Բայց պղտորումը, կասկածը ե-
ղաւ: Սա բռնութիւնը, վայրագութիւնը, ճենձելու՝ կիւքը անոր մէջ
արթնացուն, անուշտ հեռուէ հեռու, ամբարձումները, «սրբազան
ու քնարերական» զայրոյթները Սահակ Պարզեւեանին, հանդիսու-
թեանց պահերուն, երբ ատենախօսը, բառերու հուրքէն բռնաժար,
ինքզինքը կը հանէր ձեւէ ու կաղապարէ, կը թրթուար ամպիւնին վը-
րայ, երբեմն զողացնելով ամբողջ սրահը, կը նետէր թեւերը առաջ,
որոնց ծայրին բռնուածքները պալարաղին կը կլորնային ու կ'արձա-
կէին յուզումին ուժերը ամբոխին հոգեխրամներուն, անզաւաճ աղ-
քաղքեհներուն ջիղերէն ալցունք ու կրակ ճաղելով, բռնի, անդի-
մամարտ, բայց մնալով հոյակապ անդրի մը, զեղեցիկ ու հրապու-
րիչ, երբ անցնէր «փոթորիկը»...: Երիտասարդին մատներուն տակ
նուազարանը կը դալարուէր, կը արորուէր, կը հնձկլտար ամբողջ
մարմնովը, ժայթքելու համար խաղերու սա վէժը, որ ծուարած է
ու հանդուց, մարդոց հոգեկան ճարտարապետութեան մէջ ու կ'ըլլայ
արիւն, ճրգեհ, սիրոյ զարուհ կամ մահուան բացալայլը, երբ քակ-
ւած իր գիծերէն, նետուի մեր ջիղերէն ու հասնի մեր ջիղերուն:

Որքան էր տեսած այս տարօրինակ «ծեծեր», յուզումի ու կրակի սա դիւահար զանձրեւր։ Սրիտասարդը, քրտնաթոր երբ դարձաւ հտին, մէկ ձեռքով թաշկինակ մը դրած ճակտին — Սահակ Պարզեւեանին թաշկինակը — տեսաւ Սոնան, որ կու լար, ծածկով արցունքը թէ ուրիշ բան մը, շրթներուն մօտիկը։ Քար էր կարեր։

Անայլայլ, կարծես հաստատելով սպասումին ստուգուիլը, անկա լրջեց զյուսր ասջին։ Լոռիթիւն, որ կը թուէր գեռ հերկուած փոթորիկին բռնութենէն։ Հանդարտ, հեռու, իբր թէ լրլլար քիչ առաջուան դիւահարը, փակեց անիկա կափարիչը։ Այդ պատանքով զաշնակը վերադարձաւ չէղոք, անիմաստ առարկայի իր զանգուածին։ Ծաղկամանէ մը, թռած ծաղիկ մը — մինակ աղջիկները չէ, որ հետաքրքիր, կը նային ցած պատուհաններէ վար կախելով իրենց կուրծքերը — տեղաւորեց անիկա իր ճահճին։ Անկարհուր այս զբաղումին տիրական ընդարձակութիւն, դէթ այսպէս կը զգար Սոնան։ Դարձաւ կրունկին վրայ։ Ուրիշ՝ կու գար այսպէս հանդիսաւոր։ Խնչ կը փնտռէր։

Առաջացաւ անիկա դէպի աղջիկը։ Առաւ անոր թաղուկը ափին ու քաշեց, մեղմ, դէպի դաշնակը։ Արեւելք յիշեցնող այս պարզութիւնը։ Մանկան մը պէս, հլու եւ կամացուկ, բայց նոյն աստիճանաբար համ, աղջիկը հետեւեցաւ։ Անոր վախը չքացած էր մարմինին կարգ մը մասերէն, մինչ ուրիշներ թեթեւ թեթեւով մը կը թուէին յոյնած, մանաւանդ՝ աչքերը, որոնք կը զգուշանային լայն բացուած չէ։ Աւելի՛ն, անիկա խորապէս դիւրագրգիռ մարմինին հասած ամէն շփումէ չէր նեղուեր հիմա, անոր մատներէն, որոնք զպան մագնորուն, ուսին ու նստեցուցին զինքը աթոռակին։ Այս ամէնը։ Ըսես այն կարգով, որուն նախագիծը շինքը էր ան ցրեկը, երբ դաշնակը կը շարժարէր։ Աւելի՛ն. զգաց, որ կը փնտռէր անոր հասակը, քերձագին այն սիւնը, որ երեսասարդն է աղջկան մը մօտ։ Ուրուացաւ անոր մօրթին վրայ թրթռալին ձգողութիւնը Սահակ Պարզեւեանին, հեշտանքին եւ պարզ համոյքին միջեւ տարուբեր այն խռովքը, որ անոր զգացական կեանքին ամէնէն մութ մասը կը կազմէր, փոխ ի փոխ տարբեր, անձէ ու տեղէ, կիսամօթ ու պարզ, համաձայն այն յուզումներուն, որոնք կը շինէին նախամասը այդ վիճակներուն։ Ինչ որ պահած էր զինքը զառիթափին, չունէր զոյսութիւն հիմա, անոր տեղուն հետ։ Այս զգացականութիւնն էր, որ աչքերուն մէջ վերածուեցաւ ամօթախառն արցունքի։ Կան այս խառնուածքները, որոնք քառէն ու շարժումէն աւելի ջուրին կը մատահին փոթորիկը իրենց ներսերուն։

— Ինչո՞ւ կու լաք։

Հարցումին հետ, գուցէ առաջ, անիկա չափե՞ր էր կուղզ տըրտմութիւնը անոր նայուածքին։ Կը միջամտէր անոր հոգին, տարօրինակ թեթեւութեամբ մը, որ նեղեց աղջիկը։ Կինքը զփուար կը հաշտուն ին այս կարգէ մերձեցումներու։ Այն տարիքին, ուր սեռը տմբողջ հոգին է, անոնք գերաճումի կը տանին իրենց մօտեցող ամէն թրթռութեամբ ու կ'անին իրենք։ Կու լա՞ր, վասնզի կը վախնար իր լիութենէն։ Հարցումէն վերջ փորձեց ժպտիլ։ Զկրցաւ ու առիկա ցաւ էր անոր։

Գիշերը գրեթէ ամբողջացաւ։ Նոր շողեկառք մը սուլեց, դղըր-

գաց ու մօտեցաւ։ Պատուհան փութացող երիտասարդը — անիկա Արեւելքը կը փնտռէր ժամերուն սանդուխովը — պատասխանեց մօրը քանի մը հարցումներուն։ Երկու մայրերը, զաշնակէն քաշուած, մօտեցեր էին առնին եւ մտիկ ըրած թեւաւոր լեռն տղուն մատներուն։ Մօրը հետ իր խօսակցութիւնը, հակառակ լեզուին, անծանօթ բոլորովին, օտար չնչնեց Սոնային։ Մանօթ։ Գրեթէ։ Ոչ անշուշտ դիմադրի՞ն (ամէնէն զժուար փոխուող մասը մեր հոգիին՝ դէմքն է մեր ձայնին) այլ յորովայնէ, բացատրութիւն՝ որ կու գար գրադարտէն։ Երկու-երեք վայրկեան տեւող այս ընդհատումին Սոնան չէր համարձակած շարժիլ արթնակէն։ Անիկա օգտագործեց սա պարսպուրդը տեղաւորելու իր զգայութեանց ընդվզումը՝ իր մէջ։ Վասնզի վախին չափ ուրիշ տարր մը կը խառնուէր այս մտալիկանքին։ Արեւստն է պատասխանատուն, որ մեր տկարացումը մեր պատկերներէն զառածի տեղը մինչեւ, թէ սեռը արդէն ուրիշ բան չէ կարգ մը խառնուածքներէ ներս։ Անիկա ամէնալու չափ մերկ կը զգար ինքզինք խօսքերուն այդ վայրագ լեզուին տակ, բայց խորապէս հաճ։ Ան էր պատճառը, որ չորցնէր աչքերը։ Տեւողական յղացքը երբեմն կ'աղաւաղուէ մեր մէջ, խոր յուզումներու մագնիսէն տարուբեր։ Կրկարծենք ապրած ըլլալ, երբ վախէն փակած ենք զգայարաններուն դուռները։

Պատուհանէն երիտասարդը դարձաւ հոս։ Կը քալէր հաստաւ, տէր, տունի տղայ մը իբրեւ։ Վերցուց զաշնակին կախարիչը, առանց նայելու աղջկան։ Վայրկեան մը՝ անշարժ, անմտած։ Յետոյ տառաւ կեցուածքը բան մը հարցնողի։ Բայց հարցումը չբրաւ։ Քո՞վի Ինձնսէն քաշեր նոթայի տեսրակ մը, բացեր մէկ ձեռքով ու երկարած՝ արհամարհող ու չկամ։

— Նուագէ՛։

Սոնան մնաց անալլալ։ Ուրիշէն, այս հրամանը։ Երիտասարդը ստիպուեցաւ երկրորդել։

— Ձե՛մ կրնար։

— Ինչո՞ւ։

— Այդպէս։

Արագ այս երկասացութեան մէջ ո՛չ վախ, ոչ ալ կեղծ համեմատութիւն։ Պէտքն է։ Ատիկա կ'ընենք աւելի առաջ, երբ մեր ճամբաները նոր կ'ուրուագրուին։ Սոնան, միւս կողմէն՝ չէր ծնած այդ կենդանակերպին տակ։ Կան այդ աղջիկները, որոնք պիտի չժպտին նոյնիսկ իրենց նշանածներուն։ Անոր դէմքին եղաւ յարգալիք այն լրջութիւնը, որ դէմէն կու գայ ու կը նմանի տաղանդէ անդրադարձումի մը դէպի ուրիշը։ Կը հաւատարմ իր խեղճութեան, թէ միամիտ խուսափում մըն էր իր կատարածը։ Պէտք չէ մոռնալ, թէ երեխաները խոր վստահութիւն ունին իրենց արժանիքներուն եւ արուեստը իր ընտրեալները երկար ասեմ կը պահէ երեխայ։

— Ո՞վ է ձեր դասատուն։

Չպատասխանեց կրկին. հարցումին ընթացիկ անտեղութենէն աւելի՝ ամէնալու անունը տալէ այդ ուսուցիչին — այսինքն՝ անձնական վիշտին։

«Ծառ լռելը սեռային վախ է», տարադր ելած է Պարզեւեանին վարժ գրիչէն։ Գրեթէ քաղիկ տղան ալ, որ հօրը նման, քսանէն

առաջ, կ'ատէր կիները, զանոնք աւելի իբրաւ, աւելի խոր վայելելու համար, մինչ համակրութիւնը խնայող է միշտ:

— Առնի՞ք արեւելեան եղանակներ:

Սոնան կարծրեցաւ: Կը կարծէր կրկին ենթարկուիլ անիրաւ ան արհամարհանքին, զոր Արեւմտեք ըրած արուեստագէտներ — Արեւելքէն — արտոժ ունէին արտաթայտելու գեղղջուկէ ալ: Երաժշտութեան հանդէպ: Ի՞նչ իբր էին անոնք այդ հնչուածքին մէջ: Անոր թաղուն ցաւերէն մէկն էր ատիկա, զոր խնամքով կը սքողէր լազէտ մը, գեղացի մը՝ չղատելու զգուշութեամբ: Անիկա կը կասկածէր իր արտոժանքին տարողութեանը վրայ ու կը լսէր իր յուզումը՝ մօրն իսկ երգերէն: «Տիրացուներ», իրենք, որոնք ծննդաւ ի տեղ դաշնակ ունէին: «Շապիկ հաղնիւ», կը ծաղրէին զինքը, Եւրոպա ըրած ցեղակից գլուխակահարները — լայնօրէն արթնալու տաղանդաւոր — որոնք միջնակարգ պանդոկի մը մէջ նուագելու քախտը արժեւորել կը կարծէին՝ ուրանալով իրենց ցեղային անունը աւելնէն առաջ: Ու այն միւսնէ՛րը, երգահան կամ դաշնաւորող, որոնք քանի մը բան սորված harmonieէն (իրենց բերանին լա՛յնք բառը արտասանած ատեննին) առանց դիմածուած չէին կրնար ունիւնդիւրիլ ժողովրդական մեր երգերը, հակառակ անոր, որ իրենց աչքին առջեւ, վհուկ վարդապետ մը այդ պարզուկ տարրերով խոսովքի էր տարեր Արեւելքի մեծ ոտտանները:

— Բայց ինչո՞ւ չէք խօսիր:

— Կը հարցնէք բաներ, որոնց դժուար է պատասխանել:

— Ինչո՞ւ:

— Կը մոռնաք, որ տարբեր աշխարհներու կը պատկանինք: Ու ես խեղճ աղջիկ մըն եմ Արեւելքէն:

— Արեւելքը հարստութեան խեղճութիւնը ունի: Հոն հոգիները կը հասնին իրութեան գերազոյն աստիճանին, որմէ անդին ըլլալը հաւատարմ կը դառնայ չըլլալուն: Ո՞վ՞ աւելի խեղճ, քան կոյր երաժիշտ մը, որ փողոցէ փողոց կ'երգէ: Բայց ո՞վ՞ աւելի փարթամ ինքն իր մէջ, քան նոյն այդ անօթին: Արեւելքը հոգիներու նուիրապետութիւնը չի ծաղրեր, ինչպէս ատիկա ամէնէն ընդգեցեցիչ հղելուութիւնն է Արեւմտեքի կարգերուն: Ու թշուառութեան, անօթութեան խորխորատն իսկ անբաւական է հոն, թաղելու իր աչքին մէջ թոբիլը, որ մեր միսերէն դուրս կը նետէ մեզ, ու մեզ կը հաշտեցնէ ապրելուն եղբրականութեանը հետ: Արեւմտեքի մէջ մա՛հը կ'ատեն իբր զըրկանք մը, աճապարոտ անդթութիւն մը: Արեւելքի մէջ զայն կ'ողբան, ըղձաւոր ու հաճ: Արեւելքը: Մենք միայն կը հասկնանք զայն, Օրբորդ:

— Ճի՞շդ է, որ կը սիրէք շատ, շատ ատ Արեւելքը:

— Խորապէս ճիշդ:

— Բայց անոր անհուն, անսփոփ թշուառութիւնը:

— Երանի անոնց, որոնք երջանկութիւն կը փնտռեն, գտնել կը յաւանդեն նոյնիսկ ամէնէն փառահեղ դիւանդներուն մէջը, օրինակի համար, անգլիացի ազնուականներուն, երբ խարտեալ ու պաղուկ, ապշօրէն հպարտ՝ իր մազերուն բաց դեղին ոսկիովը քանամենի դժբախտէ մը ատած միսերը կը պտըտցնէ խոնջ պարտէզներու ծոցը ու կ'ուզէ փառքը, պատմութիւնը, որոնք ծանրահիւս շուրջապի մը նըման կը ձգուին իր սրտին եւ արտաքին աշխարհին ընդմէջ: Օրբորդ:

երբեմն ջերմ նայուածք մը աւելի կ'արժէ, քան հարիւր գղեակ: Հաշիւ, անյագութիւն, գիշտականութիւն — ահա՛ Արեւմուտքը:

— Կը սիրէ՞ք Արեւելքին արուեստը:

— Անոր ամէն բանը:

Կը խօսէր փորձ, կիրթ, առանց յուզումի:

— Պարզ է: Արեւելքի էք ի վերջոյ:

Նայեցաւ աղջկան թեթեւ կնճիռով: Իր արիւնին վրայ սա ակնարկութիւնը երկտասարդը տհաճ զգիտով մը կ'ընդունէր մօրմէն: Տասը տարեկանին անիկա կրցած էր դնել զանազանութիւնը ընդմէջ այդ Արեւելքին, զոր գիրքերը կը շինեն եւ հիւսիսային երկիրներու ծիսածանուած սառնամանիքներուն: Անիկա անհնարացած էր իր հայրը այդ ճշգրիտացած ոլորտին մէջ, պերճ ու զփրախտ, ինչպէս են պալատական իշխանները, դէ՛րժ՝ զնգաններուն ժեղկութեանը մէջ ու վհուկանքուն ձեռքով, օ՛ր մը ճակատադուռած իրենց ազատութեան դառնալուն, յաճախ լայնոր ծերունի: Հեքիաթը: Ու ան ունէր իր Արեւելքը, ինչպէս կը շինուի անիկա արեւմտեան մայրաքաղաքներուն մէջ, ծոցը հնարոյթ թանդարաններուն. կեղծ ու տարագիր: Երա՛զ մը, ինչպէս է յաճախ երկրորդ մանկութիւնը մեր ամէնուն: Թափանցում: Եղաւ առիկա, աւելի ուշ, ծոցին մէջը առաջին կնիկին, մօրաքրոջ աղջկը, իր կրկին տարիքովը, որ զինքը խնամեւ էր ծնունդին օրէն, ու հասցուցեր իր մայրիւնին: Զգուսդին, կործանած՝ անիկա դաւանք էր իր մայրը քուզինին ծոցէն ու հասկցած ինքզինքը, իր ծնունդին տարակայ առեղծուածին միայն անդրանիկ իր խորայն փուլումով: Նոր կ'ելլէր անիկա առանհրահիւզ, ու թշուառ էր անոր ծոցի կինը, ինչպէս շատ հարուստ պառաւ մը, որ կը մեղքնայ իր խսկ կերածին:

— Եղա՞ծ էք Արեւելք:

— Քանի՛-քանի՛ անգամներ:

— Պոլի՛ս:

— Անուշատ: Իզմիլ:

— Իզմիլ:

Հարցումին հետ անոր արիւնը խուժեց երեսին, զայն ընկելով տարօրէն հեշտ: Բեհեզ մը, դեղձային ու հիւթոտ: Մեր միսներուն մէջ այս կարգի հեղումներ ճակատագրական են մեզի, բայց մա՛նաւանդ դուրսին: Անոր նայուածքը եղաւ յանդուգն, որքան աղաչաւոր, խուզարկու, որքան խպնող, ա՛յնքան՝ որ երկտասարդը թեթեւ գունատուեցաւ:

— Արեւելք՝ այդ քաղաքը:

Խելօք, բայց մատնող հարցում: Երկտասարդները քաղաք չեն սիրեր...

Իրարու հանդէպ օտար, կիսածանօթ ըլլալուն պազ գիտակցութիւնը կտարեցաւ մէկէն: Հեռուններէն կը գծուէր աղեղը, որուն վրայ յոյժ իրարու կը վազեն մեր հողինները, երբ դեռ ունին թեւ, մաղէ կամ մուրջներէ ճամբորդելու: Ընտանութիւն: Մեր ձեւերը ուշ կ'ընեն տարիկա, բայց մեր հողին՝ արագ: Մնաց որ, միօրինակ չէ եղանակը այս հաղորդումին: Անիկա կ'ունենայ տեղի, անծանօթէ անծանօթ, երբեմն քառորդէն, երբեմն... տասր տարիէն: Մեղրագոյն այդ բլրաժողով անոր հասակին անհրաժեշտ էր կարծես, որպէսզի քաղաքն ու յիշատակը, աղբիկն ու աղջիկները լրացնէին զիրար: Ընկրկուն ու

փակաչը, երիտասարդը իջաւ խորը իր մօտիկ անցեալին: ...Մովսիս-
նեայ ապարանք մըն էր յատկապէս Համապատկերին: Անկէ՛ սեն-
եակ մը արեւելեան, որ կը յիշեցնէր անոր թանգարանները, բայց
զերծ էր անոնց բարբառէն: Տեքոր, ոճ, կահաւորում՝ իրական ու
խորունկ: Տիւան, դաշնակ, փոքրադէր շուքակներ՝ երկաղէ ու խեղճ:
Մեծփոր սագեր, տարօրէն զգայուն ու ղեկային: Աղջիկներ, վարսա-
գեղ ու շինուած այն խմորէն, որ կ'եցեր էր անոր առջին սա պահուն,
Հելուանի ամայութեանը մէջ: ...Գիշեր մը զինովութեան ու յիմա-
բուքեան: Երգը երբ դաշնաւորուէ միսին հետ, հոգեկան անքակտե-
լի շաղախ մը կը կազմէ: Անիկա վախեր էր դաշնակին մօտենալու
ու մերժելու աղայանքը հելլէն աղջիկներուն, որոնց զգայարանները
միջոցաւ դէպքէ մը կը կատարեն ընդմէջ Արեւելքին ու Արեւմուտքին:
Անիկա չէր սիրած ձայները, որոնք շատ օտար հնչեցին: Բայց...
Բացաւ աչքերը: Մոնային արձանը տարօրէն կը կրկնէր խռովիչ միւս
ձեւը, որ պլլուած իր վիզին, մարմինին ճամբով զինքը տարեր էր
Արեւելք, այս անգամ պարզ, առանց հակազդեցութեան տալանալի:
Անոր մէջ ինքզինքը լքող աղջիկը տեսաւ մը տարր էր, առանց սեպ-
հական կեանքի, տարածուն ու ողորմելի, որ սեռին քուրային մէջ
քանի մը վայրկեանէն կը հաղնէր իր խռովիչ ճարտարապետութիւնը
ու կ'այլէր ինքզինքը, տարփակէր, բայց անպատ, հետզհետէ փո-
ղաղուն, մնալով ինքնանուէր ու հլու: Կինը երկրի մը ամէնէն ար-
տալայտիլ խորհրդանշանը կը ներկայէ, քաղաքակրթութեանց լոկա-
րիթմը:

— Ձեր Արեւմուտքը աղջիկ չունի:

— Արեւելքն ալ կ'ունի չունի:

Երկուքն ալ վեր էին իրենց բառերէն:

— Սէ՛րը:

— Արեւմուտքի մէջ անիկա կը կամարէ ամէն բան, բայց կը
կամարէ միայն: Մեր մէջ անիկա ամէն բան է, թէ՛ կամար, թէ՛
խարխուս:

— Բայց դուք գերուհիներ էք:

— Մենք գերուհի կը թուինք, բայց չենք տարիկա: Ժողովուր-
դի մը բարբերը, հոգեբանութեան անվերծանելի տարրերը կ'ապառ-
տանին անոր երգերուն մէջ: Ու Արեւմուտքը չունի անոնցմէ:

— Ուրիշ՞ դիտէք:

— Բայց ձեր հայրը ձեզի չափ ծանօթ է այդ Արեւմուտքին:

Մինչեւ անոնց կանչուիլը դուրս, թէյին, խօսակցութիւնը եւ
դաւ ղեկերուն արուեստին, կիներուն, Արեւելքին ու Արեւմուտքին
չուրջը: Սոնան կ'արտայայտուէր շնորհով, ճշգրտութեամբ, մա'նաւանդ
մտածումներու անկախութեամբ մը, որ կը զարմացնէր երիտասար-
դը քիչ մը շատ նախապաշարուած Արեւելքէն: Պարզեւեանին գաղա-
փարները կարծես կը թարմանային, կ'աղուորնային, անցնելով այդ
կաղապարին մէջէն: Դաշնակահարը կը յայտնուէր ինքնատիպ ու
սուր, իր գիտողութեանցը մէջ, որոնք արդիւնք էին անոր իմացա-
կանութեան ու ջիղերուն համախառնուրդ գրոհին, ձեւերուն եւ մի-
ջախարհերու առատ ու բազմազան դօտիններու մէջէն: Ճամբորդու-
թիւնը երկիր մը կ'արժէ: Իր ընդհանրացումներուն մէջ անիկա երե-
ւան բերաւ շատ աւելի բանաւոր յանդնութիւն մը, որքան չունէր
ըրած անոր հայրը՝ իր ժխտումներուն թոյնովը ինքզինք կարծա-

ցուցած: Բարձրագոյն ժշակոյթի անցած, հատուածական ու ազա-
զուն, որ մեր մէջ կարելի կերպը եղաւ, հաղիւ հասնելով մեր ժողո-
վուրդի փոքր կարիքներուն: Անիկա մեն ղիւրութեամբ կը տարածէր
այդ արուեստին բարիքը խորագոյն սահմանները մինչեւ մարդկային
տառապանքին, շատ աւելի մեն, քան ցեղի մը ողբերգութիւնը: Հա-
րըստութիւնը, դիւր կենցազը, թոնդարանները, ինչպէս հսկայական
նարտարապետութիւնները շին կրցած փրկել մարդկութիւնը իր տա-
ռապանքին դոյզն իսկ մասէն: Քաղաքակրթութիւնը դէշ ու ընդար-
ձակ ախորժակ մըն է, դէշ բաներու վրայ բացուած: Ձայն կը արէ
արիւնը յարաճուն սաստկութեամբ: Փա՛ստ: Հիմա, իրենց ոսկիին
ու փառքին, դիւրակեցութեան ու բազմաբեղուն վայելքներուն հա-
կառակ, մարդիկ կը տոտապին աւելի, քան դար մը առաջ: Ի՛նչ որ
կը խնայենք Փիլիքին, կը զործածենք զայն հողին ժանդահարելու:
Արման Պարպեւ հաւատաւոր էր օրին, երբ աւելի նոր ու մեն եր-
գի մը թեւերուն վրայ ցեղերը պիտի վազէին փոխադարձ հասկացո-
ղութեան: . . . Մասնակի նոթ մը, — այլուրութիւնը, անոր՝ իր ցո-
րը ցեղէն, այսինքն՝ այդ ցեղին անունով ազդերու խղճմտանքին առ-
ջեւ դրուած եղեոնապատումէն: Ձէր ուրանար այդ հօրը արիւնը,
Չիւմութիւնը, տխրութիւնը, որոնք կը թաւալէին անոր երակներէն,
բայց կ'անգիտանար այդ հայրիկին սրբազան ճեննեւերումը՝ զատի
մը ետեւէն, զոր անկարող էր ըմբռնել, այսինքն՝ տարազել քառորդ
դարեան իր անմարդկայնութեանը մէջ, չհաշտուելով այն անհեթե-
թութեան, որուն համեմատ մարդեր, իրեն նման զրեթէ. առտու մը
կլլէին, կ'կլլէին իրենց տունէն, կը մտնէին դրացիին տունը, կը կա-
պէին բնակիչները ու կը մորթէին զանոնք հաւերու նման: Այս այն-
քան պարզ ու ասորէն ճիշդ իրողութիւնը մատչելի չէ Արեւմուտքի
ուղեղներուն: Այս անբնականութիւնն է, որ մեզի արժեց մեր լքու-
մը, ու հետեւանք՝ կտրծանումը: Մեր ցեղին դժբախտութենէն Ար-
ման Պարպեւ գիտէր այնքան, որքան ամէն օտար, միջակէն վեր զար-
դացումով, որ իր թերթին լուրերը կը վայելէ, սուրճին համար ա-
նուշիկ թմրէր մը հեռանկար փնտռելով: Կը զատուէր այս մարդե-
րէն իր հակառակութեամբ՝ մեր դատին անունով հրապարակ դրուած
կեղծ նարտարանքին, զոր սիրական բանաձեւով մը կը տարագէր իր
comédie larmoyante մը, անարդիւով դիւանէ դիւան սուտ ու փուտ
անպարարութիւնը, մեր արիւնով պայմանաւոր: Մեր ողբերգութիւ-
նը չահագործող, առնուազն «պոռնկացնող» այս մտայնութեան գէժ
էր ընդվզումով անիկա չէր գիտեր, թէ կը կրկնէր հօրը խառնուած-
քին տիրական մէկ դիծը, որ տեսակարար կշիռը կու աայ Պարպեւ-
եանի ստեղծագործութեան:

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

(Շար. 19)

Գ Ր Ո Հ

Մալք կիրճերու հազար գնդակ ընդունած
 Իմ ճակատին յագնատանց,
 Յանուն բարիքի չարիք սերմանող,
 Օ, քանի անգամ ճանկերու պարզած
 Իմ ձեռքը ծուռտ,
 Եւ զգացական թիւր ռեկրներու
 Բազում անգամներ ենթարկուել հոգ,
 Իմ քայլերուն՝ օճապառնայ շղթաներ,
 Իրերու մզիչ ուժ վերջին,
 Ես դիմեցի մեռած ու ողջ բանաստեղծ
 Եղբայրներուն իմ բնութիւն,
 Եւ անսայով անոնց ձայնին վստահելի, մտերիւմ,
 Այսպէս ոմա՛ք ու անանկ,
 Եկայ, կեցայ անյողորդ
 Քայլաւորումին մէջ անվերջ
 Ոռնոտներու մտադկային,
 Եւ փարեցայ երկնին
 — Իրերու ճօնուող սիւնը վանքիմ Տաքելի —
 Մատներու մէջ,
 Իրերու մեղիքի քառաբիւն.
 Բարձր պահած
 Սկիւն անբիծ արուեստի.
 (Ոռնո՛ւ տրտում ավերեց
 Հերոսներու պաշտպանութիւն
 Արիւնք է. ո՞ր կը կտրի) ...
 Զերթ առնալիս, պղծուած հողի
 Հրիտակ վերջին,
 Նորածինի պէտ նետեցի յայնժամ
 Իմ քարտազող սիրտը խաբանուած
 Ընդդէմ գրեհին խաժառնեմներուն...

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

Պ. Ս Ն Ա Պ Ե Ա Ն

Ա Խ Ո Ռ Ի Ն Մ Է Ջ

Պաղեստինի անգլիական բանակներուն միացած Ազատ Ֆրանսացիներուն եւ Սուրիոյ ու Լիբանանի Վիշի միաւորներուն միջեւ մղուած պատերազմը տարբեր չափ մը տուաւ ժամանակին: Երկարատեւ եղան զիշերները, ցերեկները, ժամերը, մանաւանդ՝ Պեքաայի նորահաստատ զաղթականին մէջ, Այնճար: Ռումի շտեղաց հոն, Թընդանօթներուն գոռոցները հեռուէն լսուեցան, բայց միւս թշնամիները բազմացան, կատղեցան աւելի, երկինքը դըղըղացնող զինուորական առաջին օդանւան հետ հեռուն, մօտը, դարաւոր գիւղերուն ու քաղաքներուն մէջ գործ գըտած մարդոց վերադարձին զուգընթաց՝ կարիճը, անորոշութիւնը, միւս ուտիչները՝ լուն, մլուկը, մժեղները, ու ասոնց հետ՝ մալարիան, մոլեկան թափով, մեռելազանգը...

Յոյսի նշույները երեւցան շատ ուշ, Ազատ Ֆրանսացիներու եւ Դաշնակից միաւորներու մուտքէն ամիս մը ետք: Յետ միջօրէի մը, անգլիացիները եկան եւ եօթը բռնակառքերու մէջ տասնեակներով մարդ լեցուցին ու տարին Ձահլէէն անդին, Փըրդու, պատերազմի դաշտէն հաւաքւած անտէր ձիերը խնամելու, ուրիշներ ուղղուեցան դէպի Մեսեիուն, ճամբաներու նորոգման գործով, անոնց հետ՝ Նապոյի եղբայրը, իսկ հայրը, հօրեղբայրը, հօրաքրոջ տղաքը մեկնեցան Իլիաս Թաղմիի անտառները, փայտահատութեան: Ով որ անկողին չէր ինկած՝ գնաց:

Տղամարդոց արտազաղթը բոլորովին բաց ձգեց ապարէզը Նապոյի առջեւ: Գաղթականութեան մէկ տարին հունէն դուրս հանած էր արդէն անհանդարտ իր հոգին ու երբ դարնան կիսուն անորոշ ժամանակով մը գոցեցին դպրոցը, բոլորովին անճանաչելի դարձաւ: Պատերազմի այդ օրերուն աւելի վայրագ հովեր փչեցին երակներուն մէջ, մղելով զինք տարիքին անյարիր դրսեւորումներու: Դպրոցէն քանի մը դրուադներ միայն մնացած էին մտքին, ճակատամարտներու, հերոսներու պատմութիւններ, Մհերը, Դաւիթը, վերջին տարին՝ Ատրեանակի միջադէպը, Կրետացի ճաւաքարը, զորս խենթի պէս

կը սիրէր, կը պատմէր տունը, ընկերներուն, մանրամասնօրէն, յափշտակութեամբ, չէր յազենար, կը վերապատմէր ինքն իրեն, ճամբուն վրայ, տնոց յուզած ապրումներով կ'ալեկոծէր, կը մուտար իւրովի ու քայլերը կ'արդանային անզգալարար, կը վազէր...: Կ'երթար սօսիներու անտառը, որսի, անկէ գետափ, ձկնորսութեան, գնուած կամ իր կազմած պայթուցիկներով, ցուրտին, տապին, անոպայ հաճոյքի մը ծարաւը զգացած որեւէ պահու, պիշերները: Տարիքն է, արիւնը կ'եռայ, դեռ կեանքին տաքն ու պաղը չէ ճանչցած, կը մեծնայ ու կը խելօքնայ, կ'ըսէին մեծերը: Անհանգստութիւնը սակայն միշտ բաց կը պահէր իր առաջաստիները՝ նապոյի սրտին ու խելօքութեան ծիածանը բնաւ չէր երեւեր իր երկինքին վրայ: Դպրոցին հետ իրենց կապը շատոնց խզած եւ ամէնուր դժգոհութեան փոթորիկներ յարուցած տարիքով իրմէ մեծերը իրենց մէջ առին յանդգնութեան իր առասպելը մինակը շինած նոր ստամբակը, գուրգուրով անոր վրայ, իր յարգող բնաւորութեան եւ համեմ պատմութիւններուն համար:

— Նապօ, անգամ մըն ալ պատմէ Կրետացի մաւաւ վարը...

Տասնըջորս տարեկան էր Նապօ, միւսները՝ տասնըհինգ, տասնըվեց, արտի թեթեւ գործերով պարապող: Առտու, անջատ-անջատ, կ'երթային իրենց տրամադրուած հողակտորները, ջուր կու տային ծարաւած լոյիկներուն կամ եղիպացորենին, արմատախիլ կ'ընէին մոլորտները, կը փորփրէին մէկ կամ երկու ածու ու, կէսօր չեղած՝ կը գտնէին զիրար, յանձնուելու համար մէկուն կամ միւսին երակներուն մէջ փշած նոր հովուն, որսին, ձկնորսութեան, որեւէ շարժումի, ուրիշ խումբի մը հետ պարստիկ խաղալու հեշտանքին: Համ կ'առնէին կոխներէն, կը սպառնային աջ ու ձախ, անյուր հայհոյանքներ կը տեղացնէին իրենց ստեղծած խռովութիւններուն դէմ խոժոռած ամէն հողիի դէմ:

Կիրակի կէսօրին, ձըրճենց բակին մէջ նոր որսացուած ծուկերը մաքրելու ատեն, Նապոյի հօրաքոյրը մօտեցաւ եւ յայտնեց, որ Գասիւր Սիմոն, տունէ տուն շրջելով, դահլէցի աղայի մը սոխի արտերուն մէջ աշխատելու համար բանուոր կը հաւաքէ, մարդ, կին, աղայ, աղջիկ: Պիտի փեռէին սոխը, յարգարէին ու լեցնէին տոպրակներուն մէջ: Փետողներուն՝ օրական երեք ոսկի, միւսներուն՝ երկու: Երկու շաբթուան գործ: Իրարու աչքին նայեցան, ժպտուն: Զըրճը որք էր, Գաթին մայրը՝ հիւանդ, Մխոյին ժպտուն: Զըրճը որք էր, Գաթին մայրը՝ հիւանդ, Մխոյին ժպտուն: Զըրճը որք էր, Գաթին մայրը՝ հիւանդ, Մխոյին ժպտուն: Զըրճը որք էր, Գաթին մայրը՝ հիւանդ, Մխոյին ժպտուն:

կըրայրն ալ, բայց միայն
digitised by A.R.A.R.®

անծանօթին հրապոյրէն տարուած: Դեռ գիւղէն դուրս չէր ելած ու կը կարծէր, որ արկածախնդրութեան նոր ասպարէզ մը կը բացուի իր առջեւ:

Ներկայացան Գասիւր Սիմոնին, արձանագրուեցան, ժամագրուեցան:

Երեկոյեան, Նապօ միտքը յայտնեց մօրը եւ քրոջը: Մայրը ընդդիմացաւ: Մատ մը տղան ինչ գործ ունէր մինչեւ Զահլէները: Օրերը գէշ էին: Տիզանթէրին դեռ կը շարունակէր իր հունձըը: Մալարիան կար ու կար, անծանօթ հիւանդութիւններ կային: Ո՛չ: Հիւանդութիւններէն զատ, գաղթական կիներ մտքին մէջ ունէր նաեւ միւս վըտանգը: Ծամբաները վտանգաւոր էին: Պատերազմէն եկած զինուորները աստուած չեն ճանչնար, խենթեցած էին ամէնքը ու ամէն օր մէկը կը ճգմէին իրենց խենթեցած ինքնաշարժներուն տակ: Ո՛չ: Համաձայն չէր: Ինք չէր ուզեր, որ տղան աչքէն հեռու ըլլայ:

— Հոս եղած ատենը աչքիդ առջեւ կը մնայ որ, — առարկեց Նապոյի քոյրը, — թող երթայ, դոնէ վրան բան մը կ'առնէ:

Քրոջ խօսքին հետ նոր հմայքով մը քաղցրացաւ Նապոյի առաջին գաղտնիքը: Յիշեց զայն լեցնող ողին, պատերազմի նախօրեակին Ռայաքէն խոյս տուած եւ իրենցմէ քիչ մը հեռու, դիմացի շարքին ապաստանած քաղաքացի ընտանիքի մը նորափթիթ աղջիկը: Առաջին անգամ հեռւէն տեսած էր զայն, իր գասընկերուհիներէն Մարոյին հետ, խոտոռելով: Տակնուվրայ եղաւ, երբ շաբաթ մը առաջ գէմ յանդիման եկաւ անոր հետ, մեծ ճամբուն վրայ, առանձին: Կարծեց, թէ Մարոն իրմէ կրած շարժարանքները պատմած է անոր, կրկնած է ամէնօրեայ յանկերգը, խենթ է ըսած է, վայրենի, դադան, եւ քաղաքացի աղջիկը նոյն ապաւորութեամբ պիտի նայի իրեն: Մեծ եղաւ տակնուվրայութիւնը: Քրտնեցաւ: Փորձեց շեղել ճամբան: Ձկրցաւ: Կարմիր հագուստի մը մէջ բռնկած՝ քաղաքացի պարմանուհին աւելի դանդաղեցուց քայլերը, չափեց զինք վերէն վար եւ թովչալի ժպիտով մը ողողեց աչքերը: Կը դողային անոր շրթները: Թուեցաւ, թէ բան մը ունի ըսելիք, բայց Նապօ անցաւ արագ, եւ տուն մտնելէ հաջ միայն զգաց, որ արեան մէջ կը վազէ անծանօթ դող մը, հաճելի, ողողիչ: Կտոր մը հաց պիտի առնէր եւ վերադառնար ընկերներուն, բայց որոշեց տուն մնալ ու ոչ մէկուն հետ խօսիլ: Երկնցաւ խսիւրին: Գոցեց աչքերը, աղջիկը տեսաւ միայն: Բացաւ աչքերը, տեսիլքը նոյնը մնաց, ու գտաւ, որ ան տարբեր էր իր տեսածներէն, առատ մազերով տարբեր, փայլվուն հազուատներուն վայելչութեամբ, առինքն ող, անապատին մէջ բողբոջած հրավառ ծաղիկի մը պէս, ժպիտն ալ տարբեր էր, բարի, անքնն՝ որ Մարոն ոչինչ պէտք է պատմած ըլլար իրեն: Այս ապահովութիւնը պըղտորեցաւ սակայն ուրիշ վիշտով մը: Քաղաքացի աղջիկը

կրկին պատկերացուցած տեսն, Նապօ առաջին անգամ ըլլալով զգաց, որ իր գէժքը արեւակէզ է ու փոշեթաթաւ եւ բզկտուած հագուստներ կը կրէ...

Գորշ խօսքը հանձնելով արձագանգեց մտքին:

Վաղ արշալոյսին, Գասիւր Սիմոնի արձանադրած բանուորները ձայն տուին իրարու եւ ելան ճամբայ:

Երբ անցան գիւղին սահմանը դժող կամուրջը ու թեքեցան մեծ դաշտը կիսող զինուորական նորարաց ճամբան, Նապօ հայեացքը պահ մը ետ նետեց: Գետին երկայնքին զալարուող մառախուղին եւ անոր մէջ ջնջուած գիւղին դեմաց անորոշ թախիծ մը համակեց զինք մէկէն, օտարութեան մը ապրումը, տեսակ մը վախ: Ընկերները առաջացած էին ու ինք սկսաւ քայլ պահել ետ մնացածներուն հետ, երկու-երեք տարեց ալբեր եւ քանի մը տասնեակ կին ու աղջիկներ: Կծկում մը զգաց սրտին, յետոյ՝ մտերմութեան տրտում հոսք մը: Այլ դարձաւ, ձախ դարձաւ, ետ, առաջ, կարօտով նայեցաւ ամէնուն, ինքնաշարժ կին կնոջ, Պըլլիթին մօրը, Ծերունին, Ըրդիֆին, Իկիտին հարսին, Օսմանին հասակագեղ աղջկան, Գլիպիլին կապուտաշեայ Վերտին, Գրէզին ու Գամպուզային կիներուն, աղջիկներուն, ամէնուն: Կարծես ունէ մէկուն հետ կոխ չէր ըրած, ունէ մէկուն չէր հայհոյած: Գորովը կ'ետար երակներուն:

— Հայկական կարաւան, — ըսաւ՝ գիւղը ուսուցչու թիւն ըրած տիկին Մարին, ու հեկեկանքով կուրծքին սեղմեց սոխ յարդարելու շտապող իր տասներեքամեայ աղջընակը:

— Ի՛նչ հայկական կարաւան, — մեռնելու չենք երթար, գործի՛ կ'երթանք, — բարկացաւ՝ տառապանքը Համայնի մէջ ճանչցած Գասիւր Սիմոն:

Լոյսը սկսաւ բացուիլ ճամբուն կիսուն, մեծ հողաբլուրին մօտ: Ձմերուկի ու սեխի արտեր, իւրաքանչիւրին մօտ երկյարկանի տաղաւար մը եւ անոնց առջեւ ու շուրջը պոչ ու մազ տնկած շուններ, սեւ, խարտիչահեր, մեծ, պըզտիկ, խոսաբիւ: Ու խողաններ, այծէ մազով վրաններ անոնց եզրերուն, ու դարձեալ շուններ, ոչխար, էջ, հետաքրքիր աչքերով կիսամերկ մանուկներ, ուղտեր: Ո՛ւղտ: Իր ծննդավայրին մէջ սւղտ չէր տեսած Նապօ ու աչքը ամէնէն աւելի կը պաղէր այդ ծամածուռ հսկաներուն վրայ, որոնք պահ մը մոռցնել կու տային իրենց ցօղաթուրմ խոտերէն կիսաբոպիկ ոտքերուն անցնող վաղորդեան պաղը:

Տեղ հասան արեւածագին, Զահէի ուղղութեամբ տարածուող լայնատարած դաշտ մը: Գասիւր Սիմոն ներկայացաւ հողատիրոջ վերակացու ինչիւրի կ'ու միասին բաժնեցին աշխատանքը: Նկատի առնելով Նապօյի տարիքը, ինչիւր ուղեց զայն դնել կին ու աղջիկներուն սահմանուած գործին մէջ: Նապօ ընդդիմացաւ: Գասիւր Սիմոն միջամեծեց: Ինչիւր պայմանականօրէն զիջեցաւ պատանին դասել տեղ:

փետոգներուն շարքը: Սկսան գործը: Վերակացուն գնաց, եկաւ, թելադրանքներ ըրաւ, քննութիւններ կատարեց, հետեւեցաւ իւրաքանչիւրին ձեռք բերած արդիւնքին, նապոյի գիծին՝ աւելի: Ծօշափեց դուրս հանուած սոխերը ու կէսօրին հաղորդեց իր որոշումը: Նապօ առաջին կարգի բանուոր էր:

Ժամացուցային կարգ չունէր իրենց աշխատանքը: Արեւածագին պէտք է գործի ըլլային ու արեւածարին ձըղէին դաշտը, կարճատեւ դադարով, իրենց չոր հացը ծածկուաւ: Երեք ժամ երթ, երեք ժամ դարձ, լման օրը հեւքի մէջ, այսուհանդերձ, այդ սպառումը չէր սանձեր Նապոյի շարժելու տենդը: Քրտինքի, սոխի ու հողի իրերախառն հոտ մը վրան՝ գիշերը անպայման կ'երեւէր իր սիրած փողոցները, մեծի հովերով, օրավարձով աշխատելու իրականութենէն շոյուած ինքնասիրութեամբ, դարձեալ կը հանդիպէր գեռ քիչ առաջ իրմէ բաժնուած ընկերներուն, կը կրկնէր անոնց հետ օրուան պատահարներուն պատմութիւնները: Կը պատահէր, որ փայփայած գաղտնիքը լեզու ելած կանչէր իրեն: Այն ատեն կը նետուէր դուրս, գետին պտուկելով հորիզոնին դէմ կը քննէր չըջապատը ու կը շարժէր առաջ, շեղ արահետներէ, կոխկռտելով ուղղամիտներու վրայ ու կանգ կ'առնէր քաղաքացիներուն տուն մօտը: Երբեմն բախտը կը ժպտէր իրեն: Քարիւղէ լամբարին ագօս լոյսին մէջ կ'ուրուանար աղջկան կիսաստուերը, կը հրճուէր, կը հեռանար նոր խռովքով ու մինչեւ քունը տանի կը հոլովէր նոր լաած անոր անունը, երգի մը պէս, Նիհա, Նիհա, Նիհա, ապա կը մատնէր իր օրավարձերուն, առնելիք հագուստին, հագուստին վրայ սեւեռուած Նիհային բոցավառ աչքերուն: Այս տեսիլները կը քաղցրացնէին բրիչը սոխին ճշգրիտ արմատներուն նետելու լարւած աշխատանքին խոնջէնքը եւ զգացած առաջին ամօթը ջնջելու յոյսը կ'ողողէր արիւնը:

Երբորդ օրը, գինեգոյն նժոյգի մը խայտաճամուկ թամբին բազմած՝ երեւցաւ կալուածատէրը՝ Սուլէյմէն Ծուատ: Խալիլ վագեց ընդառաջ, խոնարհեցաւ տիրոջ առջեւ, առաւ ձեռքէն ձիուն սանձը ու միասին ուղղուեցաւ դէպի տաղաւար: Անոնց մօտ փութաց նաեւ Գասիր Սիմոն: Նապոյի ընկերներէն աւագը՝ Ճրրճ, չարախինդ ժպիտ մը խաղցուց դէմքին ու հայհոյեց տարօրինակ պատկեր մը կազմած երեք մարդոց հասակներուն: Միսօ, Գաթ եւ Նապօ աւելի կուացան սոխերուն վրայ, չմատնելու համար Ճրրճին դրդած իրենց անդուստլ քրքիջը: Գասիր Սիմոն կարճահասակէն աւելի կարճ էր, Խալիլ՝ երկայնահասակէն աւելի երկայն ու Սուլէյմէն Ծուատ միջահասակ ճարպագուն մը:

Վերակացուն տեսարակը ձեռքը՝ Սուլէյմէն Ծուատ եկաւ եւ անբարբառ կանգ առաւ ածուի մը գլուխը, գործաւորներու երկու խումբերուն միջեւ: Խալիլ մէկ-մէկ

մատնանչեց կարգացուած անուններուն տէրերը: Կալուածատէրը նայեցաւ իւրաքանչիւրին, քննեց սոխի տոպրակներն ու դէղերը, բարձրացուց գլուխը՝ ու բաներ մը փրսփրաց թափելին, ցածցուց գլուխը՝ ու բաներ մը փսփսաց Գասիր Սիմոնին, ապա, երկու ներկայացուցիչներուն օգնութեամբ՝ հեծաւ ձին եւ սուրաց եկած ճամբէն:

— Այդ ի՞նչ չսիրուելիք դէմք էր, — գանգատեցաւ Իկիտին հարսը, — խուլածա մարդը այսպէ՞ս կ'ըլլայ:

— Բարեւ անգամ չտուաւ փեղեկէնկիմ տղան, — ջղայնացաւ Մերուն:

— Հապա ի՞նչ, — գաղթականին հետ կ'ուղէիր մարդու պէ՞ս վարուին, — տրտնջաց Ազատ:

— Ինչ գաղթական, ծօ՛, — վրայ հասնելով բորբոքեցաւ Գասիր Սիմոն, — դուք ալ կը կարծէք, որ իրապէս գաղթական էք:

Ըստ Գասիր Սիմոնի, վերջին տեղահանութիւնը գաղթականութիւն չէր, տեղափոխութիւն էր: Լսուած բան է, կը պնդէր Համայնի գծօթեքն վերապրած բեկորը, որ մարդիկ մինչեւ դուռդ ինքնաշարժ բերեն, ապահով տեղ բերեն, տուն տան, հո՛ւ: Բարեւ չէ տուած եղեր: Ի՞նչ մեծ բան: Դուք տուած գործին նայեցէք:

Բայց բանուորները շատ արժէք չէին տար դառն փորձառութիւններու բովին մէջ ձեւաւորուած Գասիր Սիմոնի իմաստութեան: Տառապանք՝ իրենք ալ տեսած էին: Կ'ուզէին բարեւ տալ մարդոց, ծանօթին, անծանօթին, մեծին ու պզտիկին, բարեւ առնել, զերծ մնալ վերաւորանքներէ, խնդալու սիրտ ունենալ:

Սուլէյմէն Ֆուաթի մեկնելէն ետք, ոչ ոք նոյնը մը նայ: Բան մը քանդուեցաւ սրտերուն մէջ: Վերակացուն ալ փոխեց իր վերաբերումը, աւելի խստացաւ, երեկոյեան արձակուրդին համարձակեցաւ նոյնիսկ քննել ժմանց հացի ծրարները, սոխ փնտռել անոնց մէջ: Սո՛խ: Տրտունջները շատցան:

— Հո՛ւ նայէ, Գասիր Սիմոն, — ձայնեց Միսո բորբոքած, — ըսէ այդ սրբըխին, որ անգամ մըն ալ չհամարձակի այդպէս բան ընել: Ո՞վ կը կարծէ մեզ:

— Եթէ մեզի հետ մարդու պէս պիտի վարուի՝ լա՛ւ, թէ ոչ՝ թող տայ մեր օրավարձերը ու վերջանայ: Իր երեւին չենք կարօտցած, — ըսաւ նախկին ուսուցչուհին:

— Հարսանիքը մօտ կ'երեւայ, — պատրաստ եղէք, — պատուիրեց ձերը իր ընկերներուն:

Գասիր Սիմոն մեղմեց բորբոքած ջիղերը: Յաջորդ աւտու փութաց Զահէ, վերադարձաւ, առանձնացաւ խալիլի հետ, թափել բարեփոխեց իր վերաբերումը: Գործը շաբուանակուեցաւ, առանց սակայն առաջին օրերուն ընծայած ոգեւորութեան: Հիմա պաղը աւելի կնոզ կը թուէր իրենց, տաքը՝ աւելի խիստ, սոխին հոտը՝ աւելի կծու:

Գործատէր Սուլէյմէն Ֆուաթ օր պիտի դար

եւ ուղողին մասնավճար պիտի ընէր, չեկաւ: Շարժու ըսկիզբն ալ չերեւցաւ: Աշխատանքը շարունակել տալու միջոց մըն է ասիկա, ըսաւ ու կրկնեց Մերուն: Ենթադրուածինը տեղ գտաւ շատերու մտքին, բայց վերջովումի գուռ չբացաւ: Ոմանք նոյնիսկ օրավարձերը մէկ անգամէն ստանալը աւելի նպատակաշարժար նկատեցին:

Յոյսին ու կասկածի հովերուն միջեւ տարուբեր՝ գործաւորները շարունակեցին աշխատանքը, վերապրելով նոյն ատեն մօտիկ անցեալը, յուշերու պատումով, հառաչելով, երբեմն հեկեկալով, երգելով նաեւ, բարկ արեւին տակ, սոխի հոտով յաղեցած մթնոլորտին մէջ: Որքան լաւ օրերս գնացին, որքան համարյաբեք գիրգ ու սէք, սայլութիւն, մի՛ էջիւր ձիերիմ: Երգին հունչերուն ի լուր, նապօ կանդ կ'առնէր անպայման եւ տխրամած հայեացքով կը նայէր երգողին, ի կիտին կնոջ, որ գաղթականութեան առաջին օրերուն կորսնցուց իր իկիտ ամուսինը եւ հիմա սոխ յարդարելով պէտք է հաց ճարէր երեք զաւակներուն: Սայլութիւն...: Մերթ բառերը կը սառնէին շրթներուն եւ իրեն հետ կը փղձկէին ամէնքը: Նապոն կը նայէր անոնց, երեւակայութեամբ կը տանէր զիրենք ծննդավայր գիւղը, ծառերու շուքին, աղբիւրներու մօտ, պտոյտներու, խնձոյցներու, հարսանիքներու ու կը կարծէր, թէ իր սիրտն ալ երգել կ'ուզէ... Սայլութիւն...:

Երկրորդ շաբթուան կէսերուն այնպէս թուեցաւ, որ անկարելի պիտի ըլլար նախատեսուած ժամանակին փետել ու դասաւորել բոլոր սոխերը, ու Մերուն նորէն բացաւ չարագուշակ բերանը: Սուլէյմէն Ծուատ կրնար նորէն յետաձգել վարձատրութիւնները: Դեռ անպիտան գործ կար, չորս-հինգ օրերու կարօտող, գուցէ աւելի, բայց Մերունին ենթադրութիւնը հող չգտաւ այս անգամ, իրենց կացութիւնը ծանօթ էր գործատիրոջ, այնքան անգուշ չէր կրնար ըլլալ մարդ արարածը:

— Խալի էֆէնտի...:

Սուլէյմէն Ծուատ խոստացած էր Շարաթ կէսօրէ առաջ գալ:

Ձեկաւ:

Բանուորները կէսօրին կապեցին իրենց յոյսը:

Ձեկաւ:

Յետմիջօրէին ալ չերեւցաւ:

— Ա՛յս է քու գովաբանած խուլածան, Գասի՛ր Սիմոն:

— Ի՞նչ կը մտահոգուիք, այսօր չըլլա՞մ՝ վաղը կ'ըլլա՞յ, յաջորդ շաբթուա:

Գործաւորները կրկին բորբոքեցան: Ի՛նչ վաղը, ի՛նչ յաջորդ շաբթուա: Իրենք դրամի պէտք ունէին, հիմա՛: Օրը օրին ապրող մարդեր էին, տուն կար՝ որ հաց չունէր, տուն կար՝ որ հիւանդ ունէր, թէ ոչ՝ ո՞վ միջինը Ձահլէները քա-

լելով գործի կու գայ, կը դրկէ իր զաւակը, թիզ մը աղ-
ջիկը:

Խալիլ բազմացուց անհանդստութեան նշանները, Գասիը Սիմոն գունատեցաւ, միասին շրջեցան ածունները, չափեցին Չաւլէի ուղղութիւնը, անցան տաղաւար, ցու-
ցական ձեւով մը բացին տետրակը, բայց հորիզոնին վրայ չեղեցաւ Սուլէյմէն Ֆուատի նօսրդը:

— Եթէ ինք չգայ, մենք կ'երթանք, — յանկարծ ջը-
ղայնացաւ Գաթ, — ես աւելի չեմ կրնար համբերել, տու-
նը հիւանդ մայր ունիմ:

Ճըրճը, Միսն եւ Նապոն կրկնեցին Գաթին սպառ-
նալիքը: Խալիլ դէմ ելաւ ալք մտադրութեան: Գասիը Սի-
մոն խենթութիւն չընելու պատուէր տուաւ: Խուփածիկին
ու Քրեզիին կիներն ալ համաձայն չէին դործատիրոջ ետե-
ւէն երթալու որոշումին: Կը վախնային, որ ազաքը փոր-
ձանք մը կը բերեն իրենց գլխուն:

— Քալեցէք, ծօ՛, — ճչաց Ճըրճ, որ քանի մը ան-
գամ գացած-եկած էր Չաւլէ, — գողութեան չենք երթար,
որ վախնանք: Դե՛հ:

Չորսը մէկ բաժնուեցան խումբէն ու արեւամուտին
հասան քաղաք: Երկար փնտրտութիւն պէտք չունեցան: Ծու-
կայի մարդերը բոլորն ալ կը ճանչնային Սուլէյմէն Ֆուա-
տը: Բռնեցին ձախակողմեան բլուրին վրայ մատնանշուած
կղմիտը՝ տուներուն ուղղութիւնը: Ընդարձակ տուն մըն
էր Սուլէյմէն Ֆուատի տունը, երկյարկանի, երկաթէ մեծ
դարպասով: Միօ զարկաւ ուռնակը: Ներսէն չուն մը յայտ-
նեց իր գոռոզ ներկայութիւնը: Ոտնաձայն մը: Երկար դոդ-
նոց կապած մանկամարդ կին մը ճեղքեց դարպասը: Հար-
ցում: Պատասխան: Խուփածան միւս կալուածը գացած էր,
Ալպայի կողմը եւ պիտի վերադառնար գործը աւարտելէ
ետք, ուշատեն: Նոր տազնապ մը ցնցեց պատանի գործա-
ւորները: Կը կարծէին օրավարձերը առած՝ գիշերը պի-
տի վերադառնան, այդպէս լուր ճամբած էին դիւղ: Խոր-
հրդակցեցան:

— Մինչեւ դրամս չառնեմ՝ ես տեղէն չեմ շարժիր,
— վճռեց Գաթ:

Սուլտայէն ու հայհոյելէն իջան շուկայ, պարպեցին
գրպաններուն մանրուքները, մէկտեղեցին, հաց առին, կը-
տոր մը պանիր, քանի մը ողկոյզ խաղող ու ճամբեղրին
փռուած նորաչէն տան մը ատաղծին վրայ կերան երեկոյ-
եան իրենց հացը, անցորդներու հետաքրքիր նայուածքնե-
րուն ու հեգնախառն ժպիտներուն տակ: Ապա շարժեցան
դէպի Վատի, վերադարձան, քանի մը անգամ շրջեցան բա-
նուկ փողոցները: Երթեւեկը դարձաւ միապաղաղ: Տաղտ-
կացան: Ժամանակը դժուար կը սահէր: Կրկին ափ առին
գործատիրոջ ապարանքին առջեւ: Սպասուհին: Սուլէյմէն
Ֆուատ չէր վերադարձած տակաւին: Ծունը: Դանդաղե-
ցան սաքուիին վրայ: Ծունը աւելի կատղեցաւ, սկսաւ թա-

թերով զարնել երկաթեայ դարպասին, հաջել, գրվալ: ձըրճ, անտարբեր, կոթնեցաւ հաստարուն թթենիին: Գաթ փռուեցաւ անոր ոտքին: Մխոն եւ նապոն ալ տեղ դրաւ: ցին ընկերներուն մօտ: Վայրը ցամաքային էր, երկինքը բաց ու պաղ հով մը կը շարշարէր անոնց անպաշտպան մարմինները: Աւելի սեղմուեցան իրարու: Արշալոյսին ելած էին ճամբայ, ամբողջ օրը բրիչ շարժած, յուզուած, ջղախաղած, պարտասուն: Նապօ չիշեց, երբ տարաւ զինք քունը, Մխոն չիշեց, ձըրճը չիշեց: Կիսարթուն էր միայն Գաթը, որ կը տքար: Կէս գիշերուան մօտերը, օրօրուն ձայն մը շոյեց անոր ականջները: Առաջին անգամ մշտեց նապոն, որ ընդոստ վեր ցատկեց եւ ճչաց.

— Խուժաճաճ... .

Սուլէյմէն Ծուատ զսպեց խրտնած նժոյգը ու վար ցատկեց: ձըրճը փութաց մօտը ու պարզեց խնդիրը: Գործատէրը արհամարհական անտարբերութեամբ մը իմացաւ տղոց պահանջը եւ անխռով ներս մտաւ, ետեւէն՝ իշու մը պախուրցը բռնած փաթեցաւ որ մարդ մը, յետոյ՝ ուղտ մը, երկրորդ մը, երրորդ մը, ամբողջ կարաւան մը, բեռնաբարձ, հանդիսաւոր, զօղանջուն:

Երբ մեծ բակին մէջ բեռները վար առին եւ ուղտապանն ու կարաւանը դուրս ելան, Սուլէյմէն Ծուատ ներս կանչեց պատանիները, ետեւէն կղզեց դարպասը, ամբացուց նիւթը եւ, ախոռին դուռը բանալով՝ թելադրեց հոն գիշերել եւ աւտուռ ներկայանալ իրեն: Աղբի, թամբի, կենդանիներու շունչի հոտը իրենց ուռնգերը խոցած ակնթարթին, նոր ցաւ մը ալեկոծեց հոգիները:

— Ես իր կնիկը... . — հայհոյեց ձըրճ, — ետեւէն եկէք:

— Ես դուրս չեմ կրնար ելլել, կը մտի՛մ, — մրմնջեց Գաթ, ու ինկաւ թամբի մը մօտ:

Մխոն ձեռքը տարաւ անոր ճակտին, որ կ'այրէր ու մարմինը կը դողար, խորշակի մը բերանը ինկած եղէգի մը պէս: Տղաքը հակեցան իրենց ընկերով վրայ. շատ չայլալեցան սակայն: Նախանշանը ծանօթ էր ամէնուն: Մալարիան զարկած էր Գաթը, որ ինքն իր մէջ կծկտած՝ սկըսաւ կափկափել, տնքալ, զառանցել: Նետեցին վրան իրենց բաճկոնները, յետոյ՝ ոտքերուն երկարեցին խուրջին մը ու նստեցան շուրջը, աղբածածկ սալաքարերուն: Ախոռին ջերմութիւնը ընդարձացուց մարմինները: Գաղբեցան շարժումները: Գունը վանելու համար՝ Նապօ մութին մէջ ձայնեց.

— Մխօ՞:

Լուսթիւն:

— ձը՞րճ:

Լուսթիւն:

Նապօ կը լսէր միայն հիւանդ ընկերով ձայնը, որ կը մարմրէր, կը զօրանար յանկաբժ, կը դռար մերթ, վա-

խաղաղու ելեւէջներով լուսնու-լուսնու աղալէս կ'ըսեմ քեզի Ռայաք վարացա՞ր մամադ մեռնի հասակիդ ոչ ո՛չ ո՛չ դումպէն դարա նի-նիմ դումպէն դարա նի-նիմ քալէ րսի չի տա՞ր քինին չեմ առներ տը կօյր չեմ առներ լեզի լեզի շապա՞չ կիւմ կիւմ կիւմ սոխ ալրեցայ ալրեցայ ըհ օդա-նաւը անցաւ ծօ ես քու մայրդ ըհ ըհ չեմ ուզեր բան մըն ալ չեմ ուզեր բժի՞շկը քէթէն թոխումէ լէփէ՛ լէփէ՛ հա հա՛ հա՛ հա՛ լոխումա լէփէ՛ սոխ ուղտերը Զահլէ՛ կը սատկեցը-նեմ անգլիական կը սատկեցնեմ կը սատկեցնեմ դումպէն դարա նի-նիմ կիւմ կիւմ դարա նի պարէ ծօ պարէ Հայաս-տանէն եկած գինուոր վայ պապամ վա՛յ վայ պապամ լու-լուսնու-լուսնու մեռաւ խալիլ էֆէնտի սոխ խալիլ գլուխս այս Գուրը չի խմուիք գլուխս չի՛ խմուիք գլուխս պիտի չերթամ ինչ կ'ուզես ըսէ պիտի չերթամ այս մեծեղները ուրկէ՞ եկան պիտի չերթամ մամա՛ ուրախ եղիր դուն հայ տղայ ուրախ եղիր եղիր հո՞ս հո՞ս բսիք շապա՞չ Հայաստան մեր դափ-նին կոփը թուրքերը եկան կո՛փս կոխւ ես ալ գինուոր հա հա՛ հա՛ հա՛ հա՛ գինուոր կիւմ հասկցար կիւմ լուսնու-լուսնու-լուսնու դումպէն դարա նի Սուլէյմէն Ռայաքը կ'այրի եկա՞ւ Սիմա Սիմա չե՞ս լսեր ալրեցայ լեզի լեզի խալիլ էֆէնտի չեմ երթար մամա չեկա՞ւ Հայաստան երկիր գինուոր այս գինուոր allons enfants de la le jour gloire la la la այո այո գինուոր la la la ինչ չի տար կու տա՞յ դումպէն դարա նի նիմ դումպէն...

Երկար չարչարանքէ մը ետք, ձայնը մարեցաւ, քնա-ցաւ հիւանդը ու Նապօ աւելի առանձին գզաց ինքզինք, ա-ւելի խճողուեցաւ ուղեղը, վիշտը խորացաւ։ Թուժը, խուր-ջին, ձի, մէզի ու թրիքի հոտ, առնէտներու անդուլ եռու-ղեռ, կոխւ, ճիչ։ Պահը ճշդեղու համար ելաւ ոտքի, խորխա-փելով գտաւ դուռը, բայց չկրցաւ ակնարկը աստղերուն յա-ռել, դամփուր ետ մղեց գինք։ Ախո՛ւր...։ Ձին ալ վրդա-վեցաւ, խրխնջեց, տեղափոխուող սմբակներուն հետ աւե-լի եւս գրգռելով աղբին հոտը։ Նապօ արտաշնչելով կը վա-նէր անոր խուժումը եւ նոյն ատեն կարօտ մը կը վառէր սրտին, կարօտը իրենց հողակտորի բոյրին, յոյիկներուն, նոյնիսկ մոլախոտներուն, գետափի մարմանդներուն, կո-տեմներուն, եղէգներուն, ֆուրին, կը փոխադրէր ինքզինք անոնց մօտ, այն օրերուն, երբ չէր հուստար, որ մէկը կրնայ ցաւ պատճառել իրեն։ Հիմա կը դալարուէր ինքն իր մէջ, կարծես կ'ամշնար իր պաշտած քաջերէն, առիւծի ե-րախը պատուող Մհերէն, Մարայ Մելիքին դէմ ցցուած Դա-ւիթէն, Ատրճամակի միջադէպէն, կրեւազի նաւավարէն, պարզ մարդերէն նաեւ, իր կոխներուն հանդիսատես եղած բոլոր ծանօթներէն, իրեն կը թուէր այլեւս, որ ինք ի՛նք չէ, պիտի սիրէ ատածները, պիտի ատէ սիրածները, ձին՝ որ խորթ-խորթ խրխնջաց իր կողմը դարձած պահուն, դամփուր, որ թշնամարար սպառնաց իրեն։ Ախո՛ւր...

Աւտու՛ սպասուհին կանչեց զիրենք դուռ ու յայտ-

նեց, որ խուժան կը սպասէ իրենց ճաշարանը: Քնաթաթախ աչքերով, տակնուվրայ եղած վրայ-գլուխով ու վրչտահար՝ տղաքը հետեւեցան մանկամարդ կնոջ: Սուլէյմէն Ծուատ բաղձած էր ճոխ սեղանի մը դուռը ու հանդարտ էր դէմքը: Տապկուած ու խաշած հաւկիթ, ձիթապտուղ, մեղր, կարագ, կաթ, թէյ, լաւաշ հաց, շոգեւոր, բուրոմ-նաւէ՛տ:

Մեծատունի մը հանդիսաւոր ինքնաբաւութեամբ՝ խուժան հրախրեց պատանիները նախաճաշի:

— Ես այս մարդուն սեղանէն բան չեմ ուտեր, — մոլտաց նապօ:

— Ես ալ, — ըսաւ Մխօ:

Գաթ ու ժապաղառ ձախով մը հայհոյեց կնոջը:

— Ձին մոռցեր էք կանչելու, խուժա՛ն, — ըսաւ ճորճ շեշտակի աչքին նայելով:

— Ո՛ւր, — իրար անցաւ Սուլէյմէն Ծուատ:

— Նախաճաշի...

Գործատէրը մէկէն ցնցուեցաւ, շտկեց ինքզինք, ժպտեցաւ:

— Դէ, նստեցէք, — ըսաւ՝ աթոռները ցոյց տալով:

— Մեր օրավարձքերը, — ճշաց Գաթ՝ իր ուժերը հաւաքելով:

— Մինչեւ նախաճաշ չընէք՝ դրամ չկայ, — փորձեց կատակել Սուլէյմէն Ծուատ:

Միահամուռ մերժեցին կրկնուած հրաւերը: Հոգատէրը կրկին պնդեց, կրկին մերժուեցաւ: Ձախները բարձրացան:

— Դրա՛մը, — ըսաւ Մխօ՝ սեղանէն վերցուած դանակին հետ խաղալով:

Աղմուկը ներս բերաւ սպասուհին: Մխօ միւս դանակը հրեց նապոյի կողմը: Գամփուր խլացուց իր մոլտոցը: Սուլէյմէն Ծուատ հայեացքը սեւեռեց սպասուհիին տաղնապահար աչքերուն, նայեցաւ պատուհանէն դուրս, վանեց երեսին զարնուող թէյին շոգին, բացաւ սեղանին ծայրը դրած կաշիէ պայուսակը, հաշուեց դրամը ու յանձնեց օրավարձքերը, ամբողջութեամբ:

Դուռէն դուրս ելած ատեն, ճորճ սպառնաց.

— Եթէ Երկուշաբթի չերեւիք, միւս գործաւորներն ալ հոս պիտի բերենք...

Դեռ զատիթափր չէին կիսած, երբ Գաթ ընկերներուն ցոյց տուաւ Սուլէյմէն Ծուատը, որ ձիուն վրայ բազմած՝ կը շտապէր քաղաքին արեւելեան կողմը:

Ծուկային վրայ նոր անակնկալ մը եղաւ նապոյի եղբորը երեւումը:

— Ո՛ւր մնացիք, Բօն, եղաք, ամէնուն աչքը ձեր ճամբուն մնաց, — սկսաւ ան իրարանցումով:

Մխօ ամփոփեց պատմութիւնը:

Նապոյին նոր զգեստ մը գնելու միտքը պարզուսած էր եղբորը: Կատարեց յիշեցումը:

— Ես հագուստ չեմ ուզեր, — ըսաւ Նապօ դէպ:

— Ինչո՞ւ:

— Ձեմ գիտերս: Ձեմ ուզերս: Դրամ ալ չեմ ուզեր, ա՛ռ, — ըսաւ դառնութեամբ եւ երկարեց թղթոսկիները:

Ընկերներն ալ բաներ մը պիտի առնէին: Մեղմեցին իր դժկամութիւնը: Առաջացան դէպի վեր: Նախ՝ փուռէ մը ծոթրինով հաց գնեցին, կերան եւ ապա մտան հագուստեղէնի նեղիկ շուկան: Ամէն մէկը բան մը գնեց, շապիկ, տաբատ, բաճկոն: Միտն ցոյց տուաւ ցուցափեղկի մը մէջ փայլփլող զգեստ մը, շագանակագոյն, սեւին տուող ուղղահայեաց ակօսներով: Մտան ներս: Փորձեցին:

— Կարծես վրադ ձեւուած է, Նապօ, — ուրախացաւ ձերձ:

Եղբայրը վճարեց փոխարժէքը ու շտապեցին գիւղ: Տուն մտած պահուն, Նապօ վայրկեան մը շմեցաւ մնաց: Իկիտին կինը հոն էր, Գլխակին Վերժինը հոն էր, նախկին ուսուցչուհին, աղջիկը, Մերունը: Ամէնքն ալ ուրախ: Ըսին պատճառը: Իրենցմէ առաջ, Խալիլ եկած ու Գասիւր Միմոնի տան մէջ վճարած էր ըստ օրավարձերը:

— Պարապ տեղը մինչեւ Զահէ գացիք, Նապօ, — ըսաւ նախկին ուսուցչուհին:

— Առաւու նորէն գործի պիտի երթանք, — ըսաւ Իկիտին կինը ուրախ:

Նապօ բան չէր հասկնար լսածէն, չէր ուզեր հասկընալ: Զրացաւ բերանը:

Ուրիշներ ալ եկան աչքի լոյսի, ծանօթներ, ազգականներ: Կարծես կորսուած ու գտնուած մէկը ըլլար: Անոնց ներկայութեան, քոյրը բացաւ փաթաթուած իրը ու մէջտեղ հանեց նոր զգեստը, ակնախաւիզ, վրան հաճելի ռոյր մը: Ծնորհաւորեցին, այս հին՝ հազարը նոր ըսին, ըրին ուրիշ մաղթանքներ ալ, զեղումով, աւելի մեծ շահերու, անստուեր երջանկութեան: Բարի պալուստի եկածները ուրիշ նորութիւններ ալ հաղորդեցին, ուրախ, տըխուր: Նապօ աւելի ետք պիտի իմանար տխրագոյնը, Մարուէն, որ յուզումով նկարագրեց իր բաժանումը Նինայէն, նախորդ առտու, երբ մեկնած էին քաղաք, հոն շարունակելու իրենց կեանքը: Մարոն ծանօթ էր Նինայի եւ Նապոյի ակնթարթային հանդիպումին, Նինային հետաքրքրութեան, Նապոյին խուսափումին, Մարոն գիտէր, որ Նինան շատ կը սիրէր չար տղաքը, Մարոն ուրիշ բան չէր գիտեր, Նապոյի աչքերուն մէջ պիտի չտեսնէր նաեւ, որ աշխարհ մը փուլ եկած է ու կանգուն մնացած աշխարհը տարբեր աշխարհ է, ուր Սուլէյմէն Ֆուատներ կ'ապրէին, խորթ-խորթ խրինջացող ձիեր, բարկաճայթ գամփոներ, առնէտներ, տարբեր հոտեր, անթափանց մութ...

Երեկոյեան, քոյրը սպիտակ կտորով մը պատեց նոր

զգեստը ու կախեց տան ճախակողմեան պատին ամրացուած կեռէն: Անիկա հոն պիտի մնար մինչեւ վերամուտ:

Բացուեցաւ դպրոցը:

Առտու՝ մայրը թելադրեց աղջկան վար առնել նոր զգեստը:

— Տե՛ղը թող մնայ, — ճշաց Նապօ անկողինէն:

— Ինչու, տղա՛ս, — հարցուց մայրը կոտրած տրամադրութեամբ:

— Չեմ գիտեր, չեմ ուզեր:

— Ո՛հ, նոր հագուստով պիտի երթաս դպրոց, — պնդեց քոյրը:

Իր նորոգուած ցաւերէն մղուած՝ Նապօ վեր ցատկեց, առաւ սովորական հագուստը վրան ու նետուեցաւ դուրս:

Նապօ չկրցուէր հաշտուիլ նոր զգեստին հետ: Ինքզինք անոր մէջ պատկերացուցած ատեն, իրեն այնպէս կը թւէր, որ պիտի լսէր ձիւ մը խրխինջը, զամփռ մը պիտի հաջէր վրան, կծու հոտեր պիտի խուժեն անոր ծալքերէն: Հին հագուստին մէջ աւելի լաւ էր, իր բոլոր ընկերներուն պէս, հպարտ...

Ծնունդին՝ մայրն ու քոյրը նորէն մէջտեղ բերին նոր զգեստին հարցը:

Նապօ միւս կողմ դարձուց գլուխը:

Գարունը տարբեր չունէր մը բերաւ ամէնուն: Գաթին մայրը առողջացաւ, Մխոյին հայրը յաւ գործի մը մէջ մտաւ, Ճըրճ սկսաւ անդիաջինքուն մօտ աշխատիլ: Նապօյի դպրոցական ընկերներն ալ լաւ տրամադրութեան մէջ էին, կը խօսէին գատակական իրենց նոր հագուստներուն, կօշիկներուն մասին:

Այս անգամ Նապօ ընդառաջեց մօրը բաղձանքին:


Վար առին նոր զգեստը:

Բաճկոնը նեղ եկաւ վրան:

Տարատը՝ աւելի նեղ:

Նապօ մեծցած էր...

ՊՕՂՈՍ ՄԱՍԳԵԱՆ



Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

Ի Ն Տ Ր Ա

ԲՆԱԶԱՆՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

(Հատուած) (*)

Արեւմտահայ մշակույթը չունի զուտ փխրոտական ամենգութիւն մը. սակայն, կարելի է եւ անհրաժեշտ՝ վերացականացումի պրոցնսով մը վերբերել իր իմացական ենթակառոյցը, ոչ-իմաստասիրական գրականութեանն զտելով եւ համադրելով իմաստասիրական տարրերը:

Մշակույթին իմացական ենթաշխարհը վերականգնելու ուղղութեամբ աշխատանքներ են Գ. Գ. Գալաֆեանի եւ Շ. Թ. Պէրպէրեանի իմաստասիրական գործերուն ընդունումը, բայց Պոլիսէն ետք, մասնաւորաբար վերջինին մտածողութիւնը ինքնուրոյն արժէք մը ներկայացնելու կողքին եւ ասկէ աւելի՝ ցոլացումն է իրեն ծաղում տուող Համայնապաշտ դպրոցին, որուն մեծ եւ ինքնակուլ ալիքն է Խնտրայի «Ներաշխարհ»ը: Ընդերկրեայ խոռվէնեբու գազաթում մըն է այս երկը, մակերեւոյն շատ բարձր, եւ հոնկէ՝ ողորակական զանազիւ մը զէպի մթին ու ցնորական յատակը: «Ներաշխարհ»ը չի յաջողիր լրացնել իմաստասիրական երկի մը համար անհրաժեշտ պայմանները, միաժամանակ, հեղինակին իմացական ուժականութեան շնորհիւ՝ կը ստեղծէ ինքնուրոյն սեռ մը, իմաստասիրական գրականութեան սահմանակից, եթէ ոչ անոր պատկանող:

Իմաստասիրութիւնը Զրաքեանին համար ենթակայական գիտութիւն է, որ զկը ձեւանայ խորին նախնայ, իբրեւ անոր զտեսակ մը բանաձեւումը եւ հաստատութիւնը, ուստի եւ արդարացումը: Որքան «ենթէն» ըլլայ այդ փիլի-

(*) Յօդուածը հատուած մըն է Զրաքեանի մտածողութեան մօտեցումն ուսումնասիրութեան մը՝ «Իմացական մտածումն «ճշտի մտածում»», որ իր կարգին մաս կը կազմէ տղայագրութեան տակ հատարի մը՝ «Ենթէն արեւմտահայ մտածումն»:

սոփայութեան աղբիւրը, այնքան հաւանական եւ բնական է, որ ընդհանուր ըլլայ եւ հետեւեալ. եւ փիլիսոփային ուրիշ բան չի մնար ընել բայց եթէ ապրիլ զայն համարձակ»(1), ունենալ արտակարգօրէն մեծ գաղափարներ, եւ տակաւին շարունակել ապրիլ իրրեւ սովորական մարդ: Իրեն համար էականը փիլիսոփայական գիտութեանց առարկայականութեան հերքումն է. հիմնականին մէջ, հակա-իմացապաշտական այս կեցուածքը ընդհանուր է բոլոր համայնապաշտներուն: Ձրաքեան շատ յստակ կերպով կը սահմանէ իր դիրքը՝ հետեւեալ ձեւով. — զիմաստասիրութիւնները, որքան տիեզերքի դրուածքեան անաշու առարկայական ցոլացումն ըլլալ յաւանդին, կամ դրապաշտութեան պէս՝ լուկ զգալարանապէս, ենթակայական՝ բայց բնախօսարար ու բարօրապէս ենթակայական են միշտ, քանի որ իմաստասէրն անհատ մ'է»(2): Ուսումն, անհատը, շնորհիւ ընդհանրականին հետ իր ունեցած զգէմյանդիմանական» յարաբերութեան՝ կ'ըլլայ չափանիշը տիեզերական ճշմարտութեանց: Այս մեկնակէտէն՝ Ձրաքեան իր բնազանցութիւնը կը կատուցէ երկու սկզբունքներու վրայ. —

— Մասնաւորութիւն, որ յատկանիւն է անհատին կամ նիւթին.

— Ընդհանրականութիւն, որ էութիւնն է Անհունին, այսինքն՝ իսկու-

թիւնը Հոգիին: Այս երկու սկզբունքներուն կամ դոյութեան կերպերուն միջեւ յարաբերութիւնը մեքենական չէ, ոչ ալ՝ տրամաբանական. ուրիշ խօսքով՝ այս սկզբունքները թարգմանելի չեն պղատոնական կամ արիստոտելեան բնազանցական սկզբունքներուն: Առհասարակ կարելի չէ իր կեցուածքը առընչել որեւէ ուղղութեան:

«Մարդը, — կ'ըսէ, — փոխանցում մ'է ձեւէն դէպի իմաստը... Թիւէն դէպի Անհունը, Իրականէն դէպի գաղափար»(3): Մարդէն Անհունին այս փոխանցումը՝ շարժումն է մասնաւորականէն դէպի ընդհանրականը, յաճախ՝ ձգտում մը եւ մաքառում մը: Ձրաքեան հիմնական սխալ մը կը գործէ, երբ գոյութեան մարդկային կամ նիւթական կերպին իր վերադարձ հոգեբանական բովանդակութիւնը կը նկատէ անոր բնազանցական դիրքին յատկանիւնը: Անհատին մասնաւորութիւնը կ'ըլլայ դոյութեան աշխարհի՝ կերպ մը, որմէ ենթական կը փորձէ յարատեւօրէն ձերբազատուիլ: Մասնաւորութիւնը ցաւի բնազանցական պատճառ է, մինչդեռ, ընդհանրականութիւնը երանութիւն է. «Ներքոյն խորհրդին չորրորդ գլուխին խորագիրը կ'առաջարկէ՝ «Ընդհանրականութեան Երանութիւնն ու Մասնաւորութեան Գաւը»:

Ձրաքեան երկրորդ սխալը կը գործէ, երբ մարդու գոյութեան կերպին հոգեբանական բովանդակութեան բնազանցական կլիբ տալէ ետք, կը դառնայ եւ մարդուն տառապանքները կը վերադրէ այդ ի'ր առաջարկած բնազանցական դիրքին. այսպէս, կը ստեղծէ փակ լըջանակ մը՝ չփոթելով պատճառներն ու արդիւնքները:

Անհատը, կ'ըսէ, կը տառապի նիւթական կեանքին յատուկ պատկերներուն բազմութենէն, կը յղչի անոնց «նիւթական կերպարանաւորութենէն», «բայց յաւանդութենէն»: Մարդը կը ձգտի «համադրելու մասնաւոր պատկերները ընդհանուր յղացումներու մէջ, ինչպէս համաստեւածութեան, միաստեւածութեան, ամէն ատեններու աստեւածագիտութեանց մէջ: «Աստեւածութիւն մը՝ ինչ ալ կոչուի՝ Օսիրիս, Պրահմա, Բաւաղ, Եւրոպա, Ձեւս, Աստուած՝ ամէն բանի ընդհանրութիւնն է»(4):

Ձրաքեան կրկին կ'իյնայ տրամաբանական սխալի մը մէջ, երբ խառն կերպով կը մէկտեղէ միսթիք սկզբունք մը, փիլիսոփայական սկզբունքի մը հետ՝ (ընդհանրականութեան), եւ այս երկուքը՝ կրօնական սկզբունքի մը

Հետ՝ Առտուծոյ դազափարին տարբերակներուն, եւ ամէնքը՝ Հոգեբանական պահանջի մը՝ ձերբազատուելու պատկերներու բազմաւորութիւնէն: Ինքզինքին իրաւունք կու տայ բոլոր աստուածութիւնները պարզապէս զընդհանրութիւններէ կոչելու:

Կը մերժէ ընդունիլ դրապաշտութիւնը, որովհետեւ չի կրնար մարդը Հասցնել ընդհանրութեան այնպիսի՝ սկզբունքի մը, որ Նիրվանան ըլլայ բոլոր գրկեալներուն: Կը փնտռէ ձիապաղաղ ընդհանրութիւն մը, որուն երկինքը կրնայ ըմբռնուիլ Հոգիէն», Թերեւս «ոգեպաշտներուն պատմած մահն է այս» կ'աւելցնէ: Մինչ այդ, սակայն, կը տրամի, երբ չի սահմանը կամ սահմանաւորութիւնը կը տեսնէ ամէն բանի մէջ: Գիտակից՝ իրերուն ետին պտնուող միասեռ ընդհանրականութեան, շատ անգոր կը գտնէ իր անեղբուն Թեան բնազդայական ծոյցը, որովհետեւ երբեք պիտի չկարենայ Հասնիլ Վարտաշարհին իրերուն յետին եւ ճիշդ ընդհանրութեանը, եւ անոր խաղաղութեան մէջ Հանգչեցնել իր միտքն ու Հոգին(5): Զրաքեան իր բնականական սկզբունքներուն հիման վրայ կ'ուզէ բացատրել կրօնքներն ու արուեստները: Համադրական այս կեցութեանը կը յատկանշէ բոլոր Համայնապաշտները. Իրենց աշխարհահայեցողքը կ'ըլլայ միաթանանակ կրօնական, արուեստագիտական, բարոյագիտական, իմաստասիրական եւ, իրեն աւելցնելով, այս աճհոնէն՝ տրամաբանական:

Ինչպէս որ յիշատակեցինք վերը՝ մարդուն եւ Անհունին յարաբերութիւնը մեքենական չէ, այլ՝ հոգեբանական ճիշդ մը, պրոֆիքսան ժեսթ մը: Այս յարաբերութիւնը բացատրելու Համար տալիքով օրինակը՝ խնթին եւ Հանճարին, չի յաջողիր հիմնաւորել իր վարկածը: Հանճարը եւ խնթի, կ'ըսէ, դոց են արտաշխարհին: Փոխարէնը՝ բացուած տարբեր աշխարհի մը, Հանճարը՝ ընդհանրականին, խնթի՝ իր ցնորական ներաշխարհին: Հոգեբան մը պիտի մտածէր, Թէ Զրաքեան ուզած է ձեռով մը արդարացնել իր դառածութեան, շփոթը եւ անասնիկ տապնապնորք. իր արտակենդրոն ընթացքը եւ անկարողութիւնը՝ որդեգրելու բնական վարուելակերպ մը, փորձած է ներկայացնել իրեն Հանճարի կնիքը, կամ Քրիստոսի սպինն, Քրիստոսի զինքնէն: Տէմիոհիպաչեանի, Պատէռի, Նիցչէի, Ռուսոյի պէս Հսկաներ Վարուրդ զուգործութիւն վրայ կեցած, քայքայուած, տեսիլ մը պատժուած հերոսներ են, իր կարծիքով: Այսպէս, տիրութեամբ կը յիշեցնէ զմեծանուն Հոյը յիմարացած Հանճարներուն, որ աստիճանական կամ յանկարծական անհաստատարկութեամբ մը տատանած իմացականութեան մը բեռին կրցած չեն տանիլ, տժոյն առնաներ. եւ անոնց Հոյակապ փրատակին տակ անհայտ են — դիւցազնական Հոգիներ, խուլ Հսկայամարտի մը մէջ իրենց աստուածայնութիւնէն տապալուած(6):

Հանճարը, Թէեւ սովորական անհատ մը, սակայն իր դէմ յանդիմանական ճանաչողութեամբ կը յաջողի անդրանցնել մասնաւորական մոկարդակը եւ ըմբռնել ընդհանրական մակարդակը եւ անոր ճշմարտութիւնները: Հանճարը կը փնտռէ անեղբունութիւնը, ճշմարտութեանը կը սիրէ Գեղեցիկին մէջ, եւ Թերեւս՝ Գեղեցիկին պայմանաւ(7): Սրէնքը՝ զոր Հանճարը երբեմն կը յաջողի զօրսալ, տիեզերքի Միտքը՝ Բանը, Լոկոսը չէ. այլ՝ գոյութեան վիճակ մը, ապրում մը, անբացատրելի պահ մը միութեան կեանքէն: Զրաքեան չի դադարիլ յիշելէ բոլոր այն ժամերը, որ «Անեղբունութիւնը կը յիշեցնեն», տրտում բանաստեղծ մը ինք՝ որ «կենսապայքարէն վեր՝ կեանքին մեծ գրկեալը կը մնայ»(8):

Բ.— ԸՆԴՀԱՆՐԱՍՊԱՆԻՆ ՄԷՋ ԹԱՓԱՆՑՈՒՄԸ

Ձրաքաննի բնագանցութեան մէջ շարժումը կը ստեղծուի մասնաւորապէս ձգտումովը զէպի ընդհանրականին ուղղուած։ Ընդհանրականէն մասնաւորականը շարժումը կ'ընդգործուի կայուն ուժականութեամբ մը։ Անհունը ներկայ է, եւ այս ներկայութիւնը իր անպնդանութեամբ կը բովանդակէ տիեզերքին կեանքը, կը մազնխացնէ մարդուն գործունէութիւնը։ Անհունը ներկայ է բնութեան բոլոր էրեւութեան մէջ, բայց խորհրդանշականօրէն։ Ուրեմն, բնութեան մէջ իր յայտակարարութենէն կ'ըլլան իր Յայտնութիւնը, եւ այս իմաստով՝ կրնան նկատուիլ Անհունին կողմէ առնուած քայլեր զէպի մարդը։ Ձրաքաննի՝ ինչպէս նաեւ բոլոր միաթիշներուն համար, իրենց ձգտումին առարկան կրաւորական չէ։ Լոյսը իր լուսեղութիւնը կ'արտազերզուի։ Հողին իրբեւ արտազերզում մը այդ լոյսէն՝ կ'ըսէ նոր-պղատոնականութեան հիմնադիրը՝ Պլատոնոս, կ'ուզէ վերադառնալ իր աղբիւրին։ Ձրաքաննի համար Անհունին զգայնութիւնը մարդուն մէջ կը վերածուի աստուածային գոյութեան դիտակցութեան։ Մասնաւորականէն ընդհանրականին ձգտումը կ'ըլլայ աստուածային ափսոսանքով զործունէութիւն մը։

Ձրաքաննի իր տեսութիւնները երբեք չէ մշակած, իր ամբողջ մտածողութիւնը այս անպնդանութեան հետեւանքով մնացած է ուրուագծային վիճակի մէջ։ Նոյն ճակատագրին ենթարկուած է նաեւ բնագանցութեան ամէնէն կարեւոր երեւոյթ՝ մասնաւորականին յատուկ կերպերը Ընդհանրականին մէջ թափանցուելու։ Վերադարձին կատարեցէն կարելի է յատկանշել հետեւեալ չորս ուղեգծերը։—

1.— Գործօն-դրական կերպեր

ա.— Սէրը՝ Անհունէն ընծայուած էական կամ իռնային։

բ.— Քաւութիւնը՝ աղօթքով եւ զղջումով։

2.— Կրաւորական-միտական կերպեր

ա.— Մահը՝ բնական կամ բանգով — (Ոգեպաշտութիւնը Ձրաքաննի մօտ)։

բ.— Թմբուցութիւնը՝ ալքոլով կամ հաշիշով։

1.— Գործօն-դրական կերպեր

Ձրաքաննի խառնուածքին ու առհասարակ ամբողջ դրութեան մէջ զրապան տարրերը կը խառնան Սիրոյ եւ Քաւութեան իմացներուն մէջ։ Երկուքին ալ պարագային, սակայն, պէտք է դանոնք պարպել բարեբուն ընթացիկ իմաստէն եւ փոխարէնը տալ հեղինակին աշխարհաստեղծութեան պարտադրած իմաստն ու դերը։

ա.— Սէրը՝ Անհունէն ընծայուած էական

Սէրը թէեւ նիւթականօրէն պատկերացուած՝ իռնային տիպարին մէջ, սակայն, խորհրդանշականօրէն, Անհունին կողմէ ընծայուած էական ձգտումն է։ Այս մասին աստուծոյ խաղի է գտնել Ա., Բ. եւ Ը. գլուխներուն մէջ։ Մովսէսի իմաստն էական ընծայումը հերոսին, իր միաթիւք փորձառութեան լրումը կը նշէ։ Երկար եւ ցաւալին սպասումէ եւ մաքառումէ ետք, Ան-

փնտռած խոհալ կացութիւնը: Վերջին գլուխին վերջին էջին վրայ նկարագրուած Իռնան կին մը չէ, այլ՝ «չոճիկին բարձունքէն առկախ... լուսնդէն թափունցիկ, արփային... լուսնադիւղէն հրակերտուած Կոյսը... Եխասփիւռ... ամպագոյն... հողեղինութեան բոլոր երկնայնութեամբը զուտ ու զերծ, այնպէս ինչպէս որ դոյացած է հողիէն — ի՛ր», ինչպէս որ բխած է Աստուծոյ Հոգիէն...» (21):

«Ներաշխարհային վերջաւորութեան Ձրաքեան կ'ուզէ ձգել այն տպաւորութիւնը, թէ դիտէ իր անդրատեսչութեան խոհալը եւ զայն իրադրոճելու մէջը: Սէրը կը թուի ըլլալ ամէնէն կարճ ճամբան. սակայն, վերջին տեսարանը անպայմանօրէն եզրափակելէ մաս չէ: Երբորդ գլուխին, գինեւան տեսարանին մէջ, իրեն համար արտասովոր համեմատութեամբ մը Ձրաքեան տեսակ մը հաշուեկարգարի կը նստի ինքզինքին հետ: Կը փնտռէ սահմանում մը իր անդրատեսչութեան առարկային համար: Օղիի բաժակին դիմաց, չընչեղով ալքոլին «կիզանուտ լուսնութիւնը», կը զգայ, որ «կեանքը, — տենչացողութիւնը կ'ստէ՛ր իր մէջը» (22): Այդ տեսչանքը «կը կլանէ ամբողջ իմացականութիւնը, ձգտումներու խառնիճաղանճ մը կայ իր մէջ, «կարծես համարապէս բանի մը կը հաւատամ, — կ'ըսէ, — ի՛նչ բանի, ով դիտէ... Տարտամօրէն ընդլամարուող, բայց հողեւին սիրելի, անպատում բան մ'է որու կը ձգտիմ: Միթէ Իռնան չէ՞... — Միթէ է՛ս իսկ չեմ անիկա: Ե՛ս, զոր միայն ըլլալ կը տեսնամ, վասնզի միտքս իր իրադրոճումն, իր անհարկին իրականացումը կ'ուզէ, — կեանքը անպայման, անկաշկանդ: Եւ կամ միթէ Անհունը չէ՞՝ այն անպատում ու նշուլող համարողութիւնը, որուն կը տարուիմ հոգիին: — Ա՛հ, ասոնք միանգամայն չէ՞՝ անիկա. եւ միեւնոյն բանը չե՛ն միթէ, միեւնոյն երազը...» (23):

Ընդհանուր անբաւարարութեան զգացումը՝ հոս արտայայտուած ձեւով առնուազն ենթակայական երեւոյթ մըն է, նոյնիսկ՝ իր խառնուածքին կազմած կէտերէ: Կարելի է Ձրաքեանը նկատել չափանիշները կորսնցողած դասակարգի մը ներկայացուցիչը, մէկը՝ որ յուսախար ընկերութեան բովանդակազուրկ խոհանրութիւն կ'իյնայ երազարարչութեան մէջ: Կարելի է նաեւ հողեւանական պատճառներ հայթայթել նման վիճակներու ետին. մեզ հետաքրքրողը, սակայն, նման վիճակներէ ծագում առած իր աշխարհաւայեղութիւնն է:

Բ — Փաւսթիւնը՝ աղօթքով եւ զգումով

«Ներաշխարհային հինգերորդ գլուխը, ոճի տեսակէտէն առնուազն, նաբեկեան վարժութիւն մը եղած է Ձրաքեանին համար. այս գլուխը, եւ մասնաւորաբար կիրակիօրէն, գիրքին համար ձեւական առաւելութիւններ հայթայթած են՝ պարզեւելով խաղաղութեան պահեր: Հետազային, ինքնաքընդհապաւանին մէջ՝ 1906ին գրուած, կը մերժէ աղօթքի, զղջումի եւ քառութեան տրուած կարեւորութիւնը. առհասարակ չ'ուզի առընչել կրօնը բարոյականի հետ. բարութեան զգացումը իր ներշնչումը կրօնէն առնելու պէտք չունի: Սակայն այս ուշացած սրբագրութիւնը չի հասնիր իր նպատակին. որովհետեւ այն՝ ինչ որ ինք «կրօնական» կը նկատէ, «Ներաշխարհային մէջ գոյութիւն չունի. հոն գտնուած Աստուծոյ Աստուածաշնչին չէ, ոչ ալ փոքրիկ հասարակական սկզբունք մըն է. «Ներաշխարհային լրջանակէն ներս քառութեան եւ զղջումի տարածումներն ու խօսքերը կատարելապէս ներգաշնակ են գործին ներքին արամարտութեան հետ. «Անհունին զգայնութեամբ Փաւսթեան բաղձանք»՝ թէնէ քիչ մը հոստորական, բայց անկեղծ զգացում մըն է. հերոսին՝

digitised by A.R.A.R.®

ինտրային մէջ, բացառապէս կրօնական հակումները անհամեմատ կերպով կ'աճին շաբաթապահ-բարոյգիւծին հետ: Երբեմն անկեղծ, նարեկեան կեցութեամբ ներուժն պղտոր մըրուովը կը սնանի Զրաքեան տարիներ ետք:

«Ձհակցութեամբ բաներու վրայ մտախորհելու... մանկութեան տունի պարզամտօրէն ստացութեամբ հիմնակէտերու վրայ այժմու թախծութեամբ եւրագելու» (24) համար է, որ կ'երթայ եկեղեցի, երբ իր ներկային կիրակիները լիցուն են ձանձրոյթով, եւ «կիրակմուտքին զանգակը մըլա հնօրեայ վաղորդականին երանութիւնը կը պատմէ տակաւին» (25): Եկեղեցին այլաշխարհ մըն է արտաշխարհէն յոգնածներուն համար. ապաստանարտն մըն է, ուր կ'երթան, մանաւանդ կիրակմուտքին, բոլոր անոնք՝ որոնք «Աստուծոյ փառքէն աւելի անոր բարութիւնը կը սիրեն, ու պաշտումներու հարկադրած հեռուորութիւնէն աւելի կը սիրեն այն ժողովուրդները, զոր վստահութիւնը կ'արտադրէ» (26): Իսկ հերոսը կ'երթայ «Անոր վրայ խորհելու տիեզերական պէտքով» (27): Եկեղեցիի «զաղափարը» իր մէջ «կը խտանայ, կը ձուլուի, կը ներկայանայ յանկարծ՝ անթերի, ամբողջ, տիեզերական ընդհանրութեանը մէջ երգին, որ կ'ըլլէ կը լիցնէ անջրպետը... եղկելի աշխարհայնութիւնը սարսուռելով...» (28):

Զրաքեան ընթերցողը կ'առաջնորդէ եկեղեցիի այնպիսի հակացողութեան մը, որ իրողութեան մէջ «նշաշխարհ» յատուկ խորհրդանշիչ մըն է: Այդ զաղափարը կամ խորհրդանշիչ իրեն կը ներշնչէ ճանորդ, անտեսիլ զգայութիւններ, յաւիտեանական բաներու խուշ հեռագայնութիւններ... ճշմարտութեան դէմ մարմնաւորութեամբ թանձրափակուող խղճին ամէնէն թշուառ որբերէն հծծուած»։ Կը տառապի Քրիստոսի զերմարդկայնութեամբ՝ «ինչո՞ւ կը հալածէ դիւ, ո՞վ Քրիստոս, կատարելութեանդ մղձաւանջը», կը զօնէ: Կը մեղադրէ իր ճանձիտ Եսը, որ կը մնայ անհասական, հակառակ իր ծաղման ընդհանրականութեան»։ Իսկ Քրիստոս Ան է, որ «Ըն շուին, որուն Եսը մարդկութիւնն է, Ամէնը» (29):

Աւելի զան հինգ էջերու վրայ Զրաքեան կը գեղու նարեկեան ոգիով քաւութեան եւ զշնամի աղօթաշունչ խօսքեր: Կը փնտռէ աստուածային տեսիլը, հանդիպումը. եթէ միայն տեսնէ՞ր Որդին «աղօթքի, ինքնաբաւական պահու մը մէջ», պիտի մեռնէր, որովհետեւ այդպիսի փորձառութիւնէ մը ետք, վերադարձը կեանքին, պիտի ըլլայ անկում մը: Կը դրէ՝ «Զինքը եթէ տեսնէ կանգուն, կատարելութեան, ամենակալութեան քաղցրութիւնը, լուսեղէն կամ մեցողութիւն, բաղկացած, լճացած կամեցողութիւն, բարոյականի սիրոյ մարտկոցումը, շանթակաւոր այլ փայլակներու սիրտը, իր ճշմարտապէս լուսարձակ անձին անխմանալի ու անյաղենալի բարեքը: Անեղբորեան բոլոր անպղծելի կուտութիւնը՝ ներամբը այրող իր ակնարկին մէջ», այս ներկայութեան մէջ «նեխման իրականութիւնը կը ցնդի ցնորքի մը պէս» եւ նեխումը կը փոխակերպուի աղօթքի (30):

Քրիստոսը կը սահմանէ իրեն զարփային անխմանալի վիհերու միահամուռ կեդրոնացմամբ ցնորակերտութեամբ Գերամարդ, Տիեզերքի մշտնջենաւոր թրթռումը միակ տրոփի մը մէջ կը լռութաւորութեամբ, Տիեզերքի օրէնքը՝ Տիեզերքի Որդին հղած»։ Ապա՝ չկարենալով տանել ապրելու ճշունքը կամ «լուալ ետին ամօթը», կ'ուզէ մեռնել Որդիին համար (31): Ասեղով ամէն աշխարհայնութիւն, մոլեղնօրէն կ'ուզէ մեռնել: Քրիստոսը կ'ըլլայ «փրկութեան, վերականգնութեան զաղափարը», զոր կ'ուզէ պահել իր մէջ, զայն «հծծել» իր «մարմնաւորութեան հետ» (32):

Քրիստոսի, Անհունի, Հոգիի, Գերմարդու իմացեանքու այս մէկտեղութեամբ, եւ ասոր հետեւանքով ստեղծութեամբ չփոթը իրողութեան մէջ գոյութիւն

ունի Զրաքեանի մտքին մէջ ալ՝ իր անդրադարձութեան խաչալը՝ բոլոր միաթիւներուն խաչալին նման՝ անկարագրելի, անասելի բան մըն է։ Իսկ քաւութիւնը պարզապէս կերպ մըն է ընդհանրականացում, ձերբապատուելու մարմնականութենէն եւ անոր կաշկանդումներէն։

Քաւութեան վիճակէն Մահուան զաղափարին անցնելէ առաջ, Զրաքեան քովնտի, երկրորդական խորհրդանիշ մը կը ներմուծէ հոս, իր մեռած հօրը յիշատակը՝ եկեղեցի եկած, թաղին ճարտարապետ ծերունիին նայուածքով նորոգուած։ Կը զգայ Հին ճանձկութիւնը, որ հօրը «ենթակայական նշանն է» (33)։ Ծերը եւ անոր մէջէն հայրը կը նային իրեն այնպէս՝ ինչպէս որ ան կը նայէր իրեն, երբ կը պատժուէր. «սոսկալի, կակծալի» նայուածք մըն է այդ, որմէ խոյս կու տայ, որովհետեւ ճայդ նայուածքը [զինք] պատժել է սեզներ։ Այդ ճանուածքին ծերութեան ու ալքոլական արտայայտութիւնը յարատեւ տանջածութենէն է հօրը ճառաքինականութեան» (34)։

Հայրը իր խարազանն է, իր պատիժը՝ որուն ընդունումով քրիստոնէաբար կը կրէ արժանի «տանջանքը» եւ «քաւութեան սփոփանքը» (35)։ «Հայր, խիղճ քու գերեզմանէդ քղիւնցաւ, ինչպէս հողակոյտիդ վրայ ծաղկած տառասկը», կ'ըսէ, ուրեմն, հօրը պատկերին վերադարձը եկեղեցիին մէջ, հերոսին խղճին վերականգնումն է, քաւութեան պատճառը։ Այս պահը կ'ըլլայ մահուան պատրաստութիւն մը՝ աշխարհայնութենէն հրաժարումով (36)։

Եկեղեցիէն վերադարձին, սենեակին, այսինքն՝ իր կեանքին աւելորդաց դառնութեան, առաջին բանը, որ իր ուշադրութիւնը կը գրաւէ ծաղկածանի մէջ, բանդի ճիւղն է. հողեւին կը տեսնէ «մահաբեր ծաղիկը», «վհայտի բոյսը», իբրեւ թէ անիկա ըլլար «յաւիտեանապէս տենչալի» բան մը (37)։ Եկեղեցիին մէջ՝ Քրիստոսի զաղափարին, ապա հօրը յիշատակին օգտագործումով, սփոփանքով եւ տանջանքով խառն քաւութեան տեսարանէն ետք, Զրաքեան ընթերցողը կ'առաջնորդէ իր «ննրաշխարհ»ին սմէնէն դառն փորձառութեան՝ Մահուան խորհրդածութեան։

2.- Կրտսերական-մխտական կերպեր

Հակառակ իր մէջ գոյութիւն ունեցող կարգ մը դրականութեանց, Զրաքեան միշտ չէ, որ կը լալոգի կառչած մնայ անոնց. յաճախ կ'ընկրկի յոռետեսութեան անդունդը՝ իբրեւ իրաւ սնուցիլիստ մը։ Կը հրաժարի աշխարհէն, կը դառնայ նոճիներուն՝ «Դուք, որ Նիւթին, Ռաւարին վերիտէանայութեան խառնուրդ մզումը կ'անձնաւորէք, սովորեցուցէք դառնալունը, ձեր գոթալաց երկրաժելումը... շնչեցէք, յաւերժօրէն, ընչական միջնադարը միանձնային, մեռելական այն արհամարհանքին՝ զոր աշխարհին համար ունի իր ինքնամոփ ու կուսական անջատումը երկրէն...»։ Պարզապէս կ'ուզէ հանդիլ, հանդիլեցնել իր «պատժապարտ մարմնաւորութիւնը» «տիեզերական քաւան»էն մէջ (38)։ Մահաբաղձութիւնը եւ կամ թմրութեամբ անկէ ժամանակաւոր հեռացումը կրտսերական եւ ժխտական գիրքեր են, որ կը պայմանաւորեն իր ամբողջ աշխարհաւանգնացքը։

ա.- Մահը — բնական կամ քանգով

Բանդը եւ անով ինքնաթունաւորումը՝ մահուան տանող տանջալից ուղին է։ Բանգով իրագործուած մահը «գարհուրելի» բայց «խրական» բան մըն է, մահաւանդ անհատին դիմագրաւումը այդ զաղափարին։ Բանգով մահաւան խորհրդածութիւնը «նորումով, քաւութեամբ, արբութեամբ կարծես լի-

ցուն անդրադոյն վիճակ մ'է... զոր անյուսութիւնը կը ծնին» (39)։ Մահուան ներկայութիւնը բանդին մէջէն կը մեծնայ, «կարծես թէ, — կ'ըսէ, — թուանաւոր ծաղիկ, իմ մէջս կ'աճիս»։ Գոյնաւոր դառնանալու, յանկարծ հաշտուած մահուան հետ, «համազոյական ամայութեան» մը մէջ (40) յանկարծ կը զգայ բարութիւն մը։ Կ'ուզէ առանձնանալ բնութեան մէջ, Աւետարանի մը էջերուն «յամբ շէրներէն հետ», ծառայել անցորդներու, որոնք մոռնային գինը. կը սքանչանայ աշխարհին գեղեցկութեան վրայ, կ'երազէ գերեզմաններու հանդարտութիւնը եւ երանի կու տայ անոնց, որոնք երկրին «ծոցը դարձած են»։ Ու տրեղելքին մէջ կ'արտայայտուի մեծարան մը կամ շիրիմ մ'ունին» (41)։

Ձրաքանին մահաանցումները մահուան բաղձանք մը ըլլալէ աւելի՝ կեանքին իրեն կենսապայքար՝ մերժումն է. «եբբ մտածման էութեան համաժողով կեանք մը չկայ բնու, կամ պէտք է անսնանալ կամ մեռնել» (42)։ Ձրաքանի կեանքը կը սիրէ, պայմանաւ, որ ան պատշաճի իր ծրագիրներուն եւ պահանջներուն։ Սակայն, սեփական դառնացումը կեանքէն կ'արդարացնէ մարդուն բնական ձգտումովը վերադառնալու իր աղբիւրին, Անհունին. իսկ բնադանցականօրէն՝ կը բացատրէ Լ'նդանթականին մէջ թափանցուելու տենչով։

Նիւթին մէջ սահմանափակուած կեանքը մերժելի է իրեն համար. նոճիները խորհրդանշներ առնելով՝ կ'ըսէ, թէ անոնք ալ «լատուարի վերջաւորութիւն մէջ... դատապարտուած նիւթերու մահկանացութեան ձգտումով դէպի լուսնանիւթ Յուսերթութիւնը» կը սլանան (43)։ Մեռած եւ վերածնած էակներու նմանցնելով զանոնք, կ'ուզէ, որ իրեն պատճեն հուսկ ճշմարիտ Հանդիսութիւն տալով խաղաղութիւնը» (44)։ Ձրաքանի բնութենապաշտութիւնը յաճախ բարի տրամադրութիւններ կը ստեղծէ իր մէջ. կը հաշտուի մահէն բանի հետ, նոյնիսկ մահուան հետ։

Սակայն, քանիով մահը երեւոյրականացած դունտի մը պէս կը բռնի իր դիտակցութեան, կը շարժարէ միտքը. կեանքի եւ մահուան փարատմանը կ'ուզէ լուծել լիբիոսփայական միջոցներով։ Մահը՝ բանդին զարշառ տրամաշնչութեան մէջ, եւ կեանքը՝ Սիրոյ, Խոնարհի բուրմունքաւորութեան՝ կը կազմեն միակ եւ անճշգիւթ սեռ մը, բան մը՝ որ միակ վախճանի մը կը տանի (45)։ Այս վախճանն է, որ կ'ուզէ բերել կեանքէն ներս. ուրեմն, «վախճանին անդրդուելի հարկաւորութիւնը՝ խոյացական ու տարտած կերպարութեամբ մը սահմանաւորուած, եւ կարօտ եւ բաղձախա եղած, արբիտ մենամուրութեամբ մը մեռելաօրութիւն եղած» (46)։

Վախճանին հարկաւորութիւնը՝ մահաբաղձին համար կ'ըլլայ հոգեբանական անհրաժեշտութիւն մը. մահաբաղձութիւնը անմահութեան բաղձանքն է, մահը կոմունիզմի մը՝ անոր առաջնորդող։ Ձրաքանին համար կեանքը որքան ալ լիցուն ըլլայ հոնհարով, կը մնայ աննպատակ, այնքան ատեն, որ անոր կը պակսի անմահութիւնը՝ իրեն նպատակ։ «Երբ անմահութիւնը երազ մ'է, կեանքը տեսահարութիւն մը» կ'ըլլայ միայն (47)։

Հերոսին զգրախաղութիւնը սենեակին, կամ կեանքին միութեամբանութեան մէջ բանի կ'ըլլայ հերձաղծուած, տեսահարութեամբ ցնորուած խաշ մը, «իտէալ» մը, «սենեակին տրտում իտէալաւորութեան մէջ» (48)։

Անմահութեան որոնումը իրեն յատուկ չէ միայն, այլ՝ քաղաքակրթութեանց ծագումէն ի վեր ամբողջ մարդկութեան. կոթողները այդ ձգտումին կան, անոնցմէ են բուրգերը։ Բուրգերը, Ձրաքանի կարծիքով, խորհրդաւորութիւններ են, որոնք կը պատկերացնեն մարդուն «մարմնաւորութեան» ազատազրութեան» «կոթողումը», «Անգղիոյ կեանք մէջ գէտի կէտի մը հիւսիսա-

թիւնը: Բուրգերը «աշխարհի հսկայական ու յաւերժական ոչնչութեան Գիտակցութիւնն» են, «Եւսեփեանին հայեցողութեան համար»(49):

Մահը՝ իբրեւ մարդուն ամբողջական ոչնչացումը, Զրաքեանին համար անտանելի հեռանկար է. առանց անմահութեան իմացքին, իր ամբողջ իմաստասիրական դրոյթը կը քայքայի: Հոգիին յաւերժութիւնը միակ ազդակը կը թուի ըլլալ, որ կրնայ իմաստ եւ բովանդակութիւն հայթայթել ո՛չ միայն մահուան, այլեւ՝ կեանքին ուլ: Անմահութիւնը սոսկական, տեսական անհրաժեշտութիւն մը չէ, ոչ ալ փոփոխիչի է ուրիշ տեսութեամբ մը: Էսքանական-հոգեբանական անհրաժեշտութիւն է ան, ուր սակայն կը խուսափին բոլոր իմաստասիրական փաստարկները: Փաստի հարցին պիտի անդրադառնա՞նք աւելի վարը, հոս անհրաժեշտ է մէջբերել իրմէ քիչ մը երկար պարբերութիւն մը՝ այս ուղղութեամբ իր դիրքը պարզող. «Կուզէի հասկնալ թէ կարելի է տիեզերքն ընդլնմարելէ ետքը զայն չընդգրկել անհուն, անթառամ տեսողութեամբ մը... Թեւեռը պազատողին տարածելէ ետքը՝ չտեսանիլ երբեք, անհրաժեշտութեան սրբութիւնը յղանակէ, հետազոյէ ետքը նեխելով կորսուիլ, բոլոր գիշերակութեանց բոլոր մեծութիւններուն մէջէն, սիրելի էակին մէջէն, ընդհանուր գաղափարներու անհաղթեան մէջէն Անհունութիւնը, ճշմարտութիւնը միայն սիրելի ետքը, սուտի պէս անհանալ... որոտողին, սարսուղին զկատուած կտնչելէ ետքը անգամ մը չընդլնմարել զայն զոնէ խոտուողէմ, զոնէ մերժող, կ'ուզէի գիտնալ թէ այս թշուառութիւնը, կարելի է, թէ ուրեմն այս թշուառութիւնը կայ միայն, այն ատեն, անհասանելի պէտք էր ճաշակել դեղ, մահուան գիշերակ ծաղիկ, եւ հրաժեշտ տալ կեանքին. «Է՛հ, մենք բարո՛ւյ, Աստուած եւ արեւ...»(50):

Ուրեմն, հոգիի անմահութիւնը փաստել՝ Զրաքեանին համար կ'ըլլայ անխտածելի անհրաժեշտութիւն: Ան բաւականաչափ տեղեակ է իմաստասիրութեան պատմութեան՝ գիտնալու համար, թէ դասական փաստարկումները այս ուղղութեամբ, անգլիական Փորձադաշտ (empiricism) դպրոցէն եւ Քանթի հերքումէն ետք, անընդունելի են: Ուրիշ խօսքով՝ կարելի չէ տրամաբանութեան կամ փորձի ընդմէջէն փաստել Աստուծոյ գոյութիւնը կամ հոգիի անմահութիւնը: Ապացուցելու համար հոգիին անընդհատ շարունակութիւնը, Զրաքեան մէկ միջոց կը գտնէ՝ ոգեհաւատութիւնը. դրսւապնեմ, կամ այսպէս կոչուած «փորձեր»՝ կ'ըսէ, պարզապէս դրապաշտական գէնքեր են՝ գործածելու համար բոլոր անոնց դէմ, որոնք կասկածի տակ կ'անոնն այդ հաւատքը:

Ոգեհաւատութիւնը, կ'ըսէ, փաստուած գիտութիւն է բազմաթիւ դէպքերով, կը յիշատակէ կարեւոր յօդուածներ. այս մասին իր բոլոր կարծիքները ամփոփուած են 1911ին գրած յօդուածի մը մէջ՝ «Ենայտնութիւն անդրաշխարհիւն — ուսումնասիրութիւն մը ոգեկանութեան մասին»(51): Հոն կը գրէ այդ «գիտութիւնը» առնչելով սեփական համակարգին, «Անդրին հետ հաղորդակցութեան» ամէնէն պարզ, դիւրին կերպն է այդ անմարմին էակներուն՝ ոգիներուն հաղորդակցութիւնը(52): Ուրեմն, իր քննադատութեան լրացուցիչ իմացք մը կ'ըլլայ ոգեհաւատութիւնը: Անդրին կամ Անհունին կամ Աստուծոյ հետ հաղորդակցութեան մէջ մտնելու ձեւ մըն է այս. մասնաւորական մարդը՝ ընդհանրականացած ոգիներուն հետ կը շաղկապուի:

«Ընթրաշխարհի»ն աւելի քան տասը տարի ետք գրուած այս անկումային յօդուածը պարզապէս փորձ մըն է՝ դոհացում տալու ձեր անմահելի պահանջին՝ մահէն վերջը նսին անկորուստ եւ ամբողջական տեւման ապացոյցները... տեսնելու իր կեանքին ընթացքին(53): Թողուածին վերջաւորութեան,

կը խօսի իբրեւ «Հոգի մը» կոտորելութեան հասած, ճառագեղական պաշտօնով իջած մարդոց մէջ, ի խնդիր անոնց հոգեկան փրկութեան(54): 1910էն ետք Ձրաքեանին մէջ շարաքաղաւ քարոզչի սկսած է պայմանաւորել իր մտածողութիւնը, տակայն, այս անկումին սերմերը զոյգութիւն ունին «Ներաշխարհին ատաղին էջերուն մէջ իսկ:

Հոգեհարցական գիտութեանց իր որդեգրումը, եւ անշուշտ շարաքաղաւ պահութիւնը՝ մէկ կողմէ անտանջանք եւ իր տարրալուծուած անհատականութեան, բայց միւս կողմէ՝ հետեւանքներն եւ անելի հասած իր իմաստասիրական համակարգին: Առհասարակ Ձրաքեանի կեանքը եւ մտածումը անբաժանելի ամբողջութիւն մը կը կազմեն. ինչպէս որ ինք կ'ըսէ՝ եթէ փիլիսոփայութիւնը «նսին բռնաձեւումն է», «հաստատութիւնը, ուստի՝ արդարացումը», ուրեմն իրեն ուրիշ բան չի մնար ընել, ինչպէս ամէն փիլիսոփայի՝ բայց «ապրել զայն համարձակ» (տե՛ս Ծ. Թիւ 1), ըստ իր ներաշխարհին Օրէնքին:

«Ներաշխարհին խաբխիւր հանդիսացող փիլիսոփայութիւնը ո՛չ միայն Ձրաքեանի նսին արդարացումն է, այլեւ՝ կեանքին ալ զապաթումներուն եւ անկումներուն: Իր սինալոյիզմն ալ ամէնէն վաւերական խորհրդանիշը կը գտնէ հերոսին մէջ եւ ինտրա-զերմարդը կ'ըլլայ ներաշխարհային վարդապետութեան մարտիրոսացած մարդարէն:

ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- (1) Տիրամ Ձրաքեան-Պարս, «Ներաշխարհ» (Ընտիր երկեր), Պարսկէ հրատ. (Պէյ-բուք, 1974, 319 էջ), էջ 55:
- (2) Նայթ, էջ 54-55:
- (3) Նայթ, էջ 86:
- (4) Նայթ, էջ 81-82:
- (5) Նայթ, էջ 82:
- (6) Նայթ, էջ 91-92:
- (7) Նայթ, էջ 178:
- (8) Նայթ, էջ 177:
- (9) Նայթ, էջ 51:
- (10) Նայթ, էջ 52-53:
- (11) Նայթ, էջ 50:
- (12) Նայթ, էջ 90:
- (13) Նայթ, էջ 85:
- (14) Նայթ, էջ 173:
- (15) Նայթ, էջ 179:
- (16) Նայթ, էջ 180:
- (17) Նայթ, էջ 150:
- (18) Նայթ, էջ 184:
- (19) Նայթ, էջ 186-187:
- (20) Նայթ, էջ 40:
- (21) Նայթ, էջ 186-187:
- (22) Նայթ, էջ 87:
- (23) Նայթ, էջ 87-88:
- (24) Նայթ, էջ 109:
- (25) Նայթ, էջ 110:
- (26) Նայթ, էջ 112:
- (27) Նայթ, էջ 108:
- (28) Նայթ, էջ 117:
- (29) Նայթ, էջ 118:
- (30) Նայթ, էջ 119:
- (31) Նայթ, էջ 119-120:
- (32) Նայթ, էջ 121:
- (33) Նայթ, էջ 125:
- (34) Նայթ, էջ 125:
- (35) Նայթ, էջ 129:
- (36) Նայթ, էջ 130:
- (37) Նայթ, էջ 136:
- (38) Նայթ, էջ 134:
- (39) Նայթ, էջ 131:
- (40) Նայթ, էջ 132:
- (41) Նայթ, էջ 132:
- (42) Նայթ, էջ 148:
- (43) Նայթ, էջ 134:
- (44) Նայթ, էջ 135:
- (45) Նայթ, էջ 139:
- (46) Նայթ, էջ 145:
- (47) Նայթ, էջ 147:
- (48) Նայթ, էջ 148:
- (49) Նայթ, էջ 168:
- (50) Նայթ, էջ 148:
- (51) Տ. Ձրաքեան, «Յայտնութեան անդրաշխարհէն — ստուգանքութեան մը ոգեկանութեան մասին», «Ոստան», Ա. Տարի, Թիւ 1, 1 Յունուար (Պրիւ, 1911, էջ 197-227):
- (52) Նայթ, էջ 199:
- (53) Նայթ, էջ 223:
- (54) Նայթ, էջ 220-227:

Մ. Ս. Հ Ե Ր Կ Ե Լ Ե Ա Ն

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ՝

Վ Ր Ձ Ի Ն Ո Վ

Մեր ժամանակի մեծագույն գծադրողը
ՅԵ ՄԱՐԳԱՐԻՑ ԵՍԻ ՓԱՆՈՐԱՆԱՄԸ Է:

ՓՈԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

✽

Յեղափոխական մշակույթը եւ կամ հայ մշակույթը յեղափոխականացնելու հարցը սփիւռքահայ երիտասարդը յուզող կարեւոր խնդիրներէն մէկն է այսօր, որովհետեւ կ'ապրինք պատմական այնպիսի հանգրուանի մը մէջ, ուր հայ մշակույթին պարզ տայու եւ զայն յեղափոխականացնելու հարցը կը դառնայ հրատապ:

Այսօրուան մարտիկներուն զոհարելով կամք առաջան հայ Դատի ժողովրդականացումը կրնայ առաւել եւս արժանանալ եւ նուիրագործուիլ միայն մշակույթի միջոցով, որովհետեւ մարդուն վրայ ներգործելու ուժեղագոյն տուէալը բարձրորակ եւ իրաւ մշակույթն է:

Հայկական Եղեռնին քննման, 1915էն առաջ թէ ետք, բազմիցս արտացոլուած է (սկսեալ Այվազովսկիէն մինչեւ Ս. Տէր Յաշատուրեան եւ Եր. Բոլաք) հայ զեղանկարիչներու պատառներուն վրայ, իսկ մեր ազատագրական պայքարի նորադրոյն պաշտօնէն՝ Եղեռնը զրահարուեցան հայ արուեստի գրեթէ բոլոր ճիւղերուն մէջ, առաւել կամ նուազ լափով: Դեղանկարչութեան պարագային՝ անկասի ժամանակի պատառներէն, տեղի աւելցան նաեւ զեղանկարչական տառնմին ցուցանանքներ:

Այսպէս:

24 Ապրիլ 1981ին, Նիւ Եորքի ամէնէն հռչակաւոր ցուցադրանքներէն մէկուն մէջ, բացումը կը կատարուէր մեծանուն զեղանկարիչ Արիւի Կորգի Ասոյեանի ամենամեծագույն ցուցանանքներէն: Կոր-



Հեաշիւալքիւմը

գիի երվնագիրներուն ողբերգական բնոյթը ինքնին զրահարումն է Եղեռնը տեսած աւանդէ հողոպրած հայու մը ողբերգական կեանքին:

Ճիշդ մէկ տարի ետք, 24 Ապրիլ 1982ին, զարձեալ Նիւ Եորքի մէջ, կը կատարուէր Եղեռնին նուիրուած երկրորդ ցուցանանքներ մը բա-

ցումը, ուր միջազգային համառոտացման ուղիղ կերպարուցումով մը, Պորէն Տէր Թարութիւն-եան, կը ցուցադրէր ստուար թիւով երկեր, ներ-լընչուած հայկական կոտորածներէն:

Իսկ այս ասորի, 23 Ապրիլին, Գարեգին Բ. կաթողիկոս բացումը կը կատարէր Եղեռնին նը-ւերուած զոհանկարչական հրքոք ցուցանանքէ-սին, խառնեմք բազմութեան մը ներկայու-թեան, հետաքրքիրներուն ուլողութեան յանձնե-լով Փօլ Կիրակոսեանի լուրջ 80 զոհանկարչներ՝ «Յեղատպանութեան» Գեղի վերածնունդը ընդհա-նուր խորագրերն առկա:

Հայկական ցեղասպանութիւնը ազգային ծի-րէն դուրս բերելով, վերայիւնայ երեք ցուցա-նանդաներն ալ տնուկդակիւրէն դատապարտած են մարդուն կողմէ մարդը ոչնչացնելու անմարդ-կային արարքները, որոնք առաւել եւս կ'իմա-տաւորեն եւ միջազգային մակարդակներու կը տանին Հայ Դատը:

Փօլ Կիրակոսեանի ցուցադրած երկնապիւրնե-րը կը բաժնուին երկու զլխաւոր մասերու:

Ա.— Եղեռնը, որ պահկերտած են հայ ժո-ղովուրդի քանի տեղահանումը, ասարարութիւնն ու ոչնչացումը:

Բ.— Գոտորակուած ժողովուրդի մը վերածը-նանքը, անոր վերապիւրջու կամքն ու կհանգի գե-ղեցկութիւնը ընդհանրապէս:

Առաջին բաժինը կը սկսի «Գողգոթայէն» ու կ'անցնի «Երկնային»՝ ճանապարհներէ, ուր կը հան-դէպէնք բունի տեղահանուած կարտաւաններու, մորթուած ու ծուռացուած մարմիններու, զիւ-րէն թուռններու, արտոնուած ուղորներու: Նը-մանորինակ եղբարկան տեսարաններու ընդմէջէն Փօլ Կիրակոսեան արուեստագէտը զիւրով կը տա-նի միշտ «Տէր Զօր», Մեռեանքն ու միշտ գը-ծնալ: «Երկնային» անունը կրող զոհանկարչը, իր սարսաղազեցիկ բնոյթով, կարծէք վերջակէտն է այս շարքին, լրումը մարդկային ժեռ ոգրերու-թեան... Այս շարքին իւրաքանչիւր զոհանկարչը ցնցիկ տեսարանի մը զիմաց կը զնէ մեզ, ասկայն աւելի յազդի ու սիրտ մարմոցող է Վեմաքանի վաճառականը: Խորագրուած երկնապիւրնը, Հոս պահկերտուած հորմենը արուած է այնքան սըր-տայով զիներով ու գոյներով, որ մանուկ-տի-պարը կարծես զեռ ջննած՝ մօրը արգանքին մէջ ճաշկան է քաղցի, Ծարակն ու անպատասխան կի-



Նոյնը մը վերածնունդի գործերն

զիշ տառապանքը: Գարեգին անմեղութեան բա-րարու ոչնչացումն է այս զոհանկարչը, եւ նոյն առին՝ ճամբարգիւյն ոգրերու: Թեան մէջ վը-կայութիւնը: Նոյնիսկ հասարակ մահկանացուն սէր, զուրգութեան ու յարգանք կը պարտադրէ այս պատասաւը, կը ստիպէ ակնդիրին, որ խո-նարհի յիշատակին առջեւ բոլոր այն երեխանե-րուն, որոնք սղակիգուցած տեսպատներուն մէջ...

Փօլ Կիրակոսեանի զոհանկարչներու առաջին բաժինին մէջ գերեզման գոյները ընդհանրապէս տեւն ու կարմիրն են: Այս երկու շարքերով զոյներու միախառնումով՝ ստեղծուած ասար-կերանդները Կիրակոսեանի վերածնունդներուն տակ դարձած են եղեռնի պատմութիւնն ու աս-րողութիւնը իմանալի դարձնող յուշարձաններ, յազեցած՝ ներառելու «Երկնային» ու ծանկան-թեամբ, որ կը խորանեն մարդկային արժանա-պատուութիւնն ու արդարութեան տնոր զգայա-ւանքը...

Յուցանանդէսին երկրորդ բաժինը՝ «Վերա-ծնունդը», հիշ ճակատապիւրն է ասալներին:

Հայ մանրանկարչութիւնը՝ իր գոյներով, ս-նով ու, մանաւանդ, ոգրով, տիրական դեր մը սկսի այս շարքին մէջ:



Ախորի ճամբաներում վրայ

Հայ ազգը միշտ հեթանոս է եղած է բնաշնչման
վանդին եւ տեւաբար ապրած բլլալով լինել-լի-
նելու հարցականին տակ, բնազգական հակազդե-
ցութեամբ մը ստեղծած է ինքնուրոյն ու ամուր
մշակոյթ մը, որուն մէկ սղեղէն արտայայտու-
թիւնն է մանրանկարչութիւնը:

Փօլ Կիրակոսեան առաջին բաժնին մէջ ապ-
րած է տանջալից երկունք մը, որուն իբր հա-
կազդեցութիւն իր մէջ ծնունդ առած է վերածը-
նունդ շարքը, որ մ'չ միայն զոյառեւուծի յազ-
մանակն է, զայլեւ՝ արտայայտութիւնը մարդու
կործանարար ու անկուսկային ծախ միտումին:

ՄՈՎՍԷՍ Ս. ՀԵՐԿԵՆԵԱՆ

ԱԼԵԽԱՆԴՐ ՕՌԼՈՎ

ՏԵՐ-ՎԱՀԱՆԵԱՆ.— ԿԵՍ ԱՅԼԵՒՍ ՉԵՄ ԼՈՒՋՈՒՄ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼ

(ՄԻ գլուխ)

ՍՍՏԱԼԻՆԵԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝
գրքից)

Մենք ծանօթացանք ասորբեր կարգի ստալինեան քննիչների հետ. Ձեր-
տակի նման սագիստների, Մոլանովի ու Սլուցկու տեսակի անակցունք պա-
տեհապաշտների, Միրոնովի ու Բերմանի պէս հիւանդազին երկատուածու-
թիւնից տառապող մարդկանց հետ, որոնք յանուն կուսակցութեան իրենց մէջ
խլացրել էին խղճի ձայնը, բայց եւ այնպէս՝ իրենց զոպելով կատարում Ստա-
լինի յանցանքից կարգազրութիւնները։

ՆԳԺԿԻ (Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտէի ատի, — ՔԱՂԳՄ.)
քննիչները քիչ էլ խառնութիւն չունէին կայանաւորների վրայ։ Բայց այդպիսի
գործերում, որոնցով շահագրգռուած էր անձամբ գլխաւոր Գարսուզարը, նը-
րանց իշխանութիւնը խիստ կրճատուած էր. նրանք զրկուել էին քննութեան
տակ գտնուողների մեղքի հանդէպ թէկուզ նուազագոյն չափով տարակուսե-
լու իրաւունքից։

Նոյնիսկ այն քննիչները, ովքեր համակրանք էին զգում Լենինի մեր-
ձաւոր դործակիցների հանդէպ, հնարաւորութիւն չունէին գէթ սրեւէ բանով
նրանց օգնելու։ Այն ամէնը, ինչ որ կապուած էր զալիք դատաւարութեան
հետ, վճռուած էր հետաքննական մարմիններից դուրս եւ միայն յետոյ պէտք
է հաստատուէր քննութեան տակ գտնուողների գիտատվանութիւններով։
Գալիք դատաւարութեան գահերին Ստալինն էր ջոկել։ Մեղադրանքները յո-
րինուել էին նոյնպէս նրա կողմից։ Հենց նա էլ թելադրել էր այն պայման-
ները, որոնք զրուած էին քննութեան տակ գտնուողների առջեւ։ Եւ, վերջա-
պէս, դատարանի վճիռը նոյնպէս Ստալինի կողմից էր կանխորոշուել։

Քննութեան տակ գտնուողի նկատմամբ քննիչի սաժած անկեղծ հա-
մակրանքի ցայտուն օրինակ կարող էին ծառայել այն յարաբերութիւնները,

digitised by A.R.A.R.®

որոնք ստեղծուել էին ՆԳԺԿի արտասահմանեան վարչութեան պետի տեղակալ Բերմանի մօտ՝ ամբաստանեալ Տէր-Վահանեանի հետ :

Տէր-Վահանեանն իմ հին բարեկամն էր : Ես նրա հետ ծանօթացել էի դեռևս 1917 թուի զարնանը, Մոսկուայի Ինկերական ուսումնարանում(1), որտեղ մենք, որ ցարական վարչակարգի օրօք զրկուած էինք բանակային ընկերակցութեան մէջ գտնուելու աչքի ընկնող փորձաշրջան (ստաժ), կոմունիստական զաղափարներ էր տարածում ինկերներէ մէջ : Ի դէպ, նա դըլ-խաւոր ուշադրութիւնը յատկացնում էր քարոզչական աշխատանքին՝ մոսկովեան դործարաններում եւ մոսկովեան կայսզօրի զինուորներէ մէջ, որոնցից նա յոյս ունէր ժամանակի ընթացքում ստեղծել մարտական ջոկատներ՝ գաւլէ ապստամբութեան համար : Տէր-Վահանեանը աչքի ընկնող ճառագիտ չէր, բայց նա բանուորական ու զինուորական լսարանը նուաճում էր՝ իր կուսակցական դործի յաջողութեան հանդէպ ունեցած մոլեռանդ հաւատով ու անկեղծութեամբ : Նրա անմոտան հմայքին դժուար էր դիմանալ : Նրա թուի, գեղեցիկ դէմքը շնչում էր բարութիւն ու անկեղծութիւն, հաճելի ցածր ձայնը հնչում էր համոզուած ու մտերմօրէն :

Երբ ուսումնարանն աւարտելու ժամանակը մօտեցաւ, Տէր-Վահանեանը ջանում էր ասպարուել աւարտական ըննութիւններում : Բանն այն է, որ ձախողումներին, իբրեւ կամովին զինուորացուածներ(2), ուղարկում էին Մոսկուայի կենտրոնում՝ Պետրոֆեան տաղաւարներում (քարակներում) տեւաւորուած 55րդ եւ 56րդ գնդեր : Տէր-Վահանեանն ուղարկուեց այդ տաղաւարներից մէկը եւ երկու ամիսներ ընթացքում կարողացաւ նրանց լիովին բուլեւել դարձնել : Հոկտեմբերից յետոյ նա նրանց գրոհի տարաւ երեմի վերայ, որտեղ ամրացել էին ժամանակաւոր կառավարութեանը հաւատարմ մնացած ինկերները :

Երբ բուլեւելները գրաւեցին իշխանութիւնը, Տէր-Վահանեանը նշանակուեց կուսակցութեան Մոսկուայի կոմիտէի ռազմական բաժնի վարիչ : Հեռազայում նա դործուն մասնակցութիւն ունեցաւ քաղաքացիական պատերազմում : Երբ յեղափոխութիւնը հասաւ Անդրկովկասին, Տէր-Վահանեանը դարձաւ հայ կոմունիստների պարագլուխ եւ նրա ղեկավարութեամբ Հայաստանում հաստատուեց խորհրդային իշխանութիւն(3) :

Տէր-Վահանեանին ամէնից քիչ էր հետաքրքրում իր սեփական առաջադէպը : Նա անհամեմատ չափով ամէնից շատ հրապուրուած էր բուլեւելիցի ու մարքոստական փլիւսփայութեան զաղափարախօսական հարցերով : Երբ խորհրդային իշխանութիւնը վերջնականապէս հաստատուեց Անդրկովկասում, Տէր-Վահանեանը ռազմով-գլխով խրուեց գիտութեան մէջ եւ մի քանի գրքեր գրեց մարքսիզմի խնդիրների վերաբերեալ : Նա ստեղծեց բուլեւելեան կուսակցութեան գլխաւոր տեսական հանդէսը՝ «Պոզ գնամենմ մարկսիզմա», եւ դարձաւ նրա առաջին խմբագիրը(4) : Երբ երեւան եկաւ ժախ ընդդիմութիւնը (օպոզիցիան), Տէր-Վահանեանը յարեց Տրոցկուն : Դրա համար նա հետագայում վտարուեց կուսակցութիւնից, իսկ 1933 թուին էլ՝ ուղարկուեց սիբիրեան աքսոր :

Երբ Ստալինը սկսեց պատրաստել մոսկովեան դատավարութիւններից առաջինը, նրա յիշողութեան մէջ երեւան եկաւ Տէր-Վահանեանի անունը, եւ նա որոշեց նրան օգտագործել իբրեւ Տրոցկու երեք ներկայացուցիչներից մէկի՝ երեւակայական «տրոցկիստական-գիմովեական ահաբեկչական կենտրոն»

Նի՞ն մէջէ՛: Տէր-Վահանեանը հասցուեց Մոսկուա եւ նրա մշակումը յանձնարարուեց Բերմանին:

Այդ մասին լսելով, ես խօսեցի Բերմանի հետ Տէր-Վահանեանի վերաբերեալ ու նրանից խնդրեցի իմ բարեկամի հետ շափից աւելի կոշտ չլիարուել:

Նա շատ դուր եկաւ Բերմանին: Նրան ամէնից շատ զարմացրել էր Տէր-Վահանեանի բացառիկ աղնութիւնը: Որքան աւելի էր Բերմանը ճանաչում նրան, այնքան աւելի յարգանքով ու համակրանքով էր համակում նրա նըկատմամբ: Առանձնաբար, Տէր-Վահանեանի «ոճրագործութիւններին» պաշտօնական հետաքննութեան անօրովոր մթնոլորտում, ամբացաւ ստալինեան հետաքննութեան քննիչի ու նրա զու՛րի բարեկամութիւնը:

Ինքնին հասկանալի է, որ Տէր-Վահանեանի հանդէպ ունեցած իր ամենայն համակրանքով հանդերձ, Բերմանը չէր կարող սրտաբաց լինել նրա հետ: Արտաքուստ նա պահպանում էր քեմալադարձը ու ֆրանսիական հարցաքննութիւն վարել, օգտագործելով ստալինեան տեսակի կուսակցական Ֆրազաբանութիւնը: Միաժամանակ նա չէր փորձում Տէր-Վահանեանին ներշնչել մեղքի դիտակցութիւն եւ նրա հանդէպ չէր գործադրում այն հաստատեանական եղանակները, որոնք պէտք է որ նրա մօտ յարուցէին դատապարտութեան զգացում:

Առանց մտնելու մանրամասնութիւնների մէջ, թէ «մարմինները» ինչի մէջ էին տեսնում Տէր-Վահանեանի մեղքը, Բերմանը բացատրում էր նրան, որ Ֆազդբեյրոն անհրաժեշտ է համարում նրա խոստովանութեամբ հաստատել այն ցուցմունքները, որոնք արդէն ստացուել են միւս կալանաւորներից եւ ուղղուած են Զինովեւի, Կամենսկի ու Տրոցկու դէմ, քանի որ նա՝ Տէր-Վահանեանը, Նոյնպէ՛ս դատաւարութեան մասնակից է ճանաչուած: Ընդամենը Բերմանը նրան էր թողնում, այդ նախադրեալներից ելնելով, իր վարքագիծն ընտրելու հետաքննութեան ժամանակ եւ դատարանում:

Ահա Տէր-Վահանեանի հետ նրա ունեցած զրոյցներից մի քանիսը, որոնք նա ինձ պատմել է իր ժամանակ:

Մերժելով ցուցմունքներ տալ, Տէր-Վահանեանն ասում էր Բերմանին. «Եւ անկեղծօրէն ուրախ եմ լինել կատարել կենտկոմի ցանկութիւնը, բայց չեմ կարող ստորագրել այդպիսի սուտ խոստովանութիւններ: Հաւատացէ՛ք, կործանուելուց ես չե՛մ սարսափում: Ես շատ անգամ եմ կհանքս վտանգի ենթարկել՝ թէ՛ Հոկտեմբերեան յեղափոխութեան օրերին մարտապատնէշների վրայ, եւ թէ՛ քաղաքացիական պատերազմում: Այն ժամանակ մեզինց ա՛վ էր մտածում սեփական կեանքը փրկելու մասին: Բայց ձեր պահանջած ցուցմունքները ստորագրելով՝ ես պէտք է որ առնուազն համոզուած լինեմ, որ դրանք իսկապէս համապատասխանում են կուսակցութեան ու յեղափոխութեան շահերին: Իսկ ես ամբողջ հոգով զգում եմ, որ այդպիսի ցուցմունքները միայն կը խայտառակեն մեր յեղափոխութիւնը եւ ամբողջ աշխարհի աչքում կը վարկաբեկեն բոլորիդմի բուն էութիւնը»:

Բերմանն առարկում էր, թէ կենտկոմն աւելի լաւ գիտի, թէ ներկայումս իսկապէս ինչի կարիքն ունեն կուսակցութիւնն ու յեղափոխութիւնը: Կենտկոմը աւելի լաւ է տեղեակ, քան Տէր-Վահանեանը, որը քաղաքական գործունէութիւնից կտրուած է երկար ժամանակ: Բացի այդ, իւրաքանչիւր բոլոր չեւիկ պէտք է վստահի կուսակցութեան բարձրագոյն մարմնի որոշումներին:

— Ամենաթանկագին Բերման, — առարկում էր Տէր-Վահանեանը, — Դուք պնդում էք, որ ես չպէտք է մտածեմ, այլ պարտաւոր եմ կորսօրէն ենթարկուելու կենտկոմին: Բայց ես արդէն այնպէս եմ շինուած, որ չեմ կա-

րող դադարել մտածելուց։ Եւ ահա ես այն եզրակացութեան եմ գտլիս, որ այն պնդումը, թէ իբր չին բուհականները դարձել են մարդասպանների մի աւազակախումբ, անհաշիւ վնաս կը հասցնի ո՛չ միայն մեր երկրին ու կուսակցութեանը, այլեւ՝ սոցիալիզմի գործին՝ ամբողջ աշխարհում։ Կարող եմ երդուել։ Ես չեմ հասկանում Քաղբերոյի հրէշային ծրագիրը եւ զարմանում եմ, թէ ինչպէս է դա ձեռն գլուխը մտնում։ Գուցէ ես խելագարուել եմ։ Բայց այդ դէպքում էլ՝ ի՞նչ իմաստ ունի ցուցմունքներ պահանջել հիւանդ, ամենաբացարձակ (անբնական) մարդուց։ Արդեօք աւելի լաւ չի՞ լինի նրան խնթանող զննել։

— Եւ... ի՞նչ պատասխանեցիք նրան, — հարցրի ես Բերմանին։

— Ես նրան ասացի, — հեզնական քմծիծաղով պատասխանեց նա, — թէ իբր փաստարկումները վկայում են միայն մէկ բան։ Նշանակում է՝ ընդդէմադրութեան արմատները այնքան են խորացել գիտակցութեան մէջ, որ նա լիովին կորցրել է կուսակցական կարգապահութեան պատկերացումը։

Տէր-Վահանեանը նրան առարկում էր դրա համար, յիշեցնելով, թէ դեռեւս Լենինն է ասել, որ կուսակցականի շորս պատուիրաններից ամէնից պիտաւորը կուսակցութեան ծրագրին համաձայն լինելն է։ Եթէ հիմա, — եզրակացնում էր քննութեան տակ գտնուողը, — կենտկոմի նոր ծրագիրը անհրաժեշտ է համարում վարկաբեկել բոլշևիզմը ու նրա հիմնադիրներին, ապա ես համաձայն չեմ այդպիսի մի ծրագրի եւ ինձ այլեւս չեմ կարող կապուած համարել կուսակցական կարգապահութեանը։ Իսկ, բացի այդ, չէ՞ որ ես արդէն վտարուած եմ կուսակցութիւնից, եւ ուստի՝ առհասարակ ինձ պարտաւոր չեմ համարում ենթարկուելու կուսակցական կարգապահութեանը։

Մի անգամ, երկույնան, Բերմանը մտաւ իմ առանձնասենեակ ու առաջարկեց գնալ Նիժնի ապոմը, որտեղ Արտասահմանեան վարչութիւնը պարտաւորականադէս է ստորում։ Այն ժամանակից ի վեր, երբ Ստալինը յայտարարեց, թէ Վկարին աւելի է յաւացել, ընկերներ։ Վկարին աւելի ուրախալի է դարձել, — խորհրդային կառավարող վերնախաւը հրաժարուեց կոնծաբանութիւնների, պարերով ու թղթախաղով գաղտնի երեկոյթներ կազմակերպելու օրովորութիւնից եւ սկսեց այդպիսի գուարճութիւններ կազմակերպել բացէ ի բաց, առանց քաշուելու։ Նիժնիի դեկավարութիւնը զբաղցր կեանքի վերաբերեալ առաջնորդի ցուցումը ընկալեց մի յատուկ խանդավառութեամբ։ Նիժնիի ապոմըի շքեղ շէնքը վերածուել էր նախալեղափոխական առանձնաշնորհալ զվարդիական (պահակազօրային) զնդիրից որեւէ մէկի սպայական ակումբի նմանուող մի բանի։ Նիժնիի վարչութիւնների պետերը ձգտում էին միմեանց զերազանցել՝ շքեղ պարահանդէսներ կազմակերպելու ասպարէզում։ Յատուկ բաժնի եւ Սահմանապահ գործերի վարչութեան կազմակերպած այդպիսի առաջին երկու պարահանդէսները ոնցել էին մեծ յաջողութեամբ եւ սեմապիտ յարուցել Նիժնիի աշխատակիցների մէջ, Նոր աղանդականութեան խորհրդային ակիւնները դերձակուհիների մօտ էին վաղում՝ երեկոյեան շրջազգեստներ ու արդուզարդ պատուիրակու համար։ Այժմ նրանք անհամբերութեամբ էին սպասում յաջորդ իւրաքանչիւր պարահանդէսի։

Արտասահմանեան վարչութեան պետ Սլուցկին որոշել էր զանազ մասկուսքիներին ցոյց տալ արեւմտեան տեղալի իսկական պարա-դիմակահանդէս։ Նա նպատակ ունէր պնդամոլութեամբ զերազանցել եւրոպական մայրաքաղաքների ամենաթանկ գիշերային ակումբները, որտեղ հենց ինքը, իր արտասահմանեան ուղեւորութիւնների ժամանակ, մեծ քանակութեամբ դուլարներ էր թողել։

Երբ մենք՝ Բերմանի Հետ՝ ներս մտանք, մեր առջև պարզուրող տեսարանը խոկապէս որ անսովոր էր Մոսկուայի համար։ Ակումբի շէնք զանաւոր թաղուած էր կիսախաւարում։ Առաստաղից կախուած եւ սպակեայ բազմաթիւ պրիզմաներից կազմուած պտրտուող մեծ գունդը դէպի դարձել էր ցրում մեծաքանակ շողփեր, թափուող մեծան պատրանք ստեղծելով։ Տղամարդիկ համազգեստներով ու սմականգներով եւ տիկիները երեկոյան երկար շրջադետներով կամ օպերետային հագուստներով՝ տարուում էին պարելով, շաղի հնչիւնների տակ։ Շատ կանայք դիմակներ ունէին ու չափազանց դեղանկար հագուստներ, որոնք Սուցկին վարձով վերցրել էր Մեծ թատրոնի հանդերձարանից։ Մեղանները ծանրաբեռնուած էին շամպանով, լիկերներով եւ օղիով։ Բարձրաձայն բացականչութիւնները եւ մոլեգին հուռոցը երբեմն խլալացնում էին երաժշտութեան ձայները։ Սահմանազան զօրքերի մի ինչ-որ դեղապետ բղաւում էր հարթած յափշտակութեան մէջ։ Մա արդէն կեանք է, տղերք։ Շնորհակալութիւն ընկեր Ստալինին՝ մեր երջանիկ մանկութեան համար։

Նկատելով մեզ՝ Բերմանի Հետ, պարահանդէսի կազմակերպիչը բացականչեց. «Թող նրանք առեն՝ այդ երկու եւրոպացիները։ Առայժմ տնկեղծութեն, — շարունակում էր նա՝ դիմելով մեզ, — դուք այսպիսի բան տեսնել էք Փարիզում կամ Բեռլինում։ Ես թէ՛ն եմ նրանց բոլոր Մոնմարտրների եւ Կուլֆիւրտտենդամների վրայ։»

Մեզ միմեկուեց հաստատել, որ Արտասահմանեան վարչութեան սարքած պարահանդէսը զերազանցում է այն ամէնին, ինչ որ մեզ վիճակուել է տեսնել Եւրոպայում։ Սուցկին փայլում էր եւ սկսեց մեզ համար շամպան լցնել։ Նայն սեղանի շուրջ նստած Միլոնովը բացականչեց. «Էլ ի՞նչ ասել. դու փարիզեան որեւէ առաջնակարգ բողանցի ոչ-վատ տնօրէն կը լինէիր»։

Եւ իսկապէս, այդ զբաղմունքը շատ աւելի կը վայելէր Սուցկուն, քան խորհրդային հետախուզութեան պետի պաշտօնը, չիտեղով արդէն Նիժնի կուսակցական կոմիտէի քարտուղարի պաշտօնի մասին, որը նա պրաւում էր համառոտութեան կարգով՝ վերջին երեք տարիների ընթացքում։

Դանիւնում սաստիկ տօթ էր եւ մենք արագ հեռացանք այդ պարահանդէսից։ Ակումբի ուղիղ դիմաց կանգնած էր Նիժնի հսկայական մույլ շէնքը, որը ներքեւից երեսապատուած էր սեւ դրանիտով։ Այդ դրանիտային երեսապատման յետեւում առանձնախցերում տառապում էին Լենինի մերձաւորագոյն բարեկամներն ու մարտակիցները, որոնք այժմ դարձել էին ստալինեան պատանդներ։

Մենք, Բերմանի Հետ, երկար թափառեցինք մոսկովեան մութ փողոցներով։ Ես մտածում էի Տէր-Վահանեանի մասին եւ, կարծես թէ մի տեսակ իբրեւ պատասխան իմ մտածումներին, Բերմանը յանկարծ ասաց. «Իմ գլխից դուրս չի գալիս Տէր-Վահանեանը։ Ի՞նչ մարդ է, ինչպիսի՞ լուռաւոր միտք։ Ափսո՞ս, որ նա կապուել է ընդդիմադրութեան հետ ու ընկել այս աղացաքաւերի մէջ։ Նրա համար, ճիշդն ասած, կեանքն էլ մի թանկ բան չէ։ Նրան իսկապէս զբաղեցնում է միայն յեղափոխութեան բախտը եւ այն հարցը, թէ ինքն արդեօք, իբրեւ բոլշեւիկ, բարոյական իրաւունք ունի՞ր ստորագրելու իրենից պահանջուող ցուցմունքները, — Բերմանը հառաչեց, — ո՛չ ոք նրան իրենից պահանջուող ցուցմունքները, — Բերմանը հառաչեց, — ո՛չ ոք նրան չի արել նոյնիսկ մէկ տոկոսը այն բանի, ինչ որ արել է Տէր-Վահանեանը։ Ես յաճախ զղջում եմ, որ ստանձնել եմ նրա դործը։ Իսկ միւս կողմից էլ՝ լաւ է, որ նա Զերտոյի նման մի սրիկայի բաժին չի ընկել։ Մի բոլորէ լռելով»։

աանձնասենեակի տիրոջը բացի, գտնուած էին Վիլինսկին, Մուլանովը և Բերմանը: Ի պատասխան Վիլինսկու կաղապարեալ հարցին, Տէր-Վահանեանը, արհամարհաբար նայելով նրա վրայ, ասաց. «Ընդհն ասած, եւ օրինական իրաւունք ունեւ ձեզ բացարկելու՝ իբրեւ դատախազի: Քաղաքացիական պատերազմի ժամանակ եւ ձեզ ձերբակալել եմ՝ իսկական հակայնդադիմութեան համար»(6): Վիլինսկին գունատուեց և չգիտէր ինչ պատասխանել: Գոհ ժընալով թողած սպաւորտութիւնից, Տէր-Վահանեանը խնայեալ ուղղեց բոլոր ներկաներին և զիջողամտօրէն աւելացրեց. «Իհ'հ, լաւ, մի՛ վախեցէք, դա ես չեմ անի»:

Եւզոպային ու ՆԳՓԻի ամբողջ վերնոխաւին Տէր-Վահանեանի արքայապետ վարմունքը ոչ-փոքր բաւականութիւն պատճառեց: Թէև Վիլինսկին միշտ էլ ստորաբարշուքիւն էր անուած ՆԳՓԻի ղեկավարութեան առջեւ, այստեղ նրա հանդէպ վերաբերում էին բացայայտ դիմողամտութեամբ:

(Թարգմ. Լ. ՄԿՐՏՁԵԱՆ)

ԵԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(1) Հիւնկերք բաւր բխում է Գերմանիայից, մասնաւորապէս Գրունսթայից, իբրեւ՝ վերջին հաշուով՝ ազնուական-հոգաւոր, որտեղ իւնկերների միջից էր հաւաքագրուած, հիմնականում, զինավար զինուորականութիւնը: Այդ օրինակով, Ռուսաստանում եւս 1894 զուրկ սկսած, մասնաւոր 1894 թուականից ի վեր, կային հիւնկերական ուսումնարաններ, որտեղ անընդմիջորէն աշխատեցին ուսումնական զորացներ, որոնք ժամանակի ընթացքում աշխուշ փոփոխութիւններ ենթարկուեցին և, ի վերջոյ, մասնաւոր դարձան նաեւ աշխուշ-կաններէ համար: Գործ առած՝ հիւնկերական ուսումնարանները կրտսեր սպայական տեղեկագր վարտաստող ռազմաուսումնական հաստատութիւններ էին:

(2) Հիւնկերք զինուորագրուածները արտայայտութիւնը կէս առ կէս բառացի և ի մասնային թարգմանութիւն է, հանրայայտ հիւնկերք բառը լոգատորոնելու համար: Ռուսական և այլ քանակներում աշխուշ էին կոչուած նրանք, ովքեր միջնակարգ կամ քաղաքագոյն կրթութիւն ստանալուց յետոյ հիւնկերք զինուորագրուած էին՝ որոշ առանձնաշնորհաւ պայմաններով (զինուորական ծառայութեան ժամկէտի կրճատում, ապրուստի աւելի լաւ վերահսկ, հանդերձարում, կրտսեր սպայական կոչում ստանալու ձեռնառն քննութիւններ, ևւալին):

(3) Այստեղ ակնյայտ թիւքմադութիւն կայ: Հայկոմիտի ո՛չ միայն առաջին, այլև երկրորդ ու երրորդ կարգի պարտաւորներին և Հայաստանում խորհրդային իշխանութիւն հաստատած անձանց անունները յայտնի են: Բայց Վ. Տէր-Վահանեանի անունը ո՛չ մի տեղ չի երևացել ու չի երևում: Ի հարկէ, տեսականօրէն հնարաւոր է, որ նա եւս որեւէ առիթով որեւէ զորքի մասնակցած լինի, բայց ոչ մի դէպքում՝ իբրեւ հայ զոմու-նեանների պարագլուխ կամ մի մարդ, որի ղեկավարութեամբ Հայաստանում հաստատուեց խորհրդային իշխանութիւնը: Թէև երա այդ ենթադրեալ ղեկավար մասնակցութիւնն էլ անկարելի է թուած, քանի որ երկրի խորհրդայնացման պահին Վ. Տէր-Վահանեանը Մասկուսում արգէն անուն ունեցող փորձառու անձ էր, արդէն 27 տարեկան, մինչդեռ Հայաստանում առաջին անգամ ունեցող փորձառու անձ էր, արդէն 27 տարեկան, 20-22 տարեկան նորափետուր երիտասարդներ էին: Գրեթէ հեղինակը, երեւի, ինչ-որ բան լիութիւն է, քանի որ այդ տղերքը զրի է աւել խորհրդայնացման դէպքերից աւելի քան 25 տարեկանից յետոյ, այն էլ՝ զրեթէ անտեսութիւնով մասին:

(4) «Պոչ Ջեմալեմեմ Մարկիսիմա» («Մարկիսիմի դրօշի ճերմոյ») հանգէսը դոյու-թիւն է անեցել 1922 Յունուարից մինչև 1946 թուի Յունիսը, իբրեւ փոխտոմարական և հասարակական-տնտեսագիտական հանգէս: Գարեհրաբար, այս կամ այն առումով, ղեկա-

կառույցներն է խմբագրութիւնը (1923, 1931 թուերին)։ 1947ին, երեք տարուայ դադարից յետոյ, նրան գործարկեցուցեալ եկաւ Վսլարսի ֆիլիսոֆիկոս (սփիլիսոփայութեամբ հարցեցն) Հանդէսը։ Խորհրդային տեղեկատուական տղերութեան, քննադատար, թերի ու խեղաթիւրուած մեւում է ներկայացուած նաեւ Վարքաիզմի դրօշի ձեւերն է Հանդէսի պատմութիւնը։ Օրինակ, տեղեկատուական միտա տղերութեան մէկում թուարկուած են Հանդէսի գլխաւոր խմբագրութիւնը՝ այսպէս... Ա. Մ. Գերոսին (1926-1930), Մ. Բ. Միտին (1931-1944), Մ. Տ. Իսով (1944)։ Բայց յայտնի է, որ Հանդէսը լոյս է տեսել նաեւ մինչեւ 1928 թուականը՝ 1922ից ի վեր։ Նշանակուած է՝ ունեցել է գլխաւոր կամ պարզապէս խմբագրութեան սկզբից ի վեր, այլ ոչ թէ միայն 1928 թուից յետոյ։ Առաւել եւս, պարզից էլ պարզ է, որ Հանդէսի խմբագրութեան առաջին երկու տարիները խմբագրութեան է վաղարշակ Տէր-Վահանեանը։ Սակայն, խորհրդային աշխարհում ոմանց համար նման զմանրութեանը մոտացութեան տալը ինքնին հասկանալի պարտականութիւն է համարուած։

(5) «Գրածայլից» բառի համապատասխան հայերէնը «ամենաթանկագինն» է, որը եւ գրքի առեւել գլխի թարգմանութեան ընթացքում կիրառուած է ջանիցա։ Բայց առեւել գէպը ուշադրութեամբ արտասանելու տէր-Վահանեանական եղանակն է։ Ըստ Բերմանի Հաղորդածի եւ գրքի հեղինակի արձանագրածի։

(6) Այս միջոցովը հասկանալու համար պէտք է յիշել, որ Անդրէյ Վիլինսկին (1882-1964) իՄՂԻՄ դատախազն էր 1935-1939 թուերին։ Եթէ նրանից առաւել տալքի ընկած «ցուցադրական» դատաւարութիւններէ հետոսն էր Հանդիսացել Նիկոլայ Կոնիենկոն (1885-1968), 1930ական թուերի երկրորդ կէտի «դատաւարութեաններէ» ընթացքում աւելի քան «փայլեց» Վիլինսկին՝ երբեւ ստալինեան յղացումների ազդեցութեամբ գործադրող, Ստալինի ու Եժովի կողքին ամենաառաջնորդականութիւն վայելող նաղկալի անձերից մէկը գտնուումը քննադատական բանաստեղծութեան կուսակցութեան մենչեւիկեան թեւին է պատկանելի Վիլինսկին։

1903-1920 թուականներին եւ յետոյ է միայն բուլլետիկ գործակից։ Տէր-Վահանեանը 1917-20 թուականներին իսկապէս որ կարող էր նրան ժողովրդի իրեն հակադէպութեամբ, որովհետեւ մենչեւիկեանը չէին ճանաչում խորհրդային իշխանութիւնը, այնպէս՝ ինչպէս որ ինքնն ու նրա համախոհներն էին պատկերացնում։



Նշմարներ

ՃԾԴՈՒՄՆԵՐ

Անոնք՝ որոնք քիչ-շատ հետեւած են ու կը հետեւին մեր դրականութեան, նկատած պէտք է ըլլան, որ անոր երկու թեւերուն ալ վրայ ահապին թիւրիմացութիւններ ու խեղաթիւրումներ սարգած են, սարդեցուած, թիւրիմացութիւններ՝ Սփիւռքէն, ծանօթ տարողութիւն հետեւանքով հաւանաբար, իսկ Հայաստանէն՝ խեղաթիւրումներ, որոնց մէջ անգերազանցելի եղան ու կը մնան ստալինեան բարբերուն հետեւորդները: Անվտանգի տպաւորութիւններու վրայ խմբագրուած կամ միտումաւոր տպաւորութիւններ տառաջանելու համար սարգուած նման երեւոյթները աշխարհ շատ են, որ շարժումի մը կամ դէմքի մը մասին ամբողջական ծանօթութիւններու հիմամբ զաղափար մը կազմելու համար, ենթական կը ստիպուի երկար ժամանակ յատկացնել թիւրիմացութիւնները հարթիլու աշխատանքին:

Այս կացութեան երկարածողման մէջ մեր մտաւորականութեան չափ զերունի նաեւ ընթերցողը, որ մշակուած ժողովուրդներու ընթերցողներուն օրինակով չի փութար օգտուել հակադրելու իր իրաւունքէն՝ ճշգրտութեան եւ ճշմարտութեան պահանջով, ծարաւով:

Ահաւասիկ երկու օրինակ, թիւրիմացութեան մարզէն. առաջինը՝ «Յուսարք» ածաստիւն մէջ, 1948 Փետրուար, էջ 28, Օշականի կապակցութեամբ.

«Իր առաջին գրութիւնը, ռումբաւոր մը, լոյս կը տեսնէ Պոլսոյ «Արեւելք»-ին մէջ, Յակոբ Յովհաննէսեան տաքագրութեամբ, 1900ին»:

Ճշդեմք. Օշականի առաջին գրութիւնը ռումբաւոր մը չէր, պատմականօրէն էր, «Առաջին արցունքը», ու «Առաջին արցունքը» 1900ին լոյս տեսաւ, լոյս տեսաւ 1902ին:

Այս մէկը՝ ոչինչ, տարօրինակը երկրորդն է, Գուրգէն Մխիթարեանի գրեթէ արձանագրուած, «Հայրենիք» ածաստիւն մէջ, 1948 Մարտ, զարձեռու Օշականի առիթով:

«Կեանքը լայնօրէն ընդգրկելու իր ձգտումին մէջ՝ քառերակն երկեր ալ փորձեց ան, յաճախ ժամանակակից մարդոց կեանքներն ալ պատմելով, — Ս. Պարթեւեան, Կոմ. վարդապետ եւ ուրիշներ, — իրականութեան բիրտ, այլ բարայտութեան գեղեցկութիւնը բանդելով մեր աչքին առջեւ»:

Գուրգէն Մխիթարեան յայտնապէս լռածը տեսած համարած է հոս, մնաց որ, լռածն ալ ճիշդ չէ լռած եւ ախպէս, ահապարանօք, թիւրիմացութիւններ յանձնած է ամսագրի էջերուն, այսինքն՝ այսօրուան ու վաղուան ընթերցողին:

Ժամանակակից մարդոց կեանքը իր դրականութեան նիւթ դարձուցած է Օշական, բայց ոչ՝ Մխիթարեանի յիշած սեռին մէջ ու ղէմքերով: Թատերական սեռին մէջ ներկայացուց ուրիշ մը, Կոստան Զարեան, «Մինչեւ ք»-ի հերոսը, Սուրէն Պարթեւեանի կեանքը պատմեց յիշուով, «Ասեակ Պարզեւեան», իսկ Կոմիտաս վարդապետը մեծ դրագէտին յղացումներուն մաս կը կազմէր եւ բնաւ առիթ չունեցաւ անոր մասին թուղթին տող յանձնել:

Գրականութեան պատմութիւնը կը հետաքրքրուի նման հարցերով, հետեւաբար, ու վերջնական հաստատումներու հազարդակից դառնալու մտքով՝ յաջորդ էջին վրայ խօսքը կու տանք նոյնինքն Օշականին:



...Գրուելիք այդ գիրքին մէկ ուրիշ դրուագն էր, այդ խօսակցութեանէն վերջ, բացուող արշալոյսին վրայ պատարագ մը, զոր ըրած էր Կոմիտաս վարդապետ, մէկը աքսորականներէն, յանկարծապատրաստ խորանի մը վրայ, ընդհատելով մը մէջ, հացի կտորով մը իրազորեցելով սրբազան խորհուրդը «Ամուրք եւ անմահ պատարագիւն», ունկնդրուած, մատուցուած՝ համարումը պաղատանքին մէջը մանուկ համար հասունցած մարդոց, խոր, թերեւ իրապէս զգացուած — մեր կեանքին մէջ կան պահեր, ուր երկինքը մեզի տարօրէն իրաւ, մօտ, քաղցր կը թուի — քանի որ անհուն սպանդը կերպը դառած էր զուգէ մինչեւ այդ զնգանները ուրուային թափանցում մը ընելու, կը բերէ՝ քաղցրեւորող առջեւ այդ քանի մը հարիւր մարդը, բոլորն ալ այդ արարողութեան ընթացքին գտնելով անբացատրելի ճամբով իրենց հայութեան թերեւս պղտոր, թերեւս ուռտ — մինչեւ այդ բուպէն — խելամուռ... Ըստ Պողոսեանին պատմութիւն, ռզմանի տեղի էր ունեցեր ամէնէն սըրտաշարժ բուպէն իր ու անոնց կեանքերուն։ Ինկած էին իրարու ճիւղ, ամէն մէկը իր բազուկներուն ամբարձումին Ծիրովը համբարնալով գէպի իր հայրենիքը, իր օճախը, քիթի ղէմքերու ու անպատմելի զգայութիւններու յաճախանքին մէջը տրտմելով, քաղցրանալով, կրկնապէս հասունանալով, ծնրապէս, երանաւէտ, մինչ կախարդ վարդապետը հետզհետէ կը վերանար, կը քակուէր իր մարդկային տարրերէն, դառնալու համար Աստուծոյ մօտիկ պատկերը, թափելով իր ձայնին բախտներէն ինչ որ մեր պապերը առեւ էին աշխարհէն, այնքան դարերու ընթացքին, երկինքէն մեզի գալիք գերագոյն ըստփանքին ձեռովը... Յետոյ, միշտ Բ. Պողոսեանին պատմութիւն անպատմելի Տէր ռզմանի, զոր երգելու տեղ վերածեւ էին աստուածային թանձրացեալ կտորներու, ամէն մէկ բռնի ետին դնելով միախորհուրդ երկինքն ու երկիրը, զլիսահալ կամ ձեռամբարձ... Մօտեցեր էին այդպէս սօրհնուած եւ աստուածացած հացէն իրենց բաժնին, իրենց մաքի դաշտին իրենց բոլոր կեանքը բաց թուղթի նման փռուած։ Աւելին. իրենց Ժողովուրդին հազարամեայ սղակիզումը, դարե՛րը, որոնց ամէն մէկուն ընթացքին ութ-տասը անգամ այս Ժողովուրդին մեղքը, իր գրողներով, նախարարներով, կրօնականներով ու մարտիկներով իր գոհն էր ըրեր, իր խորհուրդը Անմահ պատարագին, ձգելով իբր անմահ պատգամ իր արիւնը շարունակողներուն։ Այս տողերը կը կարդանք։ Բայց «Մնացորդացին այդ գիրքը պիտի նուաճէր այդ ժամը տեղողութեան ամէն մէկ մանրերկրորդը վերածելով ապրող իրականութեան։ Վարդապետը ըսեւ էր, շատ ծանր, մեծաւայելուչ, որքաշնոյ իր «Օրհնալ եղբարեք» արշալոյսին փառքին մէջ... Բացուեւ էին գուռները։ Ձինուորներու մօայլ, կատաղի ղէմքերը։ Ոստիկանապետը, որ թուղթը ձեռքին կը կարգայ տնունները, հատիկ-հատիկ։ Ամէն կանչուած կը համբուրուէր միացողներուն հետ, կ'ելլէ դուռն ու դինուորներու շրջանին մէջէն կ'անցնէր առաջ, կապուելու, երկաթ ձեռնակապերով, վեց-վեց, նոյն չուանին։ Խօսք, արցունք չունին գուռնէն ելլողները։ Գիտեն, թէ ուր կ'երթան։ Բայց անոնց մեծ մասը ծանօթ էր իրենց պատմութեան։ Մօտիկ անցեալի պատկերները...

Յ. ՕՇԱԿԱՆ

(«Օշակամ՝ Օշականի մասին», էջ 104)

digitised by A.R.A.R.®

Դիմացը տրուած Յակոբ Օլականի էջը եւ ՎԱԽԱՆԻ զանգակատունը պոռնէն տրտազրուած ըովի հատուածը յաջորդաբար կարգապէս ծարղը պիտի դարձանայ հարկաւ աթի փառսին առջեւ, որ գրազէտին ամփոփած յղացումը եւ բանաստեղծին իրադրութեամբ համարեալ նոթ աղբիւրը ունին, իրենց տեղը յորտը, յիշատակուած եւ օգտագործուած աստղանիւրը յայնքան մօտիկ են խրատու, որ մարդ կը տարուի դիմել հարցումը:

— Արդեօք Պարոյր Սեւակ, Օլականի պէտ, ինք ալ կարդացած էր Պոզանեանի ցաւազին յուշը եւ նոսա՞ր էր հոն պատկերուած աղօթքին, երբ մենք վարդապետին լրջինքուն կը դնէր իր պոռնիկուն աղագակը՝ Տէ՛ր, ոգորմեա՛լ...

Հիմք կալ աշուղէս մասնէլու, որովհետեւ ինչպէս պարզ է՝ հրեւի ՎԱԽԱՆԻ զանգակատունը պոռնէն ամբողջ ձեռնարկէն, իսկ պարզապէս իրենց կուտակած ընդարձակ նմանման մը վրայ մեղաւորուած է Սեւակ ԱճԻՆԻԻ՞՞ կեանքն ու արուեստը, իր ջիւղերը անոնց յատկանշական հանգոյցներուն վրայ վառելէ առաջ, վառած պահուած:

Աւելի քան նշանակալից է այս մասին հարաբար նոյնինքն Պ. Սեւակի խոստովանութիւնը:

Ե...Իմ ողջ կեանքում եւ մտքիս մէջ գրել եմ շատ զանազան տեսիլներ, գրել եմ զանազան զեւեռութիւն՝ իբրեւ վեպ, իբրեւ վիպակ, իբրեւ ուսումնասիրութիւն, իբրեւ յօդուածներ շարք, իբրեւ քննադատութիւն կամ գրախոս. եւ գիտէի, որ դա մի օր պիտի գրուի:

Գրականութեան պատմութիւնը ունի հետաքրքրական էջ մը, — ժողովուրդին համարումին մէջ նուիրագործուած զերբերուն կենսապարակներ, որ մեր պարագային ետք ոչ ոք չուզէր լսել, չտրուէր հայրենի մեր մասնաբաժաններուն: ՎԱԽԱՆԻ զանգակատունը առիթով, վերջ վարկածը եւ նման ենթադրութիւններու լուծումը անպայման պիտի ըլլային գեղեցիկ յաւելումներ՝ Սեւակի մէջ նոր կենսադարձեցման մարմիններ վրայ:

ՂՕՂԱՆՁ ԱՔՍՈՐԻ

Համապարհին այս չժողային կարող էր եւ անվերջ տեւել, Թայց սարսափի օրն է մթնում, Եւ քարուանը արդա՛ր-արդա՛ր, Եւ քարուանը դատապարտեալ Չանկըրքրի քանոն է մոնում:

Թանաթ քարակալան
Եւ պատրաստուած... Հայի՛ համար.
Քստմանի լիկամբներին,
Անպատուութեան,
Ոչ քէ արդէն երազնի մանի հալար,—
Մի քայտ դժխեմ,
Մի անգործ անկատար —
Հիմա արդէն ո՛չ անարմիւ,
Ոչ էլ անգոյ,
Այլ գնդամի դրամ առաջ պահակացած
Թուրք անկեարի արիւնկալ
կերպարմեալ...

Եւ այդ պահին.

— Տէ՛ր, ռզորմեա՛լ...

Առաւել, քան երբեքիցէ,
Եւ անի, քան այլուրեք,
Այնքա՛ն տեղին, ժամանակի՛ն,
Մի, վարդապետ, գութ է հայցում
Տիրապալաւ ամբողջ մի ազգ
Գո անասունգ տուրք բերանով.

— Տէ՛ր, ռզորմեա՛լ...

Եւ գնդամեալ մեղ ու անձուկ,
Մի տա՛մ փղձուկ տղամարդկանց,
Որ եղեգան իրենց փառով
Թունդ են հանել սիրտը դռով,
Որ սրտառու իրենց տառով
Ու երգերով իրենց թովիչ,
Գարնա՛ն մեղմ լոկ վրդովիչ,
Նայր են տունի շիթ արցունքի —
Ոչ քէ ցաւի կամ տրտմութեան,
Այլ յուզառաւ երգումն էլ՝...

— Յաղազս հարց, եղբարց մերոց
Որք են տարեալ ի գերութիւն,
— Տէ՛ր, ոգորմեա՛լ...

Պ. ՍԵՒԱԿ

(Հատուած)

...Տեւէ՛ք, թէ Օշականն ինչքան հեշտ է լուծում հայկական ուսման տիրույթի գոյարարութիւնը. զՄեր ուսման թիւովը գրական շարժում մը չէ ամբողջ կազմակերպում, պայքարի իր միջոցներով, իր անտառապարտութիւնները դրօշներու վրայ փառաւորելով, ու օտառաւ՝ թէկուզ նախնական շափով մը գրական զարթոյց մը արդարացնող մեքենականութեամբ մը... Անի գրական պայքարի հանդէս մըն ալ չեղաւ: Քանի որ սկիզբ մըն էր եւ ոչ թէ զարգացում: Երբ աչքէ անցընենք, օտարներու մէջ, գրական շրջափոխութեան մայր դարձած քնքերը, կը գտնենք հինին դէմ հզօր հակադրեցութիւն: Մենք լեզուական մեր պայքարը շփոթեցինք գրական պայքարի հետ, ինչպէս շփոթեցինք լեզուական շփոթեցութիւնը գրական շփոթեցութեան հետ:

Վատ է իմանում Օշականը հայ գրականութեան պատմութիւնը. եռնիկ կարեք չկայ հիմնաւորել, որ մեր ուսման տիրույթը գրական պայքարի հանդէս եղաւ, որ նա սոսկ սկիզբ չէր, այլ՝ զարգացում, որ նա իր դիրքերը նուաճեց հին դէմ պայքարի միջոցով, որ չեղուական պայքարը՝ «գրական պայքարի» միակ արտայայտութիւնը չէր, այլ՝ նրա մեկնելից մէկը, եւ որ այս ամէնի առկայութեամբ հայկական ուսման տիրույթը գրական շարժում էր բաւական իրականացում:

Այնուհետեւ, շափողանց նեղ է՝ հայկական ուսման տիրույթի բովանդակութիւնը յանգեցնել հերկու վիճակներու... գումարին»՝ հայրենապաշտութիւն եւ երկնապաշտութիւն («Այս երկու վիճակներու... գումարն է, որ կ'անուանեմ մեր ուսման թիւովը»), բայց սրանից ի՞նչ է մնում, երբ «Համապատկերները հեղինակը մի հեղինակ ներդրումներու թեման արժէքներին շափը: Եւ այսպէս. մինքն իր մէջ չափէ զանցում (օտարները ունեւ հեղինակ), մեր մօտ ուսման թիւովը շարադէտ ազդեցութիւն մըն է ունեցած մեր թատերական գրականութեան վրայ: ...Մեր ուսման թիւովը մեր բանաստեղծութեան վրայ գործադրած է նոյնքան շարադէտ ազդեցութիւն, որքան մեր թատերին վրայ: Բառը եւ իր հմայքը, քերականութիւնը եւ իր փառքը, տաղաչափութիւնը եւ իր համբաւը, — ահա դիմաւոր կերպարանները, որոնց տակ ստեղծագործ ուժը ինքզինքը սպառած է, մեր գրականութեան մէջ չեղձակոյտը յօրինելով անպէտք, որքան որ առաջնորդուէ:

ՍԵՐԳԵՅ ՍՍԻՆԵԱՆ

(«Հայկական ուսման տիրույթը» 1966, էջ 55-56)



Նոյն աղբիւրէն ներշնչուելու վարկածէն անկախ ու անկախ քովի սխալներ չէ՞մ դիմացի էլին վրայ կատարուած արժեւորումէն, Պ. Սեւակ բացարձակ հիացում մը ունէր Օշականի հանդէպ, որուն քանի մը գրքերու մեջ եւրոպական մեղի կարգու լեւոն լափակող հանրապետութիւնը եւ Սերգէյ Սարգիսեանի «Պարայր Սեւակը գուգանեռի վրայ» տետրը գրութիւններուն մէջ: Ուշագրաւ՝ երկուքն ալ, բանաստեղծը իր արտահայտի ու արուեստին մէջ դիտող իրենց արժանիքներով, մանաւանդ անկողնութեամբ:

Ահաւորիկ իւրաքանչիւրէն մէկական շփոթ, Օշականին վերաբերող, առաջինը Հայկական տիրույթի զրկում, երկրորդը՝ Պ. Սեւակի քերական:

Որտեղից որտեղ խոսք բացուեց Յակոբ Օշականի ու իր «Համապատկերներ» մասին: Եւ, մտաբերելով, թէ որտեղ որտեղ զուտ է զեռնաւորութեան թուանշանը ու նաեւ այն, թէ եւ 1921ին Պոլսում ինչ անպատասխանութիւն է կարգադրել թուանշանի մասին՝ յարազելով վերինի զարմանքը («...եւ չէի հասարակ զոյգը... Բայց եկայ տեսաւ, որ Պոլսն էլ ինչ չէ հանաւոր»), բացարձակ կայծեր յայտնեց Օշականի գրադատական սկզբունքներին մասին: Պարայրը մոլեգնեց, ի՞նչ միայն լատաց իմ եւ համախոհներին մասին («Պարայրը, ի՞նչ կարգադրեց»):

Դուք կարդացե՛ք էք նրա էն հատորը, որ Գրիգոր Օտանիին է վերաբերում: Դա գրական մի յուշարձան է, հայ գրականութեան մէջ, ոչ միայն քերականութեան մէջ, որին մենք կարող ենք հասնել 90 տարի յետոյ, միայն 90 տարի յետոյ... Եթէ դու ոչ-դուրս Գրիգոր Օտանիին մասին նրա գրքերը կարդալիս չես մտածել, որ դու ի ինչ ես ծնունդ աշխարհում, ուրիշ քերական երեք իմ ուղած գրականագէտը գուրաւ չի գայ («Պարայր Սեւակը գուգանեռի վրայ», Ս. Սարգիսեան):



...Ոմանք (ըստ ծանոթ առածի) ծառերի երևումը շեն տեսնում են տառը, իսկ Սարինեանը գերազանց անտառագետ է (էթէ կարելի է այսպէս առել)։ Ու էթէ մարդիկ, ըստ տեսողութեան տեսակի, ըրնում են հեռատես եւ կարճատես, ապա պէտք է տակ, որ Սարինեան զարմանալի սուր է տեսնում հեռուից, նախանձելի ընդգրկումով է առնում խուրճի ու անձի ջականը, համընդհանուրն ու էականը։

Բայց մինչեւ վերջ արդար լինելու համար աւելացնեմ, որ լայնաթիկունք «անտառագետ» Սարինեանի հանդէպ փոքր-ինչ խեղճանում է Սարինեան — «ծառագէտը», եւ «հեռատես» Սարինեանի կողքին փոքր-ինչ ճշշուած է տեսնում իրեն Սարինեան — «կարճատեսը»։ Այլ կերպ ասած՝ էթէ զարգացող փարաբանական-տեսականը Սարինեանի գրչով բարձրանում է մի այնպիսի մակարդակի, որին հասնելու համար զեռ շատ պիտի ջանայ մեր գրականագիտութիւնն ընդհանրապէս, ապա տրպարանական-վերլուծականը երբեմն մնում է անկատար։ Այս է պատճառը նաեւ այն վէճի, որ Սարինեանն իր գրքի էջերում մղում է արեւմտահայ գրականութեան բազմահատուր պատմութեան հեղինակ Յակոբ Օշականի դէմ։

Խնդիրն այն է, որ Յ. Օշականը գրականութեան պատմութիւնը դիտում է ոչ այնքան ակնոցով (այսինքն՝ պատմականութեան բարձունքներէց), որքան աչքով (այսինքն՝ արդիականութեան դիրքերից)։ Այլ կերպ ասած՝ Օշականը իր նիւթին չի նայում իբրեւ գրականութեան պատմաբան ու տեսարան՝ բառիս զուտ գրականագիտական առումով, այլ իբրեւ գրական քննադատ ու գրագետ՝ այս բառերի շինացած իմաստով։ Նա բանեցնում է ոչ այնքան հեռագիտակ, որքան՝ մանրադիտակ, ոչ այնքան կտտ (յիշենք մեր մօտանցեալ կաշերը), որքան՝ մազ։ Այս պատճառով էլ նա շատ յաճախ սայթաքում է պատմական ու տեսական սալաշատակի վրայ, բայց առաւել յաճախ լահում գրականութեան ներգրգացողութեան եւ արդիական զննչատեղանքների մէջ։

Սարինեանը նախ եւ առաջ տեսարան է, այսքանով էլ՝ նաեւ գրականութեան լուրջ պատմաբան, որի նշանաբանն է՝ ամէն բան բացատրել։ Իսկ ամէն բան բացատրելը ինչ-որ տեղ հաւասարում է ամէն բան արգարացնելուն։ Այս նպատակադրութեամբ գրուած երկը, ի հարկէ, չահում է գիտական-մանալոգականում, բայց մի որոշ չափով կորցնում ուսուցողականից։ Բազմալին, անշուշտ, այս երկու արժէքների միազուստումն է, որին կարող է հասնել Ս. Սարինեանը, էթէ ավագայում՝ վիճելով Օշականի հետ՝ միաժամանակ կարողանալ գտնել այն դիւալին զօրեղութեան զաղտեղքը, որ սխալաշատ ու երբեք Օշականին զարմնում է հայ գրականութեան մեծագոյն քննադատը։ Եւ էթէ դա արուած լինէր ժամանակին, ոչին աշխատութեան վեցերորդ գլուխը (որ նուիրուած է անգղիական Դուրեանին) կը լինէր նոյնքան փայլուն, որքան յաջորդ գլուխը, որտեղ քննարկում են 1870-80ական թուականների հայ գրականութեան հարցերը։

Պ. ՍԵՒԱԿ

(«Նրկեր», Ե. հատար, էջ 312-313)

digitised by A.R.A.R.®



ԱՂԱԿՈՒԹՅԱՅԻՆ
ԼՍԼՐԵՐ

ԺԱՆ - ՓԻԵՐ ՌԻՇԱՐԴՈՅԻ
«ՀԱՅ ԱՄԷՆ ԳՆՈՎ» ԳԻՐՔԸ

Յրանալի հրապարակադիր Ժան-Փիլիպ Բիլլարատ հայ ժողովուրդին և անոր արգար յառին մտքին խոսելու առիթը կ'ընծայէ ժամանակը Փրանսական մայրիկն, զի այն ամեն զնով խորապիտի իր պիւրիտ հրատարակութիւնն առջին:


Հայ երիտասարդներու ուսման պահանջատիրութիւնն ներշնչուած է Բիլլարատի այս գործը, որ միաժամանակ կը ներկայացնէ թէ՛ հայ ժողովուրդին վիճակուած իրաւաբեւեռը և թէ Յրանալի հայերուն ապրած ազգային ոգրերգութիւնը՝ Քուրդիայ գործադրած Հայաստանութեան և արապութեան հետեւանքով:

Յրանալիան զինքնիւր շարաթաթերը վերջնապէս գրախոսական ժը նուիրած է զայն ամեն զնով չափով, լիւրեւի, որ Յրանալի մէջ թէ այլուր պատահած պահանջատիրական հաստա արաքներու հաին պէտք է անհնել նաեւ Հայրենի հողին բրտարին պահուած հայ ժողովուրդին ոգրերգութիւնը, որ լաւ ժը երիտասարդ Հայրդիւնը կը մղէ յուսանալիան պոթիւմներու:

Ժան-Փիլիպ Բիլլարատ քաջամեծք կ'ընէր ո՛ր միայն հայ ժողովուրդի պատմութեան, այլեւ՝ արապական մեր գաղութներուն պարզած վիճակին: Անոր դիրքը յատուկ կարեւորութեամբ կը քննէ Փրանսական հայերու, յատկապէս երիտասարդներուն ընդհանուր հոգեվիճակը՝ Քիլիկիանի գաղութարութեան ընթացքին գրախոսական արաքներով ծննդեան մեկնելով: Այս իմաստով՝ խոսուած է վկայութիւնը հեղինակին հայ գրապարտիւններին մէկուն, որուն հետեւեալ հաստատումէն տեսուած է ամբողջ հասարակ խորագիրը և գաղափարական պատգամը:— ՀԱՅ Կ'ՈՒՂՈՒՄ Կ'ԱՅՈՒՄ, ի՞նչ զնով այլ ըլլալ այդ մէկը: Ես պատրաստ եմ տալու ամեն բան, արդեալ վերածնել Հայաստանը:

Հասարակ առանձին գլուխով ժը անդրադարձած է նաեւ Խորհրդային Հայաստանի կայսութեան և հայ ժողովուրդին պարտադրուած ամբողջատիրական կարգերուն: Նկատի ունի նաեւ Փարսեան հաններու պարագայով ներկայացող հարկական աշխարհութիւնը՝ Խորհրդային կաշիւագումաներուն դէմ:

Բիլլարատի հասարակ գաղափարական պատգամը աւելի կը լիւրտի հեղինակին հետեւեալ հաստատումին մէջը. շեքէ աշխարհ գոյել չէ քա-



ռայականութիւն եւ երէ շարքարտիւն քաղ դեռ չէ կորսնցուցած իր իմաստը, այդ պարագային հայերը անպայման պէտք է վերագտնեն իրենց հայրենիքը:

ՅԵՏԵՐԻՔՕ ՅԵԼԼԻՆԻԻ
ՆՈՐ ՀԱՐԺԱՆԿԱՐԸ

Անցեալ տարուան Վենետիկի շարժապատկերի փառատօնին ներկայացուած ֆետերիքօ Ֆելլինիի «ԵՍ ԵՍԷՐ ԲԱՆԵՐ ԶԱՐԺԱՆԿԱՐԸ ԱՅՈՒՄ ԵՐԵՐԱՆ ԿԸ ԶՈՒՅԱԳՐԱՆԻ ԼՈՒՍՈՆԻ ՄԷՋ, ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, ՈՐ ՎՍԱՔԻՐԻԲՈՅԻ ԵՒ ՎԻՈՒՄԱՅԻ ՊԷՍ ԱՅՈՒՄ ԶԱՐԺԱՆԿԱՐԸ ԵՍ ԲԱՐՃԱԹԻՒ ՀԱՐԿԱՆՆԵՐ ԿԸ ՍՈՒՂԵՆ ԿԱՆԴԻՍԱՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՔԵՆԱԳԱՆՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ, ՖԵԼԼԻՆԻ ՀԱՐԿԱՊՐՈՅԻ ժը ընթացքին տուած է հետեւեալ գրապարտութիւնները, որոնք հետաքրքրական են արուեստի իր ըմբռնութեանը ընկալելու համար:

Ֆելլինի կ'ըսէ.

«Ինչպաշարը, զոր գրած եմ Փռնիօ կերպային երև, կը մերկայացնէ քաղ ճեւի մօր ոգիական մը: Հիմնական տիպարը ծովմ է, առաւել՝ մօւր, որ շրջապատյոյ յլած իտալական պերճամու մըմ է: Ճամբորդները մերկայացուցիւնք եմ աշուտօտի, հազախանաւորան, գրականութեան եւ մամուլի: Գլխաւոր տնտեսաբանը քաղաքից

մըն է, որ միաժամանակ պատմագիտ է եւ հեղինակ։
 քաւ գլխաւոր գերակատարներէն մէկը։

«Եւ նաեւ թարգմանչի ծառայութիւն մը, սկսած 1914ին, Առաջին Աշխարհամարտի ապագիտութիւնի գիշերը։ Ժամանորդները տարբեր երկրներէ եկած տարբեր տիպարներ են։ Խորհեցայ, որ աւելի լաւ է անգլիացի մը ունենայ՝ անգլիացիին դերը խաղալու համար, քրտմտացի մը՝ քրտմտացիին, եւսայլմ։ Ուզեցի այս-տապակամ գլխէն ունենալ եւսեղծի, որ շարժանկարը յանձնայ հեռու տեղերի մը սրբնութեամբ։ Անուանեմ ուզեցի փորձել։

«Ուզեցի քսեղծել հին յաւանկարներու տղաւարտութիւնը, այն զգացումը, որ տեսնուածներէն այնքա մնացած է — անտեսութեամբ մտադր լուսամբէ կարմիր, որոնց մասին միակ ծանօթ բանը այն է, որ մեռած են։

«...Այս շարժանկարներն մէկ կամ շատ մը տնտեսաբաններ, որոնք երբեք չեն բացատրուիր։ Անոնք միշտ հան են՝ պատկերի հոսիմ կամ առաջ, բայց ճշգի բան մը չեն բեր ամանց մտքին։ Անոնք պարզապէս հոն են։

«Առաջնորդող 107 տիպարներ կամ այնքա, բայց ամանց մեծ մասին պատմութիւնը չի պատմուի։ Անոնք մեծ մասին մերկայութիւնը մէկ նպատակի կը ծառայէ։ Կը մտնէ հանգիստտեսը ետքեկուէ՝ քիչ է ան, ի՞նչ գեր ունի այս պատմութեան մէկ։ Անուշտ այս է, որ կը պատկերի իրականութիւնը ժամանակակից բանին։ Բայց միշտ այդ անտեսութեամբ մտադրներն են, որոնք հետաքրքրութիւն են տեղեկութիւններ կը ստեղծեն։

«Ետեւ չես կրնար գիտնալ, քէ միշտ ինչ կը պատահի պատմութեան մէջ... Օրինակ, երբեք ալ չես գիտնար, քէ թուր իսկապէս ընկզմա՞ծ է — միայն ծեր քաջակիցը այդպէս կ'ըսէ։ Եւս անտ փրկութեան մատակի մը մէջ ան կը ծփայ անգիտելիքի մը ընկերակցութեամբ։ Բայց իսկապէս՝ մեծ բան պատահած է։ Նոյնիսկ քաջակիցին այս պատմութիւնը մերկայացնելու ճիշդ կտակած է՝ անտեսեցնել։ Անոր արտասանած իրաւանշիւր բառը անկարելի կը թուի։

«Երբ ինձի հարցնէք, քէ ինչու այս ժողովուրդն մէկ բարձր ծովաբան վրայ անգիտելիք մը կայ, պէտք է ճշգի պատմութեան, որ բոլոր մտաւորականները վստահեցուցած են, քէ միշտ անգիտելիք մը կ'ըլլայ մասերուն վրայ՝ մեծ շրջապատութիւններուն պարագային։ Անկեղծօրէն՝ ո՛ր, եւ չեմ կարնար պատահելով մեծ անպատեմի մը կամ այնպիսի ինչուներու։ Վերջապէս, անկեղծակ մը անպատեմ բացատրութիւններ տալու պէտք մը անգիտելիքի մը տեսայ տպուի, մտաւոր վրայ։ Ձեռն ազդեր, որ իմ տեղեկութեան վրային ընդհատութեամբ, վիպապաշտ կամ անգիտելիքով պատմութեան գրեթէ անկեղծ տիպար մը։

ՀԱՅԻՊՈՒՄ ԵՐԻՏԱԱՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐՈՒ ՀԵՏ

Համագաղտին Պէյրութի մասնաճիւղի գրական յանձնարարին տարածած հոսիմ, 8 Յունուար 1984ին, մասնաճիւղի ակումբին մէջ տեղի ունեցաւ գրական ցերեկոյթ մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին երիտասարդ քառասունչոններ էլ Սարգիս, Սարգիս Կիրակոսեան, Յարութիւն Պէրպէրեան եւ Պետրոս Հերեան։

Վարչութեան անունով, բարի գալուստի խոսքը կատարեց Հայկ Թրչեան, շնորհակալ, թէ Լիւթանի Ներկայ պայմաններուն տակ՝ աւելի քան կենսական է ճշդ խնդրելու, որ մասնակցակից մեր գրականութեան հաղորդակից դառնայ, գրական աստիճաններու կազմակերպումով։

Օրակա թանաքներուն ծանօթացումը կատարեց եւ հարցադրող վարիչ յանձնարարին անդամներին Պաշիկ Տէր Լուկասեան։

Առաջին հերթին, գրողները ընթերցումներ կատարեցին իրենց գործերէն, նախաձեռնած մը փոխանցելով ներկաներուն։ Այսու, պատասխանելով զրուցողներին կողմէ ուղղուած հարցումներուն, ընտրութեան իրենց ապրումներուն արտայայտութիւնը եղող թեմաներ, լեւաւոր, թէ ընթերցանած կտորները լուսադրուէ՞ն կ'արտայայտեն տարբեր մասնակցներու եւ պայմաններու մէջ գրուած զգացումներ։

Զրուցին մասնակցող քառասունչոններու խօսքին հաջ, ներկաներուն առիթ արեւելաւ հարցումներ ուղղուէ եւ մեկնաբանութիւններ ուղարկուէ գրողներին։ Ընդհանուր ապարուրելու հոգաւ ան, որ մեր հոր գրողները ճիշդ չեն իմացիք իրար զարմ գալու գաղափարներին ու, արտայայտելու զանազան մեկերու փոփոխութիւն (ան-պատկերներ-չարախառնութիւն, եւսյն...) կը փորձեն հոր ընթացք եւ ուղղութիւն տալ մասնակցակից մեր քառասունչոններին։

«ԹՈՒՐԿԵՐՈՒ ԵՒ ՄՈՆԿՈՒՆԵՐՈՒ ԿՐՕՆՔԸ» ԵՒ ԱՅԼ ՀԱՏՈՐՆԵՐ

Այս տարիւրընէ տալին անհանգիստ, մէկէ աւելի հաշակաւոր ֆրանսական հրատարակչատուններ լոյս տեսած իւրաքանչիւր եւ Արեւել-Արեւմուտք յարաբերութեան այս կամ այն մասնակցութեան նուիրուած հատորներ։

Մասնին մէջ լոյս տեսած կարճ լուր՝ մը կ'իմանանք, որ ֆրանսական գիտմտութեան հրատարակչատունը հրատարակ իշխուցած է Ֆրիւիք Սիւսթի «Միւսին պատկերներ — Արեւմուտքի պատմութիւնը միջին դարուն եւ իր կեցութեան» իւլանտիւն հանգիտք անուն հատորը, որ կը զբաղեցնէ իւրաքանչիւր նկատման Արեւմուտքի որդիներէ կեցութեան հոգիներու փոփոխութեան հոգի վրայ՝ եօթնհարից գաղան միջին մեր օրերը։

Իւրաքանչիւր իրեն հրեւք եւ գաղափար-թուրին ուսումնասիրած իրենց հատորին զու-



զանա, եոյն օրերուն, ՎՕպէն Հրատարակատու-նէն լոյս տեսած է Ֆրանսացի Հանրաճանաթ Բա-նասէր Քլոտ Գաւնի ՎԱրիւնիքն ու Արեւմտեղը՝ խաչակիրներու արշաւանքներու ժամանակաշրջա-նին գիրքը: Եր եւր լոյս տեսնելէ Արեւելք-Արեւմուտք յարաբերութեանց վրայ՝ քաղաքակրթու-թեան, ընկերային, ժողովրդային, քաղաքական, գրեւորական, տնտեսական եւ այլ մարզերու մէջ:

Վերոյիշեալ երկէն ներս, ահա, ինչպէս կը յայտնեն մամուլին մէջ լոյս տեսած աղբյուրաբան-ները, ամենէն հետաքրքրական գործը կը հանդի-սանայ Ժան-Փոլ Բուի ՎԵՐԱՐԵՆԵՐԱԸ եւ ՎԱՅԻՆԻՆԵ-րԱԸ կրօնքը խորագրեալ հատորը:

Լուսինի զարդի դասախոս, Ճրանաական Գի-տական Առումնասիրութեան Ազգային Կեդրոնի տնօրէն եւ Փարիզի Համալսարանի Թրքական Աւ-տոմատիքութեանց Հիմնարկի անդամ Ֆրանսացի բանասէր Ժան-Փոլ Բուի այս գործը կը թաղկա-նայ վեց դրոյիներէ, 320 էջերու վրայ, եւ ու-րուն շահեկանութիւնը կը կայանայ այն իրողու-թեան մէջ, որ Ֆրանսացի ժողովրդին մը առաւ-ջին անգամ ըլլալով մանրագրին ուսումնասիրու-թեան կ'ենթարկէ Թուրքերու եւ մոնղոլներու հա-խախտական կրօնքին հոգեմէնը՝ բացայայտե-լով անոր այլամեթ գիմագիծը, ցեղապաշտ անդ-րադարձը անոնց առօրեայ կեանքին եւ ընկերային յարաբերութեանց վրայ, ինչպէս նաեւ տեսնելի զարմանալի թուրքերու եւ մոնղոլներու վայրազ ու կոյր աշխարհայեցողքը:

Արարատառ մամուլին մէջ ապուած լրատուու-թեան մը համաձայն, այս հատորը օգտակար աղ-բիւր մըն է արար բանասէրներուն եւ պատմագիր-ներուն համար՝ 400 տարի տեսած Թրքական օս-մանկանմանկութեան գերութեան նպատակներն ու հոգեմէնը լուսաւոյնս հասկնալու համար:

ՊՈՍԹԸՆԻ ՎԵՅ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

ԴԱՍԱՐԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մ. Նահանգներու մէջ վերջերս կազմուած է Հայկական արուեստի եւ հարտարապետութեան տարածման հեամատու յանձնախումբ մը, որ կը թաղկանայ 48 անդամներէ եւ որուն մաս կը կազ-մեն, Համալսարանական դասախոսներու կողքին, Քալիֆորնիոյ հանձնապետ Ճորճ Տէօֆէնեան, Հրատարակադիր Մայքըլ Արլեն եւ փոքր. Բի-յըրա Յովհաննէսեան:

Յանձնախումբը Հրատարակելու է Պոսթը-նի վեց Համալսարաններուն մէջ Հայկական ար-ւեստի զտարնթացք Հաստատելու Ժրտգրով մը, որուն իրականացման համար ձեռնարկած է քա-րոջական արշաւի եւ Հանդիմանութեան:

Թագք Համալսարանը Համաձայն պահուած է նման դատընթացք մը Հաստատելու Ժրտգրին, պայմանաւ, որ դոյապուի անոր ելեւմուտքը՝ Հինգ տարուան համար ընդհանուր կելեմուտքը կը նա-խատեսուի 200 հազար տուր, տարեկան՝ ճառա-սուն հազար, եթէ առաջին տարուան ելեւմուտքը զոյապուի, 1984-1985 տարեշրջանին իսկ կարելի պիտի ըլլայ Հաստատել դատընթացքը:

Դատընթացքը պիտի ունենայ մէկ դասախոս, որ յաջորդաբար պիտի դասախոսէ վեց Համալսա-րաններուն մէջ: Պիտի պատրաստուին յատուկ դասաւերջեւ եւ դասանիթեր, որոնք պիտի ըս-լաքեն Հայ Ժողովուրդին քաղաքակրթութիւնը եւ անոր ազդեցութիւնը Արեւմուտքէ վրայ:

ՄԱՀ՝ ՄԵՍՐՈՊ ԳՈՒՅՈՐԴՃԵԱՆԻ

Այս տարեկիցքին, Գաւիլի մէջ մահացած է ժողովրդական եւ յայտնի բառարանագէտ Մե-սրոպ Գույումճեան, հեղինակ՝ Հայերէն-անգլի-քէն եւ Անգլիքէն-Հայերէն բառարաններուն:

Մեսրոպ Գույումճեան ծնած էր 1897ին, Գե-տարիա: Նախնական եւ երկրորդական ուսումը ստացած է Արզնոյ եւ զերմանական վարժարան-ներուն մէջ, ապա՝ անցած Պոլիս, ուր 1915ին ըն-կազմուած է Սպարից վարժարան, որուն ուսումնա-նական լընանը աւարտելէ հաջորդեալ տարեա-սին ճակատը: Ձինաղապարէն հաջ, վերագա-ր-ձած է Պոլիս, ուր մահացած է մինչեւ 1922:

Այդ օրերուն, Պոլսոյ մէջ, Միտաք Թորա-ճեան աւարեկեց Բացուի Հայութեան դահլիճը՝ Ձի-վանիւր Բէհրուի Խանը: Գույումճեանի ճեղքերուն

շնորհիւ ազատ արձակուելի հաջ, Քորլաքեան
կը յաջողի անցնել Թուրքիոյ Բալթիկ ծովափը
Քուրթեքը կ'որոշեն սպաննել Գուլամեանը, որ
պարտադրաբար կրցած էր հետանալ Պոլսէն եւ
հաստատուել Եգիպտոս, ուր ապրեցաւ եւ գոր-
ծեմ մինչեւ իր կեանքի վերջին րոպէն:

ՄԱՀ՝ ՆՈՐԱՅՐ ԱՏԵՓԱՆԵԱՆԻ

Ռաբաթ, 23 Մարտ 1994ին, արտի ազնայի
մը հետեւեալով, Նիւ Յորքի մէջ ժամացած է
հանրային գործիչ եւ գրականագետ Նորայր Ստե-
փանեան, որուն լինած մարտինը հողին յանձնը-
ւած է յաջորդ յարաթ, 28 Մարտին, Արեւելեան
Ամերիկայի եւ Փանտաայի Առաջնորդ Մեքսիկոյ
արք. Ալեքանդր Կաթարճեանի մահով:

Յուզարկաւորութեան եւ թաղման արարողու-
թեան ներկայ գտնուած են Նիւ Յորքի Լ. Յ. Գալ-
նապետեան կազմի ընկերներ, Իրանահայ Միու-
թեան անդամներ եւ բարեկամներ:

Նորայր Ստեփանեան ծնած էր 1920ին, Մու-
սուսիս (Քաւրիզ): Զաւակն էր Արմենիոյ
վարժարանի վաստակաւոր տեսուչ Միքայէլ Ստե-
փանեանի: Ան իր նախնական կրթութիւնը ստա-
ցած էր Երեւանի Հայկազան-Փամբակեան եւ ա-
մերիկեան վարժարաններուն մէջ:

Հաղիւ Չոսեանի երիտասարդ՝ առ փոխադրու-
ած է Քեմերա եւ գործած ժամանակցութիւն ընդած
Մշակութային Միութեան կազմութեան մէջ, որ
հետագային պիտի վերածուէր Արարատ Մարմա-
կրթական եւ Մշակութային մեծ կազմակերպու-
թեան:

Իրեւն նախագահ կազմութեան մէջ եղող Ա-
րարատ միութեան՝ 1947-49 տարիներուն հետեւա-
որէն վարած է զանի: Միաժամանակ Հրատարա-
կան է զերեւել օր ծովափնայն հատորիկը, ապա՝
«Երեւանի կեանքի» անուն գործը եւ մեծ
ժողովրդականութիւն վայելող արարույններ:

1950ին հաստատուած է Մ. Նաւանդեան եւ, իր
առնչութեամբ գործերուն զուգահեռ՝ աշխատու-
ցած է Հայրենակց արաթերթին եւ փոխադրու-
ած մամուլին:

Նորայր Ստեփանեան եղած է հիմնադիրը Նիւ
Եորքի Իրանահայ Միութեան եւ շուրջ քառորդ
զար վարած անոր նախագահութիւնը:

«ՄՈՒՍԱ ՏԱՂԻ ՔԱՆԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ» ԺԱՊԱՆԷՆԸ՝ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

«Մուսա տաղի քաւասում օրերը» ժապանի
ցուցադրութիւնը իրականութիւն դարձաւ: Վն-
պաւան արդիւնաւոր չլինած մը ընդունելի հաջ, ժա-



պաւէնը վերջապէս ցուցադրուելու հանգալիքը ըս-
տացաւ: Ծովափնային պատկան իշխանութեանց
կողմէ:

Աւստրիացի հռչակաւոր դրաղէա մըանց վեր-
Ֆէլէ յիշեալ դերը իրեւն աղբիւր օգտագործած
այս ժապանիին բեմադրող պատարաստած է Արեւ-
սան Յակոբեան, բեմադրիչն է Մարգիտ Մուրա-
նան, երաժշտութիւնը յարեան է Զաւր Մանուկ-
Նազան, իսկ հիւրանշանաւոր իրադրութեան է Կրե-
կորի Մանուր: Գլխաւոր դերերով ելոյթ ունեցած
են Քապիթ Պենտի, Ռոնի Քարուլ, Կալ Միքայէլ,
Փիթըր Հասթըլ, Մայլը Դոնաւանդիլ, Մորիս Շե-
պանի եւ Մանուէլ Քեհէան, իսկ երկրորդական
եւ երրորդական դերերով՝ Լադմարիտայ զերե-
սաններ:

...ԵՒ ՀԱՄԱՆՈՒՆ ՕՓԵՐԱՆ

«Մուսա տաղի քաւասում օրերը» օգիւթային վե-
րածած է լինի երգչուհի Նոզէֆ Մաթէլ, որ ժե-
նապէս աղղուած է Վերֆէյի վեպին, ուսումնասի-
րած է Հայաստանի պատմութիւնը, ծանօթացած
է Հայ քանահիւսութեան եւ այնչեղած՝ այն թալուր
վայելիչ, ուր տեղի ունեցած են վեպին գործու-
ղութիւնները:

Իր կրած տպաւորութիւններն ու ունեցած տպ-
ւորւմները զինք մղած են նաեւ յորինելու երգչու-

րու շարք մը՝ զՓշտտ երկինքն, գրուած շնորհիւն
և զերմաներէն թագիրներու հիման վրայ, իսկ
իւր ստամոքսաբորբիւններուն շնորհիւ՝ Մաթէյ
ձայնափութն մեկնարանած է աւելի քան 150
հայկական երգեր:

Յրանքիէն Գաֆգայի եւ Եսայիայ Կրուչի-
ժայի խօսքերով գրուած նոր օգերան թմադրե-
լու ուղղութեամբ արգէն իսկ հետաքրքրած են
նաև Երեքի Վլադաշ հաստատութիւնն ու Վեր-
լիբուտ երաժշտանոցը:

ՍԱՐՈՅԵԱՆԻ «ՄԱՐԴԱՅԻՆ» ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ ԲԵՄԻ ՎՐԱՅ

Նախորդ ամիսներուն Ռիլերմ Սարոյեանի
«Մարդկային կատակերգութիւնը» ներկայացուե-
ցաւ ժողովք Փափի Հանրային Թատրոնին մէջ
(Մանհատըն):

Հետաքրքրականը այն էր սակայն, որ 1943ին
լոյս տեսած Սարոյեանի սոյն վէպը վերածուած
էր «օգերային»: Գործը կը բաղկանայ երաժշտա-
կան 94 անկտու հատրիներէ, զորս յորինած է Կալթ
Մաք-Տըրմոթ:

Հակառակ անոր, որ Մաքսիկներու ընտանիքն
է կեդրոնը երաժշտախաղին, թմադրէլ Ռիլֆրիտ
Լիլի պատկերացուցած մեծին մէջ, բնական վրայ
կ'երևի մեն երգչախումբ մը, որ կը ներկայա-
ցընէ իթաքան ներկայացուող զանազան խաւերը —
ուսանողներ, քաղաքացիներ, պիսուսներ, եւայն,
որոնցմէ ներկայացուցիչներ կու գան զանազան
բաժիններ երգելու:

Ըստ Վօլայն շաքաթաբերթի գեղարուեստա-
կան փնտրում Մայքըլ Ուսլըի՝ յօրինող Մաք-
Տըրմոթի պորզ եւ ուղղակի ոճը, որ խառնուրդ
մըն է ճաշի, կեդրեցական եւ ռոմ երաժշտու-
թեան՝ կը յորմորի Սարոյեանի մթնոլորտին եւ
արժէքներուն, որոնք հիմնուած են քաջութեան,



Հայրենասիրութեան եւ քնտանեկան սիրոյ վրայ,
սակայն որոշ պատշտանցումներ համապատասխան
շեն երկի գեղարուեստական մակարդակին:

Ամէն պարագայի, երկուքուկէս ժամ տևող
Սարոյեանի «Մարդկային կատակերգութիւնը»,
հակառակ սուանդական արժէքներու չեփորահա-
րուսին, կը յաջողի սքող նստալոյսիս ստեղծել
40ական թուականներու մթնոլորտին նկատմամբ,
եւ երբեմն նոյնիսկ հակառակդապաշտ շնչու
կ'առնէ:



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Մ. Ի Շ Խ Ա Ն

ԻՍ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՍ

(Ցուշեր և տպատրութիւններ)

- ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ
- ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԿՈՆՑ
- ՆԻԿՈՂ ԱՂԲԱԼԵԱՆ
- ԼԵՒՈՆ ՇԱՆԹ
- ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ
- ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ
- ՎԱՀԱՆ ԹԵՔԷՆԱՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՈՍՊՆԵԱԿ

(ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

ԼԻԲԱՆԱՆ

Հատալաճառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատալաճառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՄԱՀԽԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِين
مجلة شهرية ، أدبية وفنية علمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قرانجيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
ԲԱԿԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
ՎԱՉԷ ԲԲՈՒՏԵԱՆ
B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898